

ԴԵՎԻԼԻ ՄԱՐԶԱՏ  
ԼԱՆԳ

ՔՐԻՍՏՈՆԵՐ ԶԵՄԱՆ  
ՈՒՌՔԸՐ

# ՀԱՅՈՒԹ

9(47.928)

L-18

ԴԵՎԻՆԻ ՄԱՐԶԱ  
ԼԱՆԳ

ՔՐԻՍՏՈՆԵՐ ԶԵՅՍ  
ՈՒՂՈԲԸ

# ՀԱՅՈՒԹ

3214

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱԿՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ

1892

Անգլերենից թարգմանեց Զ. Լ. Թորոսյանը  
Խմբագիր՝ Կ. Ս. Խուրավյանը

### ՀԱՆԳ Դ. Ս., ՈՒՂԵԾՐ Բ. Զ.

L 181 ՀԱՅԵՐԸ: [Հայ ժողովոյի պատմություն / [խմբ.] Կ. Ս. Խուրավյան; Խմբ. Անգլ. թարգմ. Զ. Լ. Թորոսյան. — Լր.: Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբ. 1992, 86 էջ:]

Այսպիսի հայագեղ պատմաբաններ Դեյվիդ Ս. Լանգի և Քրիստոֆեր Զ. Ուոքի ներկա աշխատությունը, որը երանց գեկուցագիրն է Մեծ Քրիտանիայի «Փոքրամասնությունների իրավունքների խմբին», ընդհանուր գծերով լուսաբանում է հայ ժողովոյի բազմադարյան պատմությունը, երա ավանդը համամարդկային քաղաքակրթության մեջ, հայերի կրոծ տառապանքները Օսմանյան և Ռուսական կայսրությունների տիրապետության տակ, Մեծ Եղեռնն ու հաջորդած ծանր տարիները, հայ սփյուռք առաջացումն ու ներկա վիճակը, բազմաշարժար Հայկական հարցի նոր արձարությունը:

Ուշագրավ է նաև Բ. Ուոքըի սովոր գրքում գետեղված ընդարձակ հոդվածը, որտեղ դրսւորվում են հեղինակի դատողությունները հայ ազգային-ազատագրական շարժման նոր փուլի (1990-ական թվ.) վերաբերյալ:

L 0503020913 Հայտարարված ԳՄԴ 63.3 (2L)  
706 (01) 1992

ISBN 5-89700-006-9

© Հայկական հանրագիտարանի  
գլխավոր խմբագրություն

### ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

1976 թ. Լոնդոնում հրատարակվեց անգլիական գիտնականներ, Լոնդոնի համալսարանի պրոֆեսորներ Դեյվիդ Ս. Լանգի և Քրիստոֆեր Զ. Ուոքըի «Հայերը» գրքովկը՝ գեկուցագիր, որը ներկայացված էր Մեծ Բրիտանիայի «Փոքրամասնությունների իրավունքների խմբին» (ՓԻՒ)՝ մի հասարակական կազմակերպության, որը զբաղվում է ազգային փոքրամասնությունների ուսումնասիրման և երանց իրավունքների պաշտպանության խնդրով։ Ազհրամեցած է նշան, որ 1950—60-ական թթ. եվրոպական երկրների գիտության մեջ նկատվեց ազգային փոքրամասնությունների բազմակողմանի խնդրի և ընդհանրապես ազգային հարցի նկատմամբ հետաքրքրության աճ, որ պայմանավորված էր մի շարք հանգամանցներով։ Ազգային-ազատագրական շարժման վերելքը երկրորդ աշխարհամարտից հետո, նախկին գաղութների փոխարեն զգալի թվով ինցնուրույն պետությունների առաջացումը ստեղծեցին մի այնպիսի իրադրություն, երբ նորաստեղծ շատ պետություններում նախկին մետրոպոլիաների ներկայացուցիչները հայտնվեցին ազգային փոքրամասնությունների վիճակում (անգլիացիները՝ Հնդկաստանում, Ֆրանսիացիները՝ Ալժիրում ևն)։ Մյուս կողմից՝ մի շարք եվրոպական երկրների հետպատերազմյան տնօւնական գարգացման առանձնահատկությունները առաջ բերեցին բանվորական ուժի զգալի նեպի դեպի այդ երկրները՝ այլ, գերազանցապես թույլ զարգացած երկրներից (թուրքերը, հարավսկավացիները՝ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում, Աֆրիկայի մի շարք երկրների բնակչիչները՝ Ֆրանսիայում և այլն)։ Միգրացիոն այդ գործընթացները հանգեցրին եվրոպական երկրների բնակչության ընդհանուր կառուցվածքում օտար խմբերի աճին և դրա հետ մեկտեղ՝ նորանոր քաղաքական, տնօւնական, մշակութային, հոգեբանական, բարոյական խնդիրների առաջացմանը։ Եվրոպական երկրների հասարակական շրջաններում այս խնդիրները առաջ բերեցին ծայրակետերի տարրերությամբ բնորոշվող վերաբերմունք։ Մի կողմից՝ առաջարկվում էր ամեն կերպ խոչընդոտել օտար բնակչության ներգաղթին, իսկ մյուս կողմից՝ շանքեր էին գործադրվում բնակչության այդ խմբերի համար կյանքի ու աշխատանքի տանելի պայմանների ստեղծ-

ման, նրանց ազգային-մշակութային պահանջմունքների բավարարման ուղղությամբ: Նույն այս հոդի վրա աշխուժացավ տարբեր իրավապահապան կազմակերպությունների գործունեությունը, անեց պատմաբանների, ազգագրագետների, սոցիոլոգների հետաքրքրությունը ազգային փոքրամասնությունների կյանքի ու գարգացման խնդիրների նկատմամբ: Այս կապակցությամբ հետաքրքրությունը մեծացավ հատկապես հայերի նկատմամբ, որոնք, ինչպես հայտնի է, արդեն ունեն աշխարհի բազմաթիվ երկրներում ապրելու հարուստ փորձ՝ պահպանելով հանդերձ իրենց ազգային ինքնատիպությունը:

Սակայն հետաքրքրությունը հայերի, նրանց պատմության և մշակութի նկատմամբ պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ հենց այդ նույն ժամանակ միջազգային հասարակայնության ուշադրությունը վերստին հրավիրվեց Հայկական հարցի վրա: Սիյուռքահայության մասնակցությունը ֆաշիզմի դեմ մղված պայքարին երկրորդ աշխարհամարտի տարիներին, զանգվածային հայրենադարձության իրագործումը 1946—47 թթ., Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումը և սիյուռքահայ շըրջանների փորձերը վերաբացել Հայկական հարցը այդ միջազգային կազմակերպության շրջանակներում, Հայկական համաշխարհային կոնֆերանսի գումարումը (Եյու Յորք, 1947), Հայ առաքելական եկեղեցու ջանքերը՝ այս ամենը նպաստեց Հայկական հարցի վերարձարձմանը: Սիյուռքահայ տարբեր կազմակերպությունների դիմում էին աշխարհի պետությունների կառավարություններին, միջազգային կազմակերպություններին՝ խնդրելով նպաստել պատմական արդարության վերականգնմանը: Հանուն Հայկական հարցի վերաբացման շարժումը էլ ավելի մեծ թափ ստացավ հետագա տարիներին, մանավանդ 1965 թ. հետո, երբ ամբողջ աշխարհի հայերը լայնորեն նշեցին Սեծ եղենի 50-ամյակը: Վճռականորեն տրամադրված սիյուռքահայ երիտասարդության մի մասն էլ, գգտելով միջազգային հասարակայնության ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի լուծման անհրաժեշտության վրա, դիմեց ծայրահետ միջոցների՝ հարգելի աշխարհական գործողությունների: Հայ ժողովուրդը վերստին պարզորդ հայտարարեց իր պահանջատիրական իրավունքների մասին: Ահա նման պայմաններում լույս աշխարհ եկավ Դ. Լանգի և թ. Ուոքըրի ներկա աշխատությունը՝ մեր ժամանակների եվրոպական հեղինակների հայ ժողովորդին նվիրված առաջին գործերից մեկը: Անգլիացի հեղինակները հետապնդել են պարզ, բայց և դժվար իրավունքի խնդիր. փոքրածավալ երկի սահմաններում ներկայացնել հայ ժողովորդին, նրա բազմադարյան պատմությունը, ավանդը համամարդկային քաղաքակրթության զարգացման մեջ, հայերի կրած տառապաները, նրանց այժմյան կացությունը: Հայ ընթերցողը, անշուշտ, կնկատի, որ շատ դեպքերում հեղինակները գգտել են պարզեցնել շարադրվող նյութը, այն մատչելի դարձնել նույնիսկ անտեղյակ ընթերցողներին:

Տեղ-տեղ նկատելի են որոշ անճշտություններ: Սակայն այս ամենով հանդերձ նույն հայ ընթերցողը կհամոզվի, որ հեղինակներին հաջողվել է հասնել իրենց առջև դրված նպատակին և աշխատությունը, որը գրված է շուրջ 16 տարի առաջ, այսօր էլ կարող է հետաքրքրություն ներկայացնել:

Իր վերաբերմունքը հեղինակների որոշ դրույթների, աշխատությունում բերված փաստերի նկատմամբ խմբագրությունը արտահայտել է տըրպող ծանոթագրություններում:

Խմբագրությունը նպատակահարմար է գտել սույն գրքունիում զետեղել նաև թ. Ուոքըրի «Հայաստանը 90-ական թվականներին, հեռանկարներ և վտանգներ» գեկուցման լրիվ շարադրանքը: Զեկուցումը կարդացվել է 1989-ի նոյեմբերին, Օքսֆորդի համալսարանում, Հայաստանի մամուկում այն հրապարակվել է 1990-ին՝ որոշ կրնատումներով: Զեկուցումը արտացոլում է հայ ազգային-ազատագրական շարժման նոր փուլը, որը սկզբնավորվեց 1988-ի փետրվարյան դեպքերով և իրավացիորեն ընկալվում է որպես Հայկական հարցի ժամանակակից դրսնորումներից մեկը: Զեկուցման հեղինակը իրազեկ է Հայաստանի քաղաքական և տնտեսական վիճակին, նրան հայտնի են Սումգայիթում և հարևան հանրապետության հայրենակ վայրերում կատարված ցեղասպանության դրվագները, նա հիմնավորված երկյուղ է հայտնում դեպքերի հետագա զարգացման վերթյալ: Ընթերցողը հնարավորություն ունի դատելու, թե որքանով է արդարացված հեղինակի մտահոգությունը:

Մի քանի խոսք հեղինակների մասին:

ԴԵՅՎԻՆ Ս. ԼԱՆԳ (1924—1991) անգլիացի հայտնի կովկասագետ և հայագետ է: Երկրորդ աշխարհամարտի վերջում եղել է Մեծ Բրիտանիայի փոխհյուպատոսը Թավրիզում, որտեղ շփվել է հայերի հետ, ծանոթացել նրանց պատմությանը և մշակությունը: Շուտով ծանոթությունը վերանում է գիտական լուրջ հետաքրքրության, Դ. Լանգը սկսում է ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը: Այս նպատակով նա մի քանի անգամ այցելել է Հայաստան, հանդիպել հանրապետության պատմաբանների հետ: 1970-ին լույս տեսավ Դ. Լանգի «Հայաստան. քաղաքակրթության օրրան» մենագրությունը, որը շուտով լարգմանվեց և հրատարակվեց եվրոպական մի շարք երկրներում: Նրա գրչին են պատկանում նաև «Լեռների ժողովուրդները. հինավորց Արարատն ու Կովկասը» (1971, համահեղինակ՝ թ. Բըրնի) և «Հայերը. մի աշխարհայ ժողովուրդ» (1981) աշխատությունները:

ԶՐՒՄԾՈՒԺԵՐ Զ. ՈՒՌԵԾՐԸ (ծնված 1942 թ.) ավարտել է Օքսֆորդի համալսարանը, ապա հիմնովին նվիրվել հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությանը: 1971-ին ճանապարհորդել է Արևմտյան Հայաստանում, ապա այցելել է Երևան: 1980 թ. լույս տեսավ թ. Ուոքըրի «Հայաստան. մի ժողովրդի վերաբորումը» մենագրությունը՝ նվիրված Հայկական հարցի, Մեծ եղենին, հայկական սիյուռքի հիմնախնդիրներին: Նույն աշխատու-

թյունը՝ Էական լրացումներով լուս է տեսել 1991-ին: Նոր հրատարակության մեջ արտացոլված է Հայկական հարցի պատմության արդի փուլը, լուսաբանված են Ղարաբաղյան շարժումը և նրա հետևանքները:

Պրոֆեսորներ Դ. Լանգը և Զ. Ուռչըրը բազմից մասնակցել են կովկասագիտության և հայագիտության հարցերին նվիրված միջազգային գիտաժողովներին, հանդես եկել գեկուցումներով: Սասնավորապես նրանք մասնակցեցին 1990-ի հուլիսին Լոնդոնում կայցած կովկասյան հանրապետությունների պատմությանը նվիրված միջազգային գիտաժողովին, որը գումարվել էր Լոնդոնի համալսարանի Արևելյի և Աֆրիկայի երկրների ուսումնասիրման կենտրոնի հայաձեռնությամբ: Դ. Լանգը, որը ծանոթ հիվանդ էր, երովյա չունեցավ գիտաժողովին, այսօր մենք կարող ենք ասել, որ նա հրաժեշտ էր տալիս իր կովկասագետ գործնկերներին: Զ. Ուռչըրը հանդես եկավ գիտաժողովի նիստերից մեկում: Լինելով մարդու իրավունքների պաշտպանության միջազգային շարժման ճանաչված գործիչ՝ նա իր երովյում հայ-ադրբեջանական միջադեպը որակեց նախ և առաջ որպես մարդու և մի ամրող ժողովրդի իրավունքների ուսնահրում, որն անհանդուրժելի է քաղաքակիրթ աշխարհում:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1895-ից մինչև 1920 թվականները թերթերում՝ լուրերի բաժնում, հանախ էին աչքի զարնում խոշոր վերտառությունները Հայկական հարցի վերաբերյալ: 1894—1896 թվականներին սովորական Արդուկ Համիդի թելադրանքով իրականացված ջարդերը և հետագայում՝ 1915—1918-ին երիտասարդ թուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանությունը այնպիսի սարսափ ազդեցին աշխարհին, որը կարելի է համեմատել միայն Ադրուֆ Հիտլերի՝ հետագայում հրեսների հանդեպ ցուցաբերած դաժանության հետ: Ադրուֆ Հիտլերն ինքը հրապարակորեն հավանություն տվեց հայերի ցեղասպանությանը՝ 1939-ին հրամայելով իր զորքերին արշավել Լեհաստան և լեհերի հետ վարվել այնպես, ինչպես օսմանյան թուրքերը հայերի նկատմամբ վարվեցին 1915-ին: Ֆյուրերը հայտարարեց. «Ես իմ Մահվան ջոկատներին հրամայել եմ անգնորեն և անխնա բնաշնչել լեհախոս ցեղի տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այդ կերպ մենք կկարողանանք մեզ համար ապահովել պահանջված հողային տարածքը: Բացի այդ, ո՞վ է այսօր հիշում հայերի բնաշնչումը»:

1919-ին հայթական դաշնակիցները մեծ խոստումներ տվեցին հայերին՝ հիմնելու մի ազատ և անկախ Հայաստան, որը պիտի բարձրանար նրանց հինավորությունը հայունիքի ավերակների վրա՝ Արևելյան Առատոլիայում և Անդրկովկասում: Նրանց խոստումներից և ոչ մեկը չիրագործվեց: Խըզո՞ւ: Դրա պատճառներից կարելի է նշել հայկական հողերի երեք քառորդում ապրող հայ ժողովրդի ինակատար բնաշնչումը, դաշնակից տերությունների հոգնածությունը պատերազմից, Ամերիկայի՝ պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի հետանալը քաղաքական ասպարեզից, մեկուսացման ամերիկյան քաղաքականության հայթամակը և, վերջապես, 1920-ին քաղաքական երկու «տարագիրների»՝ Թեմալ Աթաթուրքի և Վ. Ի. Լենինի միջև կնքված համաձայնագիրը, որով բնիկ հայկական հողերը բաժանեցին միմյանց միջև՝ խարից դուրս թողնելով Արևմուտքի «իմպերիալիստական» տերություններին:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, մոտավորապես կես դար, Հայկական հարցը հետին պլանի վրա էր: Թուրքական բնմին իշխեց:

գործունյա անհատականություն ունեցող թեմայ Աթարթուրը (մար. 1938): Օտարերկրյա բազմաթիվ դիտորդներ ողջունեցին վերածնվող Թուրքիայի հաջողությունը և ուրախ էին մոռացության տալու անցրակ մռայլ ցեղային գժտությունները: Երկրորդ համաշխարհային պատերազմում Թուրքիան չեղողություն պահպանեց, որի համար Արևմտյան տերությունները խորապես երախտապարտ էին հրաման:

Վրացի Ստալինը իր հայ տեղակալ Ա. Ի. Միկոյանի հետ բավարար վեցին նրանով, որ հայերի համար հիմնեցին մի ազգային օջախ՝ նեղացված սահմաններով Հայկական ԽՍՀ: Վերջին կես դարի ընթացքում խորհրդային կառավարությունը շատ զգուշ է եղել, որպեսի շքաջանքի հայերի վրիժառուական կամ հողային պահանջի հակումները՝ լինի դա խորհրդային Հայաստանում, թե՛ սփյուռքահայ համայնքներում: Այս քաղաքականության մեջ թերևս կարևոր բացառություն է կազմում 1945 թ. Կարսը և Արդահանը միացնելու, իսկ ապա և Իրանական Ադրբեյջանի մեծ մասը և Քրդստանը զավթելու Ստալինի կամպանիան: 1965-ին, երբ հայերը 1915-ի ցեղասպանության հիմնային առյուն երևանում ցույց կազմակերպեցին, խորհրդային ոստիկանությունը ծերբակալեց ցուցարարներից շատերին ու մի քանի ամսով ուղարկեց աշխատանքային ճամբար: 1976 թվականին պր-ն Կոսիգինը<sup>1</sup> կրկին հավաստեց, որ Խորհրդային Սիոնությունը հողային որևէ պահանջ չունի Թուրքիայից:

Նկատի ունենալով Թուրքիայի կարևոր նշանակությունը ՆԱՏՕ-ի և ՍԵՆՏՕ-ի մեջ, պետք է ենթադրել, որ Թուրքիայի «քաղաքանացումը» (այսինքն՝ այդ երկների մասնատումը, կամ նրա հայարձնակ և քրդաբնակ շրջանների տեղային հիմնավարությունը) ձեռք չեն տալիս ԱՍԽ-ին և նրա դաշնակիցներին: Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր Արևմտյան շահերը պահանջում էին, որպեսի Թուրքիայի արևելյան նահանգները մնան դատարկ ու ամայի՝ որպես «քուֆերային գոտի», քան վերաբնակեցված լինեն հայերով, որոնք լավ հարաբերության մեջ կլինեն Հայկական ԽՍՀ-ում ապրող իրենց ազգակիցների հետ:

Թալեաթ փաշան, որն առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայի ներքին գործերի նախարարն էր և 1915-ի ջարդերի գլխավոր կազմակերպիչը, հույս հայտնեց, որ Հայկական հարցի իր լուծումը, եթե ոչ ընդմիշտ, ապա գեյք մի կես դար մոռացության կուռ խընդիրը: Այդ գնահատականը ճիշտ դուռս եկավ: Ստամբուլից դուրս՝ մեկ ու կես միլիոն գրիների սերնդից և ոչ մեկը չի վերաբնակվել արդի Թուրքիայում: Ի հիշատակ Թալեաթի, Անկարայի մայորությներից մեկը այժմ կոչվում է «Թալեաթ փաշա բուզար»: 1915—1918-ի աղետից հետո երկու

<sup>1</sup> Կոսիգին Ալեքսեյ Նիկոլաևիչ (1904—80), ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ 1964—80-ին:

սերունդ պահանջվեց, որպեսզի աշխարհով մեկ ցրված հայությունը բուժեր իր վերքերը և վերագտներ իր ազգային միասնության գիտակցությունը: Վերջին երկու տասնամյակներում աշխարհի շատ երկրներում հայտնի է հայկական ինքնակատարության վերածնունդը: Քաղաքական որոշ անցուղարձեր զայրույթ պատճառեցին այժմ վերապրող հայերին՝ նրանց մեջ արթնացնելով բողոքի և վշտի զգացումը: Այդ դեպքերից կարելի է հիշատակել Ստամբուլի փողոցներում քիչստոնյա փոքրամասնությունների վրա կատարված կանխամտածված ջարդարարական հարձակումները (հատկապես 1955 թ. սեպտեմբերի 6-ին) և կիպրահայերի դեմ 1963 թ. գործադրված թուրքական բոնությունները, որոնք կրկնվեցին 1974 թ. Կիպրոսի գրավման ժամանակ: Ժավով պետք է նշենք, որ նույնպիսի վտանգներ է սպառնում նաև Լիբանանում ապրող հայերին ու նրանց Անթիլիասի կաթողիկոսությանը՝ շարունակվող քաղաքացիական պատերազմի պայմաններում:

• •

Ներկա գեկույցով մենք՝ համահեղինակներս, փորձել ենք այս լուրջ և տակավին չլուծված փոքրամասնության խնդիրը որոշ հեռանկարի մեջ պահել: Մեզանից ոչ մեկը անձնական շահ չի հետապնդում և ոչ էլ որևէ մեկին մեջ հայկական արյուն կամ ընտանեկան կապ կա: Երկուս եւ երկար ճանապարհորդություն ենք կատարել Հայաստանում: Լանգը եղել է թափիզում (Թրանական Ադրբեյջան) 1944-ից մինչև 1946 թվականը և այցելել է Արարատ լեռան ստորոտը իրանական կողմից: 1966 և 1968 թթ. նա շրջագայել է Խորհրդային Հայաստանում: Ուտքը 1971-ին այցելել է Թուրքահայաստան՝ Կան, Աղյամար, Կարս և Անի: Խնչան նաև Խորհրդային Հայաստան: Ողերգական ճակատագիր ունեցող այս փոքրամասնության հարցը շոշափելիս, մենք փորձել ենք խիստ փաստացի, անկանխակալ լինել: Գուցե մեր ընթերցողներից ոմանք մեզ շատ սառնասիրտ հակառն, իսկ մեր թուրք բարեկամները՝ շատ հայասեր:

«Փոքրամասնությունների իրավունքի խմբի» (Փիխ<sup>1</sup>) հրատարակություններում որոշ գեկույցներ վերաբերում են ներկա կամ վերջին տասը տարում կատարված դեպքերին: Մենք հարմար ենք նկատել մեր այս գեկույցում դիմել նաև ավելի հին պատմական անցուղարձերի և վեճերի:

<sup>1</sup> Փիխ—Միջազգային հետազոտությունների և լրատվյան միություն Մեծ Բրիտանիայում, ստեղծվել է 1960-ին և նպաստակ ունի իր հետազոտություններով ու հրապարակումներով համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրել տարբեր երկրներում խորականությունից տուժող ազգային փոքրամասնությունների խնդիրների վրա:

Մասամբ նկատի ունենալով, որ Հայկական հարցի օսմանյան «վերջնական լուծումը» տեղի է ունեցել 60 տարի առաջ և մասամբ էլ նկատի առնելով այն հանգամանքը, որ թուրք քարոզիչները ստեղծել են մտացածին, մեծապես երևակայական տեսություններ՝ ապացուցելու համար, որ թուրքերը (որոնք, ինչպես գիտեք, մի տաս դար առաջ եկել են Կենտրոնական Ասիայից և բնակություն հաստատել ժամանակակից Թուրքիայում) Հայաստանի և Փոքր Ասիայի բնիկ ժողովորդի շառավիղն են, շատերը հավատ են ընծայել թուրքերի այս հայտարարությանը, ուստի մենք հարկ ենք համարում կրկին անդրադարձնալ որոշ փաստերի, որոնք հիմնվում են պատմական և հնագիտական հետազոտությունների վրա:

## Ա Ռ Ա Զ Ի Ն Ս Ա Ս

### ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

#### ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայոց երկիրը, որ պատմության մեջ ճանաչված է որպես Մեծ Հայք, գրադարանում է մի ընդարձակ լեռնային տարածք՝ իր մեջ ներառնելով Արևելյան Անատոլիայի մեծ մասը: Եթե վերցնենք արևմտյան սահմանը, որ Թուրքիայում ընկած է Խարբերդի և Մալաթիայի միջև, և արևելյան սահմանը, որը գտնվում է Իրանական Աղրբեջանի Խոյի և Խորհրդային Ղարաբաղի միջև, ապա ուղղությունը կազմի 450 մղոն<sup>1</sup> տարածություն: Հայաստանի հյուսիսային սահմանը՝ սկսած Արդահանից և Սևանա լճից դեպի հարավ մինչև Բրդստանի հետ ավանդական սահմանը, Կանա լճից Երքև, կազմի մոտ 250 մղոն: Նկատի ունենալով երկրի անկանոն ձևը, մենք կստանանք 100.000 քառ. մղոնից ոչ պակաս մի տարածություն:

Կերպամշակված «Խպամի հանրագիտարանը», «պատմական Հայաստանի» (արար Աբբասյան աշխարհագիրների Արմինիայի) մեջ ընդգրկում է Շերկա Քրդստանի մեծ մասը՝ Շերաոյալ Հերքիյարի երկիրը: Ըստ այդ հեղինակության, Մեծ Հայաստանը ընդգրկում է արևելքում  $37^{\circ}$  և  $49^{\circ}$  երկայնության և հյուսիսում  $37,5^{\circ}$  և  $41,5^{\circ}$  լայնության միջև ընկած ամբողջ տարածքը: Այդ հանրագիտարանը Արմինիայի տարածքը հաշվում է 300.000 քառ. կմ կամ 115.000 քառ. մղոն: Միջին դարերում Փոքր Հայաստանը (Փոքր Հայքը) գտնվում էր Հայաստանի հյուսիս-արևմտյունում, ներկայիս թուրքական ռազմավարորդեն կարևոր Երզնկա (Էրզնջան) քաղաքի շրջանում: Խաչակրած արշավանքների ժամանակ Ալեքսանդրեսի ծոցի շուրջ՝ Կիլիկիայում գոյություն է ունեցել մի կարևոր հայկական թագավորություն, որտեղ և գտնվում է Պողոս Առաքյալի ծննդավայր Տարտոս քաղաքը: Այստեղ իշխել են Ռուբինյան հայ թագավորական տունը, իսկ հետագայում՝ Ֆրանսիական Լուսինյանները: 1375 թվականին այս թագավորությունը նվաճել են Եգիպտոսի մամլյութները: Կիլիկիան կոչվել է նաև «Փոքր Հայաստան», որտեղ և գտնվում է այժմյան Աղանա քաղաքը:

Այսօրվա Խորհրդային Հայաստանը գրադարանում է պատմական Մեծ Հայքի տարածքի միայն 10%-ը, 29.800 քառ. կմ: Խորհրդային Սիուլյու-

<sup>1</sup> 1 անգլ. մղոնը = 1609 մետրի, ծովային մղոնը՝ 1853 մ:

նում մի քանի հայկական փոքր ազգագրական շրջաններ որպես «անկավ-ներ»՝ մտցել են Աղբեջանական ԽՍՀ-ի մեջ, որոնցից ամենակարևորը Լևոնյան Ղարաբաղն է, որի բնակչության 85%-ը հայեր են:

Արդի թուրքական քարտեզներից հանված է Հայաստանի մասին որևէ հիշատակություն: Հոդային այն տարածքը, որ ժամանակին հայտնի էր որպես «Թուրքահայաստան», բաժանված է թուրքական վարչական շրջանների, իսկ հայկական հին տեղանունները փոխարինվել են թուրքականով: «Թուրքահայաստան» հիշատակումը խստիվ արգելված է:

Հայաստանի որոշ մասեր, ինչպես Արարս գետի ավազանն ու Վանի շրջանը, անասէլի բերրի ու գեղեցիկ են: Այստեղից էլ առաջացել է այն տեսակետը, թե Հայաստանը Ս. Գրքում նշված եղենական դրախտավայրն է եղել: Այնուամենայնիվ, այս նկարագրությունը վերաբերում է Հայաստանի մեկ քառորդից ել պակաս տարածքին: Եվ այնուհետերձ, Հայաստանը հեռու է «դրախտավայր» լինելուց, նրա մեծ մասը բնակելի չէ: Տարածքը կտրված է հսկա լեռներով, որոնցից շատերը 10.000 ոտնաշափ<sup>2</sup> բարձրությամբ հանգած հրաբուխներ են: Հայաստանի ամենաբարձր լեռնագագաթը՝ Արարատ լեռը, 17.000 ոտնաշափ բարձրություն ունի: Հայկական բարձրավանդակի միջին բարձրությունը 5.000 ոտնաշափ է: Քամիներից անպաշտպան այս շրջանի կլիմայական պայմաններն են՝ դաժան 7 ամիս տևող ձմեռը և կարճ (3 ամսից փոքր-ինչ ավելի), չոր ամառը: Լեզինականը, որը մի ինքնատիպ հայկական քաղաք է խորհրդա-թուրքական սահմանի վրա, ծովի մակերևությունը 5.078 ոտնաշափ բարձր է, ձմեռվա միջին ջերմաստիճանն է 12F (— 11°C): Հայաստանը հաճախ ցնցվում է ավերիշ երկրաշարժերից: 1960-ին և 1970-ին Կարդոյի և նրան հարող Վանա լճի առափնյա շրջանները զգալիորեն վնասվեցին երկրաշարժից<sup>3</sup>:

Տրանսպորտը խնդրու առարկա շրջանում մեծ մասամբ վատ վիճակում է: Նավարկելի գետեր քիչ կան, թեև նավեր կարող են նավարկել Կանա և Սևանա լճերում: Վերջին տասը տարում, Վանա լճի մոտով, Ստամբուլի և Թերիանի միջև, երկաթգիծ է անցկացվել, իսկ թափրիզի ու էրգումի միջև ընկած ճանապարհը բարելավվել է բեռնատար ծանր մեքենաների և ավտորուսների երթևեկության համար:

Տրանսպորտի վիճակը շատ ավելի լավ է Խորհրդային Հայաստանում: Մի քանի ժամը մեկ օդային ծառայությունը Երևանը ուղիղ գծով միացնում է Մոսկվայի հետ: Անմիջական ուղիղ երթուղի կա նաև Թբիլիսի, իսկ գագաթու առաջարկությունը՝ Հայաստանում մեծ առաջարկ է:

<sup>1</sup> Ֆր. ուղարկության տարածքի մասը՝ շրջապատված մեկ այլ պետքանշական տարածքով:

<sup>2</sup> 1 ոտնաշափը հավասար է 30,5 մ:

<sup>3</sup> 1988 թ. դեկտեմբերի 7-ին նույնպես Հայաստանի տարածքի մի զգայի մասը դարձավ այնամբ երկրաշարժի առաջարկ:

Լեզինգրադի և նույնիսկ Բեյրութի հետ: Երկխաթուղային մայրուղիներ կան Երևանից Բաքու, Երևանից Թբիլիսի, ինչպես նաև դեպի Ռուսաստան: Սույն տաս տարի առաջ երկաթուղու նոր գիծ կառուցվեց Երևանից դեպի Սևանա լիճը, որով այժմ երթևեկում են ժամանակակից Էլեկտրական գնացքները:

Հայաստանը բավականին հարուստ է ազնիվ և կիսազնիվ մետաղներով և հանքերով: Դրանով հանդերձ, քիչ կամ գրեթե ամեններ նավք չկա: Խորհրդային Հայաստանում մեծ աշխատանք է տարվել Հրազդան գետի ջրերը Էլեկտրականության համար օգտագործելու ուղղությամբ:

Դժբախտություն է, որ Հայաստանը դեպի ծով ելք չունի իր աշխարհագրական դիրքի պատճառով: Ռուսաստանից անջատված լինելով Կովկասյան լեռնաշղթայով, Հայաստանի ամենամոտիկ ծովային եղբայրն են Տրավիդոնը՝ Թուրքիայում, Բաթումը՝ Վրաստանում և Բաքուն՝ Աղբեջանում: 1080-ական թվականներից մինչև 1375 թվականը Կիլիկիայի հայկական թագավորությունը ուղղակի ծովային ելք է ունեցել Սիծերկականի արևելյան մասում, մի քանի հոյակապ նավահանգիստների միջոցով, բայց դա եղել է ժամանակավոր: Այլ կերպ ասած Հայաստանը ամրողացնելու շրջապատված է ցամաքով, և այդ իսկ պատճառով տուժել է և՝ տնտեսապես, և՝ բաղաքականապես:

## ՈՎՐԵՐ ԵՆ ՀԱՅԵՐԸ

Թեպետ հայերը խոսում են հնդեվրոպական լեզվով, նրանք հին ցեղախմբերի սերունդ են, որոնք նախապատմական ժամանակներից ապրել են Արևելյան Անատոլիայում: Ըստ պեղումների տվյալների, հին քարի դարից սկսած Արարատ լեռան շրջակայքը միշտ բնակեցված է եղել մարդկանցով: Այս իմաստով Ս. Գրքում հիշատակված Նոյան տապանը արտացոլում է պատմական ճշմարտություն, հատկապես այն առումով, որ նախատիպերից առաջացած մի շաբթ կենդանիներ ու թռչուններ դեռևս հանդիպում են Անդրկովկասում: Մարդաբանները առանձնացնում են մի հատուկ «արմենոիդ» ֆիզիկական տիպ՝ կարճ, կլոր, հաճախ տափակ հետնամասով գանգով և աչքի ընկնող երկար ու կոր քթով (արծվագիթ):

Քրիստոնից պատճեն քանի բան հազար տարի առաջ Հայաստանում իշխել է ուրարտացի կոչվող մի ժողովուրդ: Իրականում ասորերեն Ուրարտուն միևնույն Արարատ անունն է: Ուրարտացիները հիմնել են մի նշանավոր թագավորություն՝ Վան կենտրոնով, որտեղ մինչև օրս պաթանավում են նրանց ավերված պալատներն ու դղյակները: Մեր թվականությունից շուրջ 600 տարի առաջ տարբեր նվաճողներ են հարձակել Ուրարտուի վրա,

որոնցից են սկյուռները, մարերը (այժմյան քրդերի նախնիները), և մի այլ ժողովորդ, որն իրեն անվանել է «հայասա» և եկել Կենտրոնական Սնառովիայից, հին հեթինների պետովայունից ոչ հեռու: Այսօրվա հայերը իրենց երկիրն անվանում են Հայաստան և իրենց առասպելական նախահայր են համարում Հայկին: Հայաստան-Ռուսութուի հին բնակիչները չեն աճենատագել, այլ խառնվել են Երևանում տարրերի հետ: Թեև պահել են իրենց ազգագրական ինքնուրույնությունը, բայց և այնպես նրանք որդեգրել են մի նոր լեզու, որը հնդեվրոպական խմբի որոշակի ճյուղն է կազմում:

Քրիստոսի ծննդից մոտավորապես 500 տարի արաջ պարսիկ և հուն պատմական աղբյուրները հիշատակում են «Արմենիայ» և «Արմենների» մասին: Այս անուններով են նրանց հիշել Պարսկաստանի արքայից արքաներ Դարերը և Բարքսեսը, ինչպես նաև պատմահայր Հերոդոսուր: Այսպիսով, կարող ենք հաստատել, որ հայ ազգը «Մեծ Հայք» կոչված երկրում՝ իր հարակից շրջաններով, շարունակաբար ապրել է առնվազն մ.թ.ա. 500 թվականից մինչև 1915 թվականը, մինչև Արլ Թուրքիայի հայ բնակչության ոչնչացումը: Սա կազմում է անընդմեջ երկուս ու կես հազարամյակ<sup>1</sup>:

Այսօր հայության թիվը հասնում է 5—6 միլիոնի, որոնք սփոված են գրեթե ամբողջ աշխարհով մեկ: Նրանք մշտապես դրսուրել են մտային բարձր կարողություն և հաջողակ են թիգնեսում ու նախագիտական բնագավառում: Նրանք հայտնի են որպես գիտնականներ, մաթեմատիկոսներ, բժիշկներ, ատամնաբույժներ: Նրանք ծանաչված են արվեստի և գրականության մեջ: Բազմաթիվ հայեր կան դիրիժորների, երգիչների, շարժապատկերի ուժիսորների, արձանագրործների և գրքեր նկարագրողների մեջ:

Չնայած իրենց ոլորեգական պատմությանը, նրանք աշքի են ընկնում երգիծանքով և ԽՍՀՄ-ում քաղաքական զվարճապատումներից (անեկողության վերագրվում են Երևանի առասպելական ուղղույթը: Հայերը գերազանց վերագրվում են Երևանի առասպելական ուղղույթը: Հայերը գերազանց խոհարարներ են և նրանց հյուրասիրությունը հայտնի է: Նրանք անկեղծ բարեկամներ են և տվել են բազմաթիվ զինվորական դեկավաններ: Զրպարտիչները հայերին ամբաստանում են ծածկամտության, համառության և շահախնդրության մեջ:

<sup>1</sup> Այստեղ հեղինակները տուրք են տվել ուրարտագիտության մեջ ընդունված այն սխալ տեսակետին, թե Ուրարտում և ուրարտացիները իբրև թե եղել են Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեցած ոչ հայկական պետովայուն ու ժողովորդ, որոնք ժամանակի ընթացքում նվաճվել են ուսում տարածքում ապրող հայկական տարրի կողմից:

## ՀԱՅԱՍՏԱՆ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասկանալի է, երբ հայերը հպարտանում են այն բանով, որ իրենց երկիրը ժամանակին եղել է մեծ տերություն, թեպետև միայն մի քանի սերնդի օրոր՝ Պոմպեոսի և Հովհանն Կեսարի ժամանակաշրջանում: Հայերի ամենահզոր թագավորը եղել է Տիգրան Բ, որն իշխել է Քրիստոսից առաջ՝ 95—55 թվականներին: Նրա թագավորությունը տարածվել է Կասպից ծովից, Մերձավոր Արևելքով մինչև Սիրիա և Միջերկրական ծով: Բայց և այնպես, Տիգրանը պարտվել է հովմանց Լուկովոյ զորավարից (որը հայկական ուկու շնորհիվ հոչակված Լուկովոյում խնջուղերի հեղինակն էր): Հետագայում հայերը պարտություն են կրել Պոմպեոսից: Արժե այստեղ հիշատակել, որ Տիգրանի որդին՝ Արտավազ Բ, աշքի և ընկել գրական տաղանդով, որը հունարեն պիտաներ է գրել և Հայաստանում, իր պալատում ստեղծել է հունական թատրոն: Անտոնիոս ու Կիեռպատրան խարեւությամբ առևանգել են Արտավազին և նրա ընտանիքին ու մահվան դատապարտել:

Եթե մի կողմ թողնենք Եդեսիայի Արգար թագավորի քրիստոնեական պետության գոյությունը, որն այժմ չի հաստատվում, հայերը աշխարհի ամենահին քրիստոնյա ազգն են: Քրիստոնեության ընդունումը Վերագրովում է Ս. Գրիգոր Լուսավորչին: Դաժան շարչարանքների ենթարկվելուց հետո Գրիգորը կրապաշտ Տրդատ Գ թագավորին քրիստոնյա դարձրեց: Հայանաբար 301 թվականին քրիստոնեությունը պետական կրոն դարձավ Հայաստանում և զարգացավ Հռոմից ու Կոստանդնուպոլիսից անկախ: Այդ պատճառով էլ առկա են որոշ կրոնական և արարողական տարրերություններ: Բայց և այնպես, սրանք չեն խանգարում հայ եկեղեցուն լինել ինքուրովն առաքելական եկեղեցի Միջին Արևելքում:

Քրիստոսի թվականության սկզբից հինգ դար հետո Մերուո Մաշտոցը արեց հայկական ինքնարիա այրութենի գյուտը: Մինչ այդ ամբողջ գրականությունը և պաշտոնական վավերագրերը գրվել են հունարենով կամ միջին պարսկերենով: Ազգային գրերի գյուտը հնարավորություն տվեց Սուրբ Գիրքը (Աստվածաշունչ-խմբ.) և առավել կարևոր քրիստոնեական գրականությունը թարգմանել հայերեն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՐՈՂՈՒՄԸ ՄԱՍԵՐԻ

Ազգային եկեղեցու հիմնադրումը կենսական եղավ հայ ազգի միավորման, պահպանման գործում: Ցաղաքական ճնշումը այնքան ուժու էր, որ առանց իրենց եկեղեցու հայերը վաղուց ի վեր ծովված կլինեին հարևանների հետ 387 թ. ճակատագրական քաղաքական որոշմամբ, երբ հովմա-

ցիները և պարսիկները Հայաստանը բաժանեցին իրենց միջև: 428 թ. հայպարթևական Արշակունի տոհմի վերջին թագավորը վախճանվեց, և նրան ոչ ոք չփոխարինեց: Ֆեռդալները կամ «նախարարները» ծգուում էին գերազույն իշխանության: 451 թվականին պարսիկ գրադաշտ արքայից արքա Հազկերտը ամեն միջոցի դիմեց՝ ճնշելու քրիստոնյա հայերին, և մի մեծ բանակով, որտեղ կային նաև փերի մատյան գնդեր, ներխուժեց Հայաստան: Պարսիկների տիրապետությանը հաջորդեց արար խալիֆների տիրապետությունը, որոնք ուղարկում էին իրենց գորավարներին (Օրանցից մեկը թուրք Բուլղան էր). Երկիրն ավերելու:

Բյուզանդացի կայսրերը նույնական գտան, որ Հայաստանի խնդիրը կնճուռ խնդիր է: Հազարավոր հայերի բնակեցրին թրակիայում և Մակեդոնիայում: Բյուզանդական կայսրերից շատերն ել հայ էին: Դրանցից նշանավորներն էին Բարսեղ I-ը (867—886) և Կորովի, բայց ոչ ժողովրդական Լևոն Հայը (813—820), որի մասին մի հույն պատմագիր գրել է. «Եա հայերի երկրից եկավ, որտեղից և, ըստ որոշ մարդկանց, գալիս է նրա համառությունն ու անհաճո պահվածքը»: Հովհաննես Զմշկիկը մեկ ուրիշ հայ կայսր էր (969—976), ամենակարկառուն կայսրերից մեկը, որ երբեւ նատել էր Կոստանդնուպոլիսի գահին: Իններորդ դարում հայկական թագավորությունը վերականգնվեց Բագրատունիների հարստությամբ, որի մայությարձն էր Անհն (այժմ՝ ավերակ), Թուրքիայի և Խորհրդային Հայաստանի սահմանի վրա: Դեպի հարավ, Վասպուրականում, գոյություն է ունեցել մեկ այլ թագավորություն: Նրա իշխողներից մեկը՝ Գագիկ թագավորը, կառուցել է Կանա լճի կղզու նշանավոր Աղթամար եկեղեցին: Վերականգնված անկախ հայկական թագավորությունը կարճ կյանք ունեցավ: 1045 թ. հունվերը բռնակցեցին Անհն և Բագրատունիների թագավորությունը վերացրեցին: Այնուհետև 1064 թ. Կենտրոնական Ասիայից և Իրանից սեղուկան թուրքերը ներխուժեցին ու գրավեցին Անհն և Անատոլիայի մեծ մասը:

## ՄԵԾ ԱՐՏԱԳԱՂԹԸ

Հայերի արտագաղթը հայրենի երկրից մեծ չափեր ընդունեց: Հայերին հաջողվեց Կիլիկիայում հիմնել մի նոր թագավորություն (1080—1375), Սիս մայրաքաղաքով: Այստեղ նրանք դարձան խաչակիրների անգնահատելի դաշնակիցը, և Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն Ե Լուանյանը մահացավ Փարիզում՝ աքսորում: Որոշ թվով հայեր կորեցին-անցան Սև ծովը՝ Դիհմում հիմնելով առևտրական գաղութներ: Այստեղից նրանք տարածվեցին Ռուսաստան, Ռումինիա և Լեհաստան: Հայերը կարևոր դեր խաղացին իշխան Ալեքսանդր Բարու (1401—1435) մոլորվական պետության ստեղծման գործում, իսկ Մոլորվայի կառավարիչ Հովհաննես Քաջը

(1571—1574) հայ էր: Լեհաստանում հայերը նշանավոր են եղել առևտրի և մտավոր ասպարեզում (Լվով և Կրակով): Լվովում հիմնել են մի կաթոլիկական հայկական տաճար:

1453 թվականին, Կոստանդնուպոլիսը թուրքերի ձեռքն ընկնելուց հետո, տեղի ունեցավ Մեծ Հայքի նոր թագավորում, այս անգամ օսմանյան սովորական և Պարսկաստանի սեֆյան շահերի միջև: Ինչպես և հունվերը, Օսմանյան կայսրության հայերը կազմակերպվեցին կիսանկախ համայնքների կամ «Միլլեթ և Շար ի» մեջ: Հայկական համայնքի գլուխը Կ. Պոլսի պատրիարքը էր, որն անմիջականորեն ենթարկվում էր թուրք սովորական կամ մեծ վեզիրին: Պատրիարքի պաշտոնը սովորաբար տրվում էր ամենաբարձր վճարողին: Օսմանյան կայսրության օրոք մեծ մասամբ հայ զաղութին տիրում էր մի վերնախավ, որը բաղկացած էր վաճառականներից և պետական բարձր պաշտոնյաներից: Օսմանյան տիրապետության տակ գտնվող Երուսաղեմի պատրիարքությունը կրօնական աստիճանով թեպետ ավելի բարձր էր, բայց նույնական ենթակա էր օսմանյան ծախությաներին, ինչը որ ժամանակակից պատմաբան պրոֆ. Սանջանին հիմք է տվել ասելու, թե Սուլթան պաղաքում հայ անունն իսկ դարձել էր Հայաստինը պի արտահայտություն: Բայց և այնպես, օսմանյան կառավարությունը մեծապես օգտվեց հայերի տաղանդից՝ որպես դրամատերերի ու կառավարիչների: Մինչև XIX դարի ճակատագրական դեպքերը հայ համայնքը ժանաչված էր որպես «հավատարիմ միլլեթ»:

32/4

XVII դարի սկզբին Պարսկաստանի շահ Աքբար և հազարավոր հայեր տեղահանեց գերազանցապես Արարատյան դաշտից և ընակեցրեց իր Խոսահան մայրաքաղաքում, որին մերձ Չուղայում հայերը հիմնեցին գաղութ՝ կառուցելով մի մայր տաճար և բազմաթիվ եկեղեցիներ: Պարսկաստանից հայերը տարածվեցին Հնդկաստան, Մինգապուր, Ճավա և Վերջերս՝ Ավստրալիա:

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

### ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Քառորդ դարում (1895-ի և 1920-ի միջև) հայերը մեկ ու կես միլիոն մարդ կորցրին, որոնք սպանվել էին հրազենով կամ սփինահարվել, սովորական եղել և մահացել գրկանքներից ու համաճարակներից: Աշխարհում ապրող հայության մեկ երրորդը մեռավ սարսափելի ու տաճալի մահով: Ազգային այս ողբերգական վախճանը կարելի է համեմատել միայն Հիւլիսի վարչակարգի օրոք հրեաների կրած տառապանքների հետ: Այսօր, 1976 թվականին, չկա մի հայ ընտանիք, որը կարողանար մոռանալ այդ ողջակիզումը: Այս բանն ավելի ու ավելի հաճախ է շեշտվում հայկական մամուլում և սպառնում է գալիք տարիներին ունենալ շատ ավելի շոշափելի արդյունք:

### ՏԱՍԽԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ ՀԱՅԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ

Օսմանյան կայսրությունում հայերը կազմում էին չորս մեծ խավեր: Առաջինը բաղկացած էր հարուստներից և կառավարական ու քաղաքացիական ծառայության մեջ գտնվող ազդեցիկ անձնավորություններից, երկրորդ խավը՝ Ստամբուլի և Անտալիայի քաղաքների առևտրականների խավն էր: Արևմտյան ճանապարհորդները ավելի շատ շփվում էին այս երկրորդ խավի հետ: Երրորդ խավը՝ գյուղացիությունն էր, որը ամենամարդաշտն էր, բայց ամենաքիչն էր արժանացել ճանապարհորդների ուշադրության, բացառություն է կազմում Հ. Բ. Լինչը<sup>1</sup>: Չորրորդ խավը՝ լեռնային պատերազմիկներն էին, որոնք ինչպես Զեյթունում, Հայաստանի լեռներում վարում էին դժվարին ու անկախ կյանք: Այդ չորսի վրա ավելացնենք նաև բազմաթիվ քահանաներին և բարձրաստիճան կրոնավորներին:

<sup>1</sup> Լինչ (Lynch) Հենրի Ֆինիս Բլու (1862—1913), իունանացի հայագետ, ճանապարհորդ-աշխարհագետ: 1893—94-ին և 1898-ին շրջագայել է Արևելյան և Արևմտյան Հայաստանում, ուղևորությունների արդյունքները ամփոփել «Հայաստան» երկհատոր գրքում (ռուս., 1910):

Որքա՞ն էր հայերի թիվը Թուրքիայում: Մարդահամարի վստահելի վիճակագրություն չկայա: Ուրիշինին (1854) հաշվում էր 2.400.000 հայ, և այն կարծիքին էր, որ հայերը մեծամասնություն էին կազմում էրգուսի նահանգում (որի մեջ այն ժամանակ տնում էին Կարսը, Բայազենտը և Չլորը) և Քրդատանում (Վան, Մուշ, Հեքիչարի և Դիարբեքիր): 1832-ին Կ. Պոլսի Հայոց պատրիարքի տվյալներով, կայսրությունում հաշվվում էր 2.660.000 հայ, որոնցից 1.630.000-ը՝ հայկական «վեց վիլայեթներում» (Սպաղի, Մամուլիթ ու Ազիզի<sup>1</sup>, Էրզրումի, Դիարբեքիրի, Բիթլիսի և Վանի նահանգներում): Հետագայում, 1912 թվականին, պատրիարքը ներկայացրեց մեկ այլ թիվ՝ 2.100.000: Նվազումը արդյունք է 1890-ական թվականների ջարդերի և հայերի շարունակական փախուստի սահմանից այն Կողմ, դեպի ոռական Կովկաս:

Մինչև XIX դարի երկրորդ կեսը օսմանյան կառավարությունը գրեթե ուղղակի իշխանություն չի գործադրել մեծամասնություն կազմող հայ քաղաքացիների վրա: Մինչ այդ գյուղական շրջանները հիմնականում կառավարվում էին քուրդ պատատերերի կողմից: Երբ կենտրոնական իշխանությունը թուլանում էր, արդյունքը, հասկանալի է, միշտ վատ էր լինում, դա նշանակում էր ավելի ծանր հարկեր գյուղացիության վրա և նորանոր ճնշումներ: Թուրքահայաստանում (այն է՝ այժմյան Արևելյան Թուրքիայում) ապրող հայերը հայտարարելու մի խնդիր ևս ունեին, դա քրդերի հետ նրանց խառը բնակության հանգամանքն էր: Այդ քրդերին, որոնք ապրում էին ավելի հարավային շրջաններում, XVI դարում սովորան Սելիմը բերել բնակեցրել էր այն պայմանով, որպեսզի նրանք պաշտպանեին պարսկական սահմանը: Քրդերը մեծ մասամբ ուղղափառ մահմեդականներ են: Թեպետ մոլեռանդ չեն, բայց կողոպտելու և հայ աղջիկներ առևանգելու խիստ հակում ունեն: Բացի այդ, քրդերը զինված էին, մինչդեռ հայերին, որպես ենթակա քրիստոնյա ժողովուրդ, արգելված էր գենք Կրել:

Կամաց-կամաց սկսվեց հայերի ճնշումը: 1839-ին հյուպատոս Բրանտը զեկուցել է, որ «Մշտ ամբողջ դաշտում հայերի հետ խառնված մահմեդական գյուղացիներ չկան», բայց արդեն մի քանի տասնյակ տարի անց հայերը փոքրամասնություն էին կազմում իրենց հողերում: Տարօրինակ էր, որ հայերը հաճախ քրդերի պարտապաններն էին դատնում, որոնք հանդես էին գալիս որպես վաշխառուներ՝ ամսական 3—4% շահով:

Օսմանյան Թուրքիայի XIX դարի բարեփոխումից, որը հայտնի է որպես «Թանգիհմաթ» կամ վերակառուցում, հայերը համարյա ոչինչ չշահեցին: Հիմնական պատճան այն էր, որ կայսրության քաղաքացիական վարչությունը չբարեփոխվեց: Եվ փաստ է, որ «Թանգիհմաթը» ցուցափեղկի

<sup>1</sup> Խարբերդի նահանգի թուրքերեն անվանումը:

մի զարդարանք էր, որի նպատակն էր հանգստացնել Եվրոպայի դիվանագետներին և նրանց հետ պահել «Եվրոպայի հիվանդ մարդուց» (Թուրքիայից) բարեփոխություններ հիշեցնող միջոցառումներ կորցելուց:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄԵՇ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայերը համակրանքով էին հետևում Հունաստանի 1820-ական թվականների ազատագրական շարժմանը: Բալկանյան երկրների սլավոնների նման հայերը նույնպես հույս ունեին, որ Ռուսաստանի ուղղափառ կայսրը իրենց կազմագրի անհավատներից: Հայերը միամիտ և չափազանցված պատկերացում ունեն ռուսական պետության և ռուսների մարդասիրության մասին: 1801-ին ռուսներն անցան Կովկասը, իրենց միացրին Վրաստանը: 1827-ին նրանք նվաճեցին Պարսկահայաստանը և ներխուժեցին Թուրքահայաստան՝ մինչև էրզրում: Դրիմի պատերազմում գրավեցին Կարսը: 1864-ին ռուսները նվաճեցին Չեռքեզիան, որտեղ մահմեդականները մեծ թիվ էին կազմում և որոնցից 600.000-ը նախընտրեցին գաղթել Թուրքիա՝ որպես «մուհաջիրներ»<sup>1</sup>, քան մնալ ռուսական տիրապետության տակ: Առաջանալով դեպի Կենտրոնական Ասիա, ռուսները նվաճեցին Խիվան, Կոկանդը, Սամարդանդը, Բուխարան և Տաշքենդը՝ այդ ընթացքում կոտորելով հազարավոր թուրքմենների:

Իսկ եթե մենք հիշենք, որ օսմանյան կայսրը համարվում էր խալիֆ և ուղղահավատների գերագույն հրամանատար, և որ Կենտրոնական Ասիայի թուրքերը օսմանցիների ցեղակիցներն էին, ապա պարզ կլինի, թե այդ իրադարձությունները ինչու այդպիսի ցասում առաջ բերին Ստամբուլում: Քրիստոնեական փոքրամասնությունները, ինչպես հույները, բոլղարները և հայերը, որոնք աղոթում էին ռուսական ցենքի հաղթության համար, դարձան թուրքական ճնշումների և հալածանքի թիրախ, մանավանդ, որ այդ քրիստոնյաները հաճախ ավելի հարուստ ու հաջողակ էին կյանքում, քան մահմեդական բնակչությունը (սա հիմնականում վերաբերվում է քաղաքային բնակչությանը). հայ գյուղացիությունը մեծ մասամբ չքավոր էր): 1877—78-ին ռուսները ազատագրեցին բոլղարներին, և այն է գրավելու էին նաև Կ. Պոլիսը: Հայերը ազատագրվելու, կամ առնվազն Օսմանյան կայսրության սահմաններում ինքնավարություն ստանալու մեծ հույսեր ունեին: Նրանք մի ներկայացուցական պատվիրակություն ուղարկեցին 1878-ի Բեյլինի կոնգրես:

Հայերի հույսերը մեծ մասամբ ի դերև ելան Բրիտանիայի պրեմիեր մինիստր Դիզրիյը<sup>2</sup> ջանքերով: Այդ պահպանողական պետական գոր-

ծիչը գտնում էր, որ Ռուսաստանի առաջևադացումը Բալկաններում և Մերձավոր Արևելքում խախտում է ուժերի հարաբերակցությունը աշխարհի այդ շրջանում: Եվ Դիզրիյին ուստաներին հարկադրեց դատարկել էրզրումը, թեպետու նրանք տիրացան Կարսին ու Արդահանին: Բեյլինի դաշնագործ ընդունվեց մի անպատճ, քայլ գեղեցիկ ձևակերպված որոշում, որը խիստ մշուշապատ կերպով Արևմտյան տերություններին պարտավորեցնում էր հայերին պաշտպանել թուրքական անհշխանությունից: Մոտ մեկ տասնյակ բրիտանացի հյուպատոսների հանձնարարվեց, առանց որևէ իրական հարկադրական ուժի, վերահսկել մի շրջանի, որը իր տարածքով հավասար էր Անգլիային և Ուելսին: Հայաստանը շարունակեց մնալ տարածածառ և անօգնական, Ռուսաստանի և Թուրքիայի միջև բաժանված: Մինչդեռ Դիզրիյին սովորական Արքով Համիդից (1876—1909) ճարպկորեն խեց Կիպրոսը, ի գին բրիտանիայի «քարի ծառայությունների»: Անգլիայի մերը այդ «գործարքի» մեջ հետագայում ընդունեց Լոյդ Չորջը<sup>3</sup>: 1919-ին Փարիզի հաշտության կոնֆերանսում Բրիտանիայի պրեմիերը գոշանքով վերհիշեց, թե ինչպես 1878-ին Տորի (պահպանողական) կառավարությունը «պենեց, որպեսզի հայերը, որոնք արդեն ազատագրվել էին ռուսական գենքի օգնությամբ, վերստին ընկնեն թուրքական տիրապետության տակ»:

Բեյլինի դաշնագրի երկրմաստ դրույթները անվերջ փոխադարձ ամրատանությունների տեղիք տվեցին: Միմյանց հաջորդող բրիտանական դեսպանները անհրականանայի հանձնարարությունների ստացան՝ բարեփոխելու սովորական կառավարչությունը՝ ասես օսմանյան գոռոզ միապետը մի ռաջա լիներ բրիտանական «Pukkah Saib»<sup>4</sup>-ների հշխանության տակ: «Փանչի»<sup>5</sup> ծաղրանկարներից մեկը 1879-ի նոյեմբերին պատկերում էր բրիտանական պատվիրակ սըր Զենդի Լեյարդին՝ սովորան Համիդի վրա բրագվելիս: «Զերդ գերազանցությունը պէտք է բարեփոխի»: Սովորան պատասխանում է: «Պէտք է, քայլ արդյո՞ք Անգլիան նոր մեծ վեզիր ունի»: Բրիտանական դեսպան: «Ոչ, տակավին: Քայլ նոր ընդհանուր ու ուղարկելու մեջ ու ուղարկելու մեջ ապարատական պատրաստվում»:

Այն օրերի բրիտանական և եվրոպական այլ դիվանագետների անփակենական և հանորդական վարքագիծը նպաստեց գրգռելու Արդյունք Համիդի ախտածին ու պարանոիկ բնավորությունը: Սովորան և նրա վեզիրները Հայկական հարցը դիտում էին որպես մի պարզ պատրվակ բրիտանական և ռուսական միջամտության համար օսմանցիների գործերին գործերին:

<sup>1</sup> Դիզրի Լոյդ Չորջ (1863—1946), Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստր 1916—1922-ին:

<sup>2</sup> «Pukkah Saib» կամ «Pukka Saib» — անգլիական բարձրաստիճան ծառայություններական անվանումը Հնդկաստանում:

<sup>3</sup> «Փանչ» («Panche»), անգլիական պատկերազարդ երգիծական ամսագիր:

<sup>4</sup> (Արար) — վերաբնակները, փախստականները Խոլամի երկրներում:

<sup>5</sup> Դիզրիյ (Disraeli) Բենջամին, կոմս Բիկոնսֆիլդ (1804—81), Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստր 1864, 1874—80-ին:

դա ամրապնդում էր նրանց համոզմունքը՝ ամեն կերպ ընդիմանալու որևէ շարժման, որը կարող էր հանգեցնել կայսրության քայլայմանը: Եվ տարօրինակ ոչինչ չկա, եթե թուրքական արքունիքը գնալով ավելի ու ավելի հակվեց դեպի Գերմանիայի մայրաքաղաք Բեռլին, որտեղ Բիսմարկը, իսկ ավելի ուշ՝ Վիլհելմ II կայզերը որդեգրել էին «իրավունքը հզորինն է» սկզբունքը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Թեպետ Օսմանյան կայսրության մեծ քաղաքների ունար հայերի կյանքը շարունակում էր տանելի և նույնիսկ ինչ-որ տեղ նախանձելի մնալ շատերի համար, արևելյան նահանգների վիճակը գնալով վատանում էր: Վարչական հիմնարկները բարեփոխելու փոխարեն ավելի էր ուժեղանում տեղական պաշտոնելության ճնշումը:

Արդու Համիդը զինեց քրդերին և նրանց խրախուսեց հարձակվելու հայկական գյուղերի վրա: 1891-ին կազմակերպվեցին բավականին թվով «համիդիե» գնդեր, որոնք ահարեկում էին քաղաքացիական բնակչությանը այնպես, ինչպես Ռուսաստանի կողակային զորքերը ցարիզմի վերջին տարիներին: Հուսահատված՝ հայերը սկսեցին կազմակերպել պաշտպանության ընդհատակյա խմբեր և հեղափոխական զինված ընկերություններ: Դրանցից առաջինը Վանի արմենականներն էին (1885), որոնց հաջորդեցին հնչակները (1887, հիմն. Ժնևում) և դաշնակցականները (1890, Թիֆլիս): Կերպին երկուսը հեղափոխական սոցիալիստական խմբեր էին, որոնք ներշնչված էին ռուսական այնպիսի կոմիտեներից, ինչպիսին «Նարոդնայա Վոլյան» էր: Դաշնակցականները հաճախ գենքով ահաբեկում էին հարուստ պահպանողական հայերին, որոնք հրաժարվում էին աջակցել նրանց գործին. արդարանալով՝ նրանք ասում էին, թե պետական այն իշխանությունները, որոնց նրանք ընդդիմանում են, շատ ավելի դաժան ու ահաբեկիչ են, քան իրենց (դաշնակցականների) ահաբեկչությունները:

1890-ական թվականների սկզբին այս խմբերը մի քանի զինված գործողություն կատարեցին թուրքական իշխանությունների դեմ և բնակչությանը պաստամբության կոչեցին: Բայց առաջին քիչ թե շատ նշանակալի գործողությունը եղավ հնչակների 1894-ի փորձը՝ ոտքի հանելու Սասունը (Արևմտյան Հայաստանում), գրգռելով օսմանյան կառավարությանն ու նրանց տեղական քուրու ավատատերերին: Երկու ակնառու հեղափոխականները Միհրան Տամարյանն ու Համբարձում Բոյաջյանը, համապատասխանաբար ուսուցիչ և թիշէ էին:

ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒ ՀԱՄԻԴ ԵԿ  
1894—96-Ի ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Սասունի ապստամբությունը օսմանյան կանոնավոր զորքերի կողմից դամանորեն ճնշվեց, որը միջազգային զայրությ առաջ բերեց: Օտարերկրյա ճնշման տակ սովորանը ստիպված եղավ նշանակել Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի պատվիրակներից՝ որպես տեսուչների, կազմված մի հանճառաժողով: Արդու Համիդը բարենորոգումների խոսում տվեց, բայց հաջորդեցին նոր ջարդեր թուրքահայաստանում (1895-ի հոկտեմբեր-դեկտեմբերին), որոնց, ինչպես հաստատում էին անկողմնակալ տեսուչները, այդ թվում Բրիտանիայի ներկայացուցիչը, մեղսակից էին իշխանությունները: Այդ սպանությունների ճիշտ նախօրեին հնչակները մի մեծ զինված ցույց կազմակերպեցին Ստամբուլում, որը լրացուցիչ պատրիվակ ծառայեց իշխանությունների ձեռքին՝ հայ բնակչությանը սրբաշելու համար:

Այս կոտորածներին գոհ գնաց մոտ 300.000 հայ: Ամենասոսկալին թերևս Ուրֆայի երկրորդ կոտորածն էր 1895-ի դեկտեմբերի 28—29-ին: Մոտ 3.000 հայ տղամարդ, կին ու երեխա պատսպարվեցին իրենց եկեղեցում, բայց զորքերը ներս խուժեցին: Անզեն զորերից շատերին գնդակահարելուց հետո թուրքերը նավթ լցրեցին և հրուեցին եկեղեցին: Հյուպատոս Ֆիցմորիսը ավելի ուշ գրում էր.

«Կերնասրահի գերաններն ու փայտյա պատոհանները շուտով բռնկվեցին... փակելով դեպի սրահը տանող սանդուղները և հրո ճարակ դարձնելով կրակի դեմ մաքառող մարդկանց: Մի քանի ժամ մարդկային մսի զարշահոտությունը պատել էր ամբողջ քաղաքը, և նոյնիսկ այսօր, ջարդերից երկուս ու կես ամիս անց, նեխած և ածուխ դարձած մարդկային մանարդների հոտը եկեղեցում անտանելի է»:

Հուսահատության մեջ հայ հեղափոխականները փորձում էին առաջ բերել եկլոպական տերությունների (որոնք ստորագրել էին 1878-ի Բեռլինի դաշնագիրը) միջամտությունը հօգուտ հայկական դատի: 1896-ի օգոստոսին մի խումբ զինված դաշնակցականներ գավթեցին Կ. Պոլսի Օսմանյան բանկը և սպանացին պայթեցնել այն, եթե չքավարարվեն նրանց քաղաքական պահանջները: Բայց նրանք ի վերջու տեղի տվեցին: Երեսուն ժամ գրաված պահելով բանկը: Այն ամենը, ինչի նրանք հասան՝ երկրից անփառ հեռանալը էր: Լրանք թերևս ամենաերջանիկներն էին, քանի որ նրանց հեռանալուց հետո սովորան հայերի նոր ջարդ կազմակերպեց մայրաքաղաքի փողոցներում, հենց դեսպանների թիվ տակ: Սպանվածների մեծ մասը քաղաքի չքավորությունն էր՝ գալթական գործակորներ, համալներ, նավահանգստային բանվորներ և այլն:

Հանրային կարծիքի ճնշման տակ լորդ Գլադստոնը<sup>1</sup> հայտարարեց, թե բրիտանական ռազմանավերը դժբախտաբար չեն կարող բարձրանալ Տավրոսի լեռները: Եվրոպական տերությունները քննարկեցին Օսմանյան կայսրության հնարավոր անդամահատման և նույնիսկ արճախում սովորացի հարկադրյալ գահընկեցության հարցը: Բայց Երանց փոխադարձ նախանձախնդրությունը ու անվատահությունը, և Երանցից մի քանիս՝ Օսմանյան կայսրության տնտեսության մեջ ներդրած վիթխարի գումարները, կանխեցին որևէ արդյունավետ քայլ այդ ուղղությամբ:

### ՀԱՅԵՐԸ ՑԱՐԱԿԱՆ ՈՌԽՍՍՏԱՆԻՒՄ ~

Հայերը ընդհանուր առմամբ շահեցին Կովկասի ոռուսական նվաճումից: Ուներ և արդյունագործ հայկական միջին խավը բարգավաճեց այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսիք էին Թիֆլիսը Վրաստանում և Բաքուն Աղրբեջանում: Մինչև խորհրդային շրջանը Երևանը (Հայաստանը) մնում էր հետամնաց ծայրագավառ: Սակայն XIX դարում Կովկասի հայ բնակչությունը տակավին մեծ մասամբ (65%) մնում էր գյուղական՝ քաղաքային 35%-ի դիմաց: Քաղաքային բնակչության գերակշիռ մասը հասարակ աշխատավոր խավը էր:

1836-ին ցարական կառավարությունը հրապարակեց մի կանոնադրություն (Պոլոժենի ե), որը հայ եկեղեցուն իրավունք էր տալիս ունենալ իր կալվածքները, իսկ հայ դպրոցներին շնորհվում էր ինքնուրուցնություն: Բայց 1880-ական թվականներին հայերին ընծեռված այդ արտոնությունները վերացվեցին: Պատճառներից էր օսկ Ալեքսանդր II-ի Ակատմամբ մահափորձը 1891-ին և դրան հետևած, ծագումով հայ ազատամիտ գրւանական նախարար կոմս Լոռիս-Մելիքովի<sup>2</sup> պաշտոնագրի կումը: 1884-ին ոռոսական իշխանությունները փակեցին հայկական դպրոցների բարձր դաստիանները. 1897-ին, երբ Կովկասի կառավարչական նշանակվեց իշխան Գոլիցինը, հայկական դպրոցները բոլորովին փակվեցին: Նման պաշտոնական վերաբերմունքը խիստ նվազեցրեց պետական ծառայության մեջ գտնվող հայերի թիվը: Այնուհետև Գոլիցինը դիմավ հայ ազգի ամենացավոտ տեղին՝ Առաքելական (Լուսավորչական) եկեղեցուն: 1903-ի մի հրովարտակով ցարական իշխանությունները բոնագրավեցին հայ եկեղեցու ամբողջ գույքը: Երբ կդեռ դիմադրեց, ոռոսական ոստիկանությունը գորավեց

<sup>1</sup> Գլադստոն (Gladstone) Ուկայամ Յուրատ (1809—98), Մեծ Բրիտանիայի արեմիեր մինիստր 1869—74, 1880—85, 1886, 1892—94-ին:

<sup>2</sup> Լոռիս-Մելիքով Միքայել Տարիելի (1825—88), ոռոսական պետական գործիչ, 1880-ին՝ Գերագույն կարգադրիչ հանձնաժողովի պետ, 1880—81-ին՝ Երբին գործերի նախարար:

Սուրբ Էջմիածինը: Դրանից հետո հայ հեղափոխականներին աջակցեց երբեմնի թշնամական բոլորության: Լեռուած կողակալին տեսորին հայերը պատասխաննեցին ումբերով ու քաղաքական սպանություններով:

1905-ի հեղափոխության ժամանակ Բաքվի նահանգապետը թարարներին հրահրեց հայերի դեմ. արյունահեղությունը տևեց չորս օր: Նման միջադեպեր եղան Անդրկովկասի մի շարք այլ շրջաններում: 1905-ի սեպտեմբերին գազազած ամբոխը հրդեհեց Բաքվի նավթահանքերը: Ավելի ուշ հայերը ուշքի եկան և հատուցեցին թաթարներին: Հայ հեղափոխական այս բախումները գյուղացիության աչքում բարձրացրին Հայ հեղափոխական դաշնակցության հեղինակությունը: Հանձին դաշնակցության, նրանք տեսնում էին իրենց պաշտպանելու ունակ միակ իրական ուժը, և կուսակցության գործադրած բոնի ուժը շրջեց ցարիզմի հականայ քաղաքականությունը: Բայց դաժան ընդհարումները տևական ատելություն սերմանեցին հայերի և թաթարների միջև: Մինչև առաջին համաշխարհային պատերազմի նախօրեն Նիկորայ II ցարը շարունակում էր պայքարել հայ ազգայնականության դեմ: 1912-ին հայ ազգայնականների մի խումբ աքսորվեց Սիրիի<sup>1</sup>: Ումանք էլ միացան լեհներան բոլցւիկներին: Դրանց մեջ հիշատակության են արժանի Ստեփան Շահումյանը՝ Բաքվի տարարախտ կոմիսարներից մեկը (Դեկապար. — Խմբ.), Կամոն (Տեր-Պետրոսյան): Ականավոր բանկ կտրող հեղափոխականը, և Ա. Ռ. Միկոյանը՝ ավելի ուշ խորհրդային հնագույն դեկապարներից մեկը:

### ՄԻ ԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅԱՍՏԱՆ ԵԿ ԵՐԻՏԹՈՒՐՅԱԿԱՆ ՀԵՂԱՇՔՉՈՒՄԸ

1908-ի երիտթուրքական հեղաշրջումը սահմանափակեց սովորաց Արդուկ Համիդի միահետական իշխանությունը և վերականգնեց 1876-ի սահմանադրությունը: Ազատության և երայրության գաղափարը նախապես համակեց կայսրության բոլոր ազգություններին: Հայ դաշնակցականները սերտորեն համագործակցեցին երիտթուրքերի հետ հեղափոխությունը խթանելու հարցում և մի քանի տարով դաշինք կնքեցին Երանց հետ:

Բայց մեկ տարի շանցած այդ հարաբերությունները մոռլվեցին: 1909-ին տեղի ունեցավ Արանայի հայերի հրեշտակությունը, որին գործ գնաց 30.000 մարդ: Տակավին պարզ չէ, թե ովքեր էին մեղավոր այդ արյունական դեպքերի համար՝ երիտթուրքերը, թե՝ գահազուրկ Արդուկ Համիդի կողմանակիցները<sup>2</sup>: Շուտով երիտթուրքերի հեղափոխությունը փոխա-

<sup>1</sup> Այստեղ խոսքը 1911—12-ին արաբեկշական գործունեության համար ցարական կառավարության կողմից ՀՀ դաշնակցության դեմ հարուցված դատական գործի մասին է:

<sup>2</sup> Այս հաճամանքը վաղուց արդեն պարզված է, հաստատված է, որ շարդերը կատարվել են երիտթուրքերի հրահանգով (Խմբ.):

Կերպեց պարզ բռնապետության և կառավարող խոհման որդեգրեց և հոչակեց «Թուրքերը բոլոր ազգերից վեր են» քաղաքականությունը: Բրիտանական դեսպանը նրանց այդ քաղաքականությունը 1910-ի սեպտեմբերին բնութագրում էր որպես «Թուրքական հրանորի լիցքավորում ոչ թուրքական տարրերով», մի բան, որը հավասարապես վերաբերում է նաև 1976-ի թուրքական կառավարությանը:

Միևնույն ժամանակ ծևափորվում էր թուրք ազգայնամոլության մի գաղափարախոսություն, որը լուրջ և հեռուն գնացող բարդություններ էր ստեղծում հայերի համար: Դա պանթուրքիզմը (համաթուրքականությունը) կամ պանթուրանիզմը (համաթուրանականությունը) էր, մի վարդապետություն, որը շարունակում է մինչև օրս բազմաթիվ ազդեցիկ հետևորդներ ունենալ թուրքական կառավարող շրջաններում: Սերժ Զինվուսկին այսպես է նկարագրում այդ գաղափարախոսությունը: «Նախ օսմանյան թուրքը պետք է բազմապատկեն իրենց ջանքերը սեփական կայսրությունում և թուրքացնեն իրենց փոքրամասնություններին: Երկրորդ՝ «պանթուրքիզմ» փուլը, երբ օսմանյան թուրքերի արյունակիցները՝ Ռուսաստանի և Պարսկաստանի ադրբեջանցները (թուրքալեզու ժողովուրդների հարավարևելյան խումբը) պետք է մտնեն թուրքական պետության կազմի մեջ: Երրորդ փայլը պետք է լինի Ասիայի բոլոր թուրանական ժողովուրդների համախմբումը թուրքական միջուկի շուրջը:

Հայտնի պանթուրքիստ Զիա Գյոքալիի կենսագիրը գրում է. «Գյոքալի, Հային է եղիքը<sup>1</sup> և նրանց գինակիցները երազում էին բոլոր թուրքերի միավորումը մեկ միապետի գլխավորությամբ, որը կարող է հետ բերել Աթիլայի, Չինգիզ խանի և Լեռն Թեմորի ժամանակները»: Պանթուրքիզմի հետևանքները հայերի համար կարող էին չափազանց լուրջ լինել: Նրանք կայսրության այն փոքրամասնություններից էին, որոնք չեն ցանկանա թուրքացիներ, ապավինելով իրենց հնագույն եկեղեցուն՝ որպես անհաջանության խորհրդանիշ: Ավելին, նրանց կովկասյան հայ ազգակիցները կանգնած էին պանթուրքիզմի «երկրորդ փուլի»՝ դեպի Բաքվի ճավթը տանող ճանապարհին:

Այս տեսաբանումը այնքան էլ անվեաս մտամարզանք չէր, ինչպես և Աղոփ Հիտլերի արհականության առասպելը: 1914-ին օսմանյան թուրքիան կառավարում էր երիտրուրքական բռնապետների եռապետությունը և պանթուրքիզմը նրանցից ամենազորեղի՝ Էնվեր փաշայի անձնական համոզմունքն էր: Նրանցից երկրորդը՝ Թալեբաշը, ավելի պակաս տեսաբան էր, բայց բյուրոկրատական դամանության ավելի մեծ փորձառություն ուներ: Երրորդը՝ Զեմալը, ավելի հեզ բնավորություն ուներ, բայց նույնպես ընդունակ էր ծայրաստիճան դամանությունների:

<sup>1</sup> Հային եղիք (1884—1964), թուրք գրող, պատմաբան:

## ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ «ԿԵՐՁԱԿԱՆ ԼՈՒՇՈՒՄԸ»

Թուրք պատմաբանները սովորաբար պնդում են, թե այն ժամանակվա երիտրուրքական կառավարությունը ստիպված էր դիմել հայերի գանգվածային տեղահանության, որովհետև ամբողջ հայ բնակչությունը մի «հինգերորդ շարասյուն»<sup>1</sup> էր, որը համակրում էր արևմտյան դաշնակիցներին և Ռուսաստանին: Այս մեղադրանքը հազիվ թե լիակատար ճշմարտություն լինի: Բազմաթիվ խոստովանություններ կան այն մասին, որ հայերը օրինապահ էին Օսմանյան կայսրության հանդեպ (մասնավորապես հայերի ծառայությունը օսմանյան քանակում), սակայն վերջին քաղաքուն տարիները հայերին սովորեցրել էին գգուշավոր լինել թուրքական ամեն մի կառավարության նկատմամբ, քանի որ նրանցից և ոչ մեկը չէր ապացուցել, որ այն նաև ի ր ե ն ց՝ հայերի կառավարությունն է:

Առաջին համաշխարհային պատերազմի ճիշտ նախօրեին (1914-ի աշնանը) Դաշնակցություն կուսակցությունը մի կարևոր խորհրդաժողով գումարեց Երգորումում, որի ժամանակ երիտրուրքերի ներկայացուցիչները դաշնակցականներին առաջարկեցին խոռվություն հրահրել սահմանից այն կողմ՝ ոռոսական Կովկասում: Փոխարենը՝ Թուրքիան կատեղի ինքնավար Հայաստան իր հովանավորության տակ: Դաշնակցականները մերժեցին այդ առաջարկը, փոխարեն թուրքիային առաջարկելով՝ չեզոքություն պահպանել մոտավոր կոնֆլիկտի դեպքում, բայց եթե թուրքիան պատերազմի մեջ մտնի, ապա ամենուր հայերին խորհուրդ կտրվի՝ կատարել օսմանյան քաղաքացու իրենց պարտը:

Երբ պատերազմը պայլեց, թուրքահայերի մեծ մասը մնաց օրինապահ օսմանյան քաղաքացի: Մոտ 250.000 հայ ծառայության կանչվեցին օսմանյան քանակ: Երբ Էնվեր փաշան պարտություն կրեց ոռաներից Սարիղամիշի մոտ<sup>2</sup>, հայ գինվորներն էին, որ փրկեցին նրան սպանվելուց կամ գերվելուց: Մինչդեռ, որոշ արևմտահայեր թուրքիայից անցան Ռուսաստան և միացնաց արական իշխանություններից խորխուսվող կամավորական ջոկատներին: Կիլիկիայում հայ դեկավաները ապստամբություն հրահրեցին թուրքական կառավարության դեմ, բայց ապարդյուն:

Ծուտով, սակայն, իրադարձությունները ողերգական ընթացք ստացան: Օսմանյան քանակում ծառայող թուրքահայերը գինաթափ արվեցին և վերածվեցին աշխատանքային գումարտակների, որտեղ նրանք սովա-

<sup>1</sup> Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ «հինգերորդ շարասյուն» էին կոչում տարրեր երկրներում գործող ֆաշիստական գործակալներին:

<sup>2</sup> Խոսքը 1914—15-ին Սարիղամիշի օսեբրացիայի մասին է, որի ընթացքում Էնվերի գլխավորած 110 հզ. քանակ գլխովին ջախջախվեց:

մահ եղան կամ սպանվեցին: 1915-ի ապրիլի 24-ին Ստամբուլի 254 հայ մտավորականեր ծերքակալվեցին և աքսորվեցին Այաշի և Չանգըրի հանաճմեր և գրեթե ամբողջովին սրի քաշվեցին տեղական իշխանությունների կողմից:

Զքվելով այդ երկու սիր ի գենք կրելու ընդունակ բնակչությունից (բանակում), ապա նաև իր մտավոր ընտրանուց, այլևս առանց դեկավարության մնացած հայ համայնքը ամենայն դաժանությամբ սրի քաշվեց թուրքական իշխանությունների կողմից: Թուրքահայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների և գյուղերի հայ բնակչությունը վտարվում էր: Առավել դառը ճակատագիր էր բաժին ընկեր կանանց ու երեխաներին, որոնք հարկադրաբար՝ ոտքով, խումբ առ խումբ, քշվում էին դեպի հարավի (Հյուսիսային Սիրիա) կիզիչ անապատները: Սարսափելի մահվան դատապարտված այդ կարավաններից քչերը ողջ մնացին. դրանցից հետո հետևս ամիսներ շարունակ Անատոլիայի ճանապարհներին կարելի էր տեսնել դիակներ ու կմախքներ, որոնք դարձել էին անգների բաժին: Տրախզում տեղի հայերին նավակներով տարան Աև ծով և ջրախտեղ արեցին: Շատերին էլ դուրս տարան բնակավայրերից և Ետսեցին Կամախի կիրճը, Երզնկայի մոտ:

Նրանք, ովքեր ողջ մնացին դեպի հարավ բռնի տեղահանությունից հետո, տեղավորվեցին խոշոր համակենտրոնացման ճամբարներում, որոնցից ամենասարսափելին Դեյր էզ Զորինն էր, Սիրիայում, ուր նրանք սովոր մատնվեցին և ամենասադիստական ձևով սրախողնող արվեցին պահակախմբերի կողմից: Փոքրաթիվ մարդկանց հաջողվեց բարեկամաբար տրամադրված արաբների օգնությամբ գաղտնի փախչել Հյուսիսային Սիրիայի գյուղերը: Գաղթականական ճանապարհները շատ հեռու էին Ռուսաստանից և Բալկաններից, և միայն Մուսա լեռան շրջակա գյուղերից (Անտիոքից ոչ հեռու) մի երկու հազար հոգու հաջողվեց փրկվել ֆրանսիական ռոզմանավերի օգնությամբ: Մուսա լեռան դեպքերը նյութ են ծառայել Վերֆելի վեպի<sup>1</sup> համար:

Կանոնավոր և հմտորեն իրականացված այս ցեղասպանությունը կատարվեց կառավարական բարձր մարմինների որոշմամբ: Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան ամերիկան դեսպան Մորգենթաուին պարծենում էր, որ առաջիկա հիսուն տարում այլևս Հայկական հարց չի լինի: Կառավարությունը ինքը երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ձեռքին մի հասարակ գործիք էր, կուսակցություն, որի տիրապետող գաղափարախոսությունը պանթուրքիզմն էր: Այդ զանգվածային սպանությունները «մեկուսի միջադեպերի» բնույթ չեին կրում.

<sup>1</sup> Խոսքը ավտորիացի գրող Ֆրանց Վերֆելի (1890—1945) «Մուսա լեռան 40 օրը» (1934) հանրահայտ վեպի մասին է:

դրանք ամիսներ, գուցե և տարիներ առաջ մանրամասն մտածված և ծրագրված էին: Դրանք ոչ էլ կրոնական անհանդուրժողականության հետեւ վանք էին, թեպես երիտթուրքերը գյուղական մոլլանների օգնությամբ վարպետորեն գրգռել էին մահմեդական խուժանի մոլեռանդրությունը: Սակայն գտնվեցին նաև մահմեդական դեկավարներ, որոնք ցնցված էին ձեռնարկված միջոցներից և բողոքեցին դրա դեմ:

Ո՞վքեր էին իրականացնում եղենը: Որոշ դեպքերում հասարակ ուժիկանները: Կառավարությունը հավաքագրել էր նաև մի հատուկ կազմակերպություն («Թե 2 քիլար թիվ Սախուն և ուս ե»), որը գերազանցապես բաղկացած էր Արևմտյան Անատոլիայի բանտերից ազատ արձակված քրեական հանցագործներից:

Ոքա՞ն հայեր սպանվեցին: Դեկում Բրայսը<sup>1</sup> 1915-ի հոկտեմբերի 6-ին, եղույթ ունենալով Լորդերի պալատում, մատնանշեց՝ «շուրջ 800.000» թիվ: Կոտորածը շարունակվեց նաև 1916-ին և դեռ հետո: 1918-ի թուրքական առաջխաղացումը դեպի ոռուսական Կովկաս զոհերի թիվը պելացրեց բազում հազարներով: Այն ժամանակ թուրքերը որպես սրախաղերի թիրախ էին օգտագործում հենց զաղթականներին: Եթե օսմանյան բանկը 1918-ի աշնանը գրավեց Բաքուն, սրի քաշվեց ևս 15.000 հայ<sup>2</sup>: Հազարավոր մարդիկ մեռն սովոր ու համաճարակներից արդեն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո: Ավելի ուշ, 1921-ին, բրիտանացի մի գընդապետ երգորումում վկա եղավ հայ գերիների սովամահության և սպանությունների:

Մեզ հայտնի է, որ մինչև 1914-ը թուրքիայում ապրում էր ավելի քան 2 միլիոն հայ: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին այս թիվը հազիվ թե գերազանցեր 100.000-ով: Այսպիսով, վստահությամբ կարելի է ասել, որ զոհված հայերի թիվը շուրջ 1.500.000 է. Մօացած կես միլիոնը դարձավ հայենազուրկ գաղթական, որոնց սերունդներին, իրենց ողբերգության հուշերով, այսօր կարելի է հանդիպել աշխարհի շատ երկրներում:

<sup>1</sup> Բրայս (Brayse) Ջեյմս (1838—1922), անգլիացի պատմաբան, պետական գործիչ, Հայկական հարցին և հայերին նվիրված բազմաթիվ աշխատությունների հեղինակ:

<sup>2</sup> Այլ տվյալներով 30 հզ.:

## ԸՆԹԱՑԻԿ ՎԻՃԱԿԸ. ԺՈՂՈՎՐԴԻ ՎԵՐԱՇՆՈՒՆԴԸ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆ, 1918—1920

Հայ ազգի վերազրունքի տարեթիվը, գոմե խորհրդանշական կերպով, համարվում է 1918-ի մայիսի 28-ը, երբ հոչակվեց անկախ Հայաստանի Հանրապետությունը։ Այդ անկախության նախապատմությունը թերևս հայոց պատմության ամենաողերգական և սխրալի էջերից մեկն է։

1917-ի բոլշևիկյան հեղափոխությունից հետո Ոռուսաստանը դուրս եկավ առաջին համաշխարհային պատերազմից։ Լեօնից ու Տրոցկին ստորագրեցին Բրեստ-Լիտովսկի հաշտությունը, որը կովկասյան ժողովուրդներին հանձնեց թուրքերի և նրանց գերմանական դաշնակիցների ողորմածությանը։ Հայերը ֆեղերացիա կազմեցին վրացիների և ադրբեջանցիների (թաթարներ, ազերիներ) հետ, սակայն շուտով զգացին, որ խարված են։ Վրացիները նույնիսկ զայտնի գործարի մեջ մտան թուրքերի հետ՝ ուղամավարական կարևոր հաշնակություն ունեցող Կարսի ամրոցը հանձնելով թշնամուն։ Նեկավարվելով այնպիսի քաջարի գեներալների և հայդուկային հրամանատարների կողմից, ինչպիսիք էին Նազարբեկովը<sup>1</sup>, Դրոն<sup>2</sup> և Անդրանիկը<sup>3</sup>, հայերը 1918-ի մայիսի 22—24-ին թուրքերին հականարված տվեցին Սարդարապատի մոտ։ Թուրքերը այն ժամանակ մոտեցել էին Երևանին, գրավել Բաքու։ Դա դաշնակիցների առջև Օսմանյան կայսրության կապիտուլացիայից, այսինքն՝ Մոլորոսի 1918-ի հոկտեմբերի 30-ի զինադադարից մի քանի շաբաթ առաջ էր։

Բրիտանական նախնական աջակցության շնորհիվ անկախ Հայաստանի տարածքն այն ժամանակ շատ ավելի ընդարձակ էր, քան ներկայի խորհրդային Սոցիալիստական Հայաստանի տարածքը, որովհետև ընդգրկում էր նաև Կարսն ու Արդահանը, ինչպես և ներկա Արևելյան Թուրքիա-ի որոշ մասերը։ 1918—19-ի ձմեռվա տվահարությունն ու համաճարակը

<sup>1</sup> Նազարբեկով թովմաս Հովհաննեսի (1855—1928), ոռուսական բանակի գեներալ մարտիրոս։

<sup>2</sup> Դրոն—Կանայան Դրաստամատ Մարտիրոսի (1883—1953), դաշնական գործիչ, Հայաստանի Հանրապետության նախարար (1920)։

<sup>3</sup> Անդրանիկ—Օզանյան Անդրանիկ Թորոսի (1867—1927), հայ ազգային հերոս, ուղամական գործիչ, ոռուսական բանակի գեներալ-մայոր (1918-ից)։

1915-ի սարսափերից պակաս չէին։ Կես միլիոն գաղթականներ՝ մերկ ու բռկոտն, թափառում էին երկրում կամ պատսպարվում անձավներում ու գետնատներում։ Նրանք սնվում էին խոտով կամ ինչով պատահեր, մինչ մահը կազատեր երանց այդ թշվառությունից։ Թիֆլիսում բրիտանական բարձրաստիճան կոմիսար սըր Հարի Լյութը իր ինքնակենագրականում («Ք ա դ ա ք ն ե ր ը և մ ա ր դ ի կ») նկարագրում է իր երեք այցելությունները Հայաստան այդ ճգնաժամային շրջանում։ 1919-ի հոկտեմբերին նա Երևանում գտավ միայն 40 սպա և զինվոր, որոնք համագետաստ էին կրում և կարող էին ծածկել իրենց մերկությունը։ զինվորական մի նվազախումբ ցնցուիներ հագած՝ խրոխտ կեցվածքով փորձում էր կատարել «Աստված պահապանի թագավորին»։ Լյութը շարունակում է. «Կիսավեր ու անհրապույր քաղաքում վիստում էին թուրքահայաստանից փախած սովահար գաղթականները, ամեն օր մենք ականատես էինք լինում այդ դժբախտ մարդկանց մահվան, մարդիկ, որ մահանում էին ուղղակի փողոցում՝ հյուծախտից, սակավարյունությունից և ուտեկիք պակասությունից։ Դժբախտ կառավարությունը անում էր ամեն հնարավորը՝ օգնելու այդ թշվաներին, բայց դրա համար այն չուներ ո՞չ անհրաժեշտ անձնակազմ, ո՞չ էլ միջոցներ՝ դրամ կամ պնդամթերք...»։

Ավելի քան երկու տարի հայերը կառչել էին իրենց անկախությունից, պատկերավոր ասած՝ «like grim death»<sup>1</sup> (անգլ. բոլոր ծիգերով)։ Նրանք որոշ հիմք ունեին իրենց «մեծ սպասարկների» համար։ 1917-ի դեկտեմբերի 20-ին Լիոյդ Չորջը պառլամենտում արտասանած իր ճառում, Հայաստանը նկարագրելով որպես անմեղ արյան մեջ թաթախված երկիր, հայտարարել էր, որ այլև հետ չի գա թուրքերի շանթահարող բռնատիրությունը։ 1918-ի գարնանը Լիոյդ Չորջը կրկին հայտարարեց, որ Բրիտանիան երբեք չի մոռանա իր պատասխանատվությունը հայերի հանդեպ։ Փրանչիական նեկավարները նույնպես նման խոստումներ տվեցին։ Ամերիկյան պրեզիդենտ Վուդրո Վիլսոն անձնական խորին համակրանքով էր վերաբերվում հայկական դատին։ Իր տասնչորս կետերից<sup>2</sup> 12-րդում նա հավաստում էր. «Թուրքական տիրապետության տակ գտնվող մյուս ազգություններին պետք է երաշխավորվի կյանքի ինակատար ապահովություն և ինքնուրույն զարգացման բացարձակ հնարավորություն»։

Ապավինելով այս խոստումներին, հայ դեկավարները Փարիզի հաշտության կոնֆերանս ժամանեցին ծովից ծով։ Սև ծովից մինչև Միջերկրական ծով տարածվող Հայաստան ստեղծելու երազային գաղափարով։ Այս երազանքները իրենց արտացոլումն էին գտել Հայաստանի վերաբերյալ

<sup>1</sup> Անգլ. դարձվածք—բառացի դաժան մահվան գնու։

<sup>2</sup> Խոսքը ԱՄՆ-ի պրեզիդենտ Վ. Վիլսոնի՝ առաջին համաշխարհային պատերազմի վերջում (1918-ի հունվար) հոչակած հաշտության պայմանների մասին է։

Վիլսոնի գծած քարտեզում, որն ընդգրկում էր Արևելյան Թուրքիայի և Կենտրոնական Անտառիայի ընդարձակ շրջաններ: Այս պահանջի ակնառու թուրքականը, անշուշտ, այն իրողությունն էր, որ թուրքերի գործողած 1916-ի ցեղասպանության հետևանքով Թուրքիայի հայարձնակ վայրերում, որտեղ մի ժամանակ հաշվվում էր ավելի քան 2 միլիոն հայ, հազիվ մնացել էր հարյուր հազար հոգի:

1920-ի ընթացքում աշխարհի իրավիճակը այնպիսի դրամատիկ փոփոխություն կրեց, որ այլև իմաստագրկեցին դաշնակից տերությունների Հայաստանին տված խոստումները: Պատերազմից հոգնած անզիհացիները հեռացան Կովկասից, իսկ Խորհրդությունը Դրիմում ջախջախեցին զեներայ Վրանգելի ոռական սպիտակ բանակը: Վատառողջ Վիլսոնը իր առջև գտավ թշնամական և մեկուսացման քաղաքականության հետամուտ կոնգրես: Թուրքերը Քենալ Ալաթուրքի գլխավորությամբ համայն աշխարհը զարմացրեցին իրենց ազգային դրամատիկ վերածննդով, որն իր նապատակներին հասավ 1922-ին, երբ Երանք հետ գրավեցին Զայուոնիան (Իզմիր) և երկրից վտարեցին անզիհացիների աջակցությունը վայելող հովերին:

Թուրքերը շատ արագ փոխըմբոնում գտան Լենինի հետ: 1920-ի սեպտեմբերին թուրքական զորահրամանատար Բյազիմ Կարաքերիրը անցավ 1914-ի ոսւս-թուրքական սահմանագիծը և գրավեց Կարսի մարզը: Սորբեցանից Հայաստան մտած բոլշևիկները Երևանում հոչվեցին (1920-ի նոյեմբերի 29 — դեկտեմբերի 2-ին)՝ Խորհրդային հանրապետություն: Բուռն վիճաբանություններից հետո, նոյեմբերի 30-ի ուշ գիշերը, դաշնակցական կառավարությունը որոշեց խաղաղ կերպով իշխանությունը հանձնել բոլշևիկներին և հնչացես առածն է ասում, Երանք գերադասեցին «կարմիր լինել, քան մեռած»:

Կարսի և Արդարանի անցումը Թուրքիային վերջնականապես ծևակերպվեց Կարսի պայմանագրով (1921-ի հոկտեմբերի 13-ին): Ուշագրավ էր նաև այն, որ այդ պայմանագիրը նախատեսում էր Նախիջևանի շրջանի տարածքի, որը միջնադարյան Հայաստանի անքածան մասն էր, բայց ավելի ուշ վերաբերեցվել էր հիմնականում թաթար-ազերիներով, միացնումը Ադրբեջանի Խորհրդային Հանրապետությանը՝ բարու կենտրոնով: Նախիջևանի ԽԽՍՀ-ը Հայաստանի տարածքով լիովին անջատված է Խորհրդային Ադրբեջանից, և այսօր, ավելի քան կես դար հետո, իրենից ներկայացնում է մի չարագույշ անկալ Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի միջև: Ղարաբաղը, նոյնական մի հայրենասեր հայկական շրջան, անջատվեց Հայաստանից և որպես անկալ մտցվեց Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՏԱՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՒՆ

Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը, որ հաստատվեց 1920-ի վերջին, իր ուղին սկսեց անհամեմատ ավելի բարենպատ պայմաններում, քան անկախ Հայաստանը երեք տարի առաջ: 1917-ի համեմատ տնտեսական պայմանները փոքր-ինչ բարելավվել էին: Տեղացած առատ ծյունը փակել էր ճանապարհները՝ մեկուսացնելով Հայաստանը դրսի աշխարհից: Հեղեղում կամ հեղափոխական կոմիտեն որոշեց «բռնագրավել և անհատ մարդկանցից վերցնել սննդամթերքը քաղաքաներում և հացահատիկը գյուղացիներից»: Մինչև ատամները գինված գինվորները տնից տուն էին անցնում, ունեար թե ունեցուրկ, և բռնագրավում ամբողջ բրինձը, ցորենը և գարին, կարագն ու կաթնասերը: Կոմունիստները «առգրավում» էին գյուղացիներին պատկանող մանր ու խոշոր եղերավոր անասունները, անձնական սեփականությունը, ասենք գորգեր, ակնեղենը, նոյնինկ վերմակները, վարսավիրի սպասքը, մեղվի փեթակները և երաժշտական գործիքները:

Այս եքստեները և սովոր բնակչության ընդհանուր հուսախարությունը շատ շուտով խոռվացյան տեղիք տվեցին, որը գյասավորում էին Դաշնակցություն կուսակցության ողջ մնացած դեկավարները: Խոռվարարները արշավեցին Երևանի վրա և տապալեցին տեղի խորհրդային վարչակարգը: Հարևան Վրաստանում կարմիր բանակը 1921-ի փետրվարին տապալեց տեղի մեծչմիկյան կառավարությունը, իսկ 1921-ի ապրիլի 2-ին դաշնակցականներից ազատագրեց Երևանը: Զանգեզուրի լեռնային շրջաններում մի քանի հազար դաշնակցականներ շարունակեցին հուսահատ դիմադրությունը, ապա անցան սահմանը և գնացին Պարսկաստան:

Խորհրդային Հայաստանը նոյնինկ ավելի փոքր է, քան անկախ Հայաստան էր, և ընդգրկում է պատմական Մեծ Հայքի միայն տասներորդ մասը: Կարսը, Արդարանը, Խգդիրը 1921-ից վերատին անցան Թուրքիային: Տեղական հայրենասիրությունը Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում վերացնելու համար Ստալինը դրանց տարածեները միավորեց միացյալ Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ: Այս վիճակը շարունակվեց այնքան, մինչև որ տեղական դեկավարությունը ամբողջովին գտվեց գնդակահարություններով և աքսորներով: Հանրապետությունները այդպես միացյալ, ինչնուրուցնությունից զուրկ մնացին մինչև 1936-ի ստալինյան սահմանադրությունը:

Խորհրդային դեկավարությունը Ստալինի գլխավորությամբ որոշեց Անդրկովկասը, հատկապես Վրաստանը ու Հայաստանը, դարձնել օրինակելի: Նոյնք Հայաստանը վերակառուցեցին այն հաշվով, որպեսի այն դարձնեն մի յուրօրինակ Սեքքա համայն սփյուռքահայության համար: Մինչ անկախ Հայաստանի դաշնակցական դեկավարները դեմ էին խոր-

հըրդային հեղաշրջմանը, մի ամբողջ շարք հայ հեղափոխականներ հանդես եկան որպես իսկական լենինյաններ՝ Ստեփան Շահումյանը՝ Բարձի 26 կոմիսարներից մեկը, որը սպանվեց Անգլիայի աջակցությունը վայելող տարրերի ձեռքով, 1918-ին, Կամոն (Տեր-Պետրոսյան), ում հանդուզն բոՅագրավումները լրացնում-համարում էին բոլշևիկների Փոնտերը և Ա. Ռ. Միկոյանը՝ Ստալինի մաքրագարդումներից գերծ մնացած փոքրաթիվ հին բոլշևիկներից մեկը:

Արտասահմանյան նպաստամատուց կազմակերպությունները, որ ստեղծվել էին Հերբերտ Լուվերի<sup>1</sup> նման մեծահոգի մարդկանց ջանքերով, հատուկ ուշադրություն էին դարձնում Հայաստանին: Սարսափազու Զեկան կազմակերպեց հասարակական այնպիսի ապահովություն, որի պայմաններում հայ գյուղացուն այլևս չէին սպառնում ո՞չ թուրք զինվորը, ո՞չ էլ քորդ ավագակը: Լենինյան տնտեսական նոր քաղաքականությունը (ՆԵՊ) ստեղծեց ճկուն պայմաններ, երբ մանր խանութպաններն ու արհեստավորները կարող էին համեստ կենսապայմաններ ապահովել իրենց համար, և այսպես մինչև 1928 թվականը, երբ սկսվեց հնգամյա պլանների կամպանիան:

Խորհրդային շրջանում հայ մշակույթի վերածննդի մի դրսնորումը եղավ Երևանի համալսարանի հիմնադրումը 1921-ին<sup>2</sup>: Երկու տարի անց, 1923-ին, նշանավոր հայ ճարտարապետ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի փոխնախագահ Ալեքսանդր Թամանյանը Սոսկվայից ուղարկվեց Երևան՝ քաղաքի վերակառուցումը ժամանակակից ոգով նախագծելու համար, հաշվի առնելով քաղաքաշինության և ճարտարապետության ասպարեզում հայերի ունեցած ավանդույթները:

Խորհրդային իշխանության օրոք Հայաստանի հիրավի վերածննդի մի կարևոր ապացույցն է այն փաստը, որ հայերենը առաջին պաշտոնական լեզուն է հանրապետությունում՝ ոռուերենի կողքին: Խորհրդային Հայաստանը ունի նաև առաջնակարգ հանրակրթական համակարգ: Խորհրդային ակադեմիայի հայկական մասնաճյուղը հիմնվել է 1935-ին, իսկ 1943-ից դարձել ինքնուրույն ակադեմիա: Ակադեմիային կից գործում է Բյուրականի աստղադիտարանը, որի հեկավարն է աստղագետների միջազգային շրջանում քաջ հայտնի ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը: Հայերի համար բացառիկ հնարավորություններ են ստեղծվել՝ գնահատելու իրենց ունակությունները ԽՍՀՄ-ում, որի համար լայն ասպարեզ է բացված 250-

<sup>1</sup> Խոսքը ամերիկան հայտնի քաղաքական գործիչ և խոշոր արդյունաբերող Հերբերտ Բլարկ Լուվերի (1874—1964) գլասպորած (1912—23) «Ամերիկյան օգնույթյան վարչության» (ԱՐՍ) և նրա շրջանակներում գործած «Մերձավոր Արևելքում Ամերիկյան օգնության կոմիտեի» (Ամերկում) բարեգործական հաստատության մասին է:

<sup>2</sup> Իրականում Երևանի համալսարանը հիմնադրվել է 1920-ին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերով:

միջինմանոց երկրի աշխատանքային և տնտեսական շուկայում: Ակադեմիկոս Հովհաննեսի Օրբելին դարձավ Լենինգրադի Էրմիտաժ թանգարանի տնօրին, նրա եղբայր Լուս Օրբելին՝ Պավուլի անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրին: Ակադեմիկոսներ Արգումանյանի, Կոնույանցի, Սիսակյանի և Ալիխանյանի անունները իսկապես միջազգային հոչակ են ստացել: Երաժշտության ասպարեզում քաջ հայտնի է նշանավոր կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի անունը:

Խորհրդային Հայաստանի տնտեսական և մշակութային վերածնունդը սուր բանակեց առաջ թերեց ափյուռքահայերի շրջանում, հատկապես համաշխարհային երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում: Բազմաթիվ հիմ դաշնակցականներ Խորհրդային Միությունը համարում էին մի վայեմի թշնամի, որին իր դաժանությամբ գերազանցել է միայն թուրքը: Ումանք էլ գտնում էին, որ ազգային տաճ հիմնումը Խորհրդային Հայաստանում միակ հույսն է՝ պահպանելու նրա ազգային նկարագիրը XX դարի դաժան և մրցակցական պայմաններում: Երբեմն այս մտադրությունը ողբերգական ձևեր է ընդունել, երբ, օրինակ, հայ եկեղեցական դեկապար գործիչներից մեկին կասկածեցին խորհրդանետ համակրանքի մեջ և սպանեցին ծիսակատարության ժամանակ Նյու Յորքի եկեղեցում: Սակայն, այսօր դաշնակցական մամուլը Բուտոնում Խորհրդային Հայաստանի գործերին հետևում է համակրանքով և աշալուր հետաքրքրությամբ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո Ստալինը հանդուզ քաղաքականության դիմեց Անդրկովկասում՝ նպատակ ունենալով նվաճել Իրանական Ադրբեյջանը, Քրդստանը և Թուրքահայաստանի որոշ մասեր: 1945-ից ի վեր սփյուռքահայերին հորդորեցին տուն վերադառնալ՝ խոստանալով հատուկ արտոնություններ: Սուրբ Էջմիածնի (Խորհրդային Հայաստանում) կաթողիկոսի թափուր պաշտոնի ընտրությունները տեղի ունեցան ամբողջ աշխարհի հայության պատվիրակների մասնակցությամբ: Հայկական արդյունաբերությունը նպառակասար կերպով առաջ էր մղվում: Կառուցվում էին ժամանակակից գործարաններ և հիդրոէլեկտրակայաններ (ավելի մանրամասն կարելի է տեղեկանալ Բրիտանիկա հանրագիտարանի վեջին հրատարակության «Հայկական ԽՍՀ» հոդվածից, որը գրել է Խորհրդային տնտեսագետ դ.-ր Ա. Ա. Մինցը):

1945-ին հաջորդած տարիները ծանր էին: Շատ սփյուռքահայեր որոշեցին վերադառնալ տուն: 1950-ականներին Խորհրդային Հայաստանը վերելք ապրեց տնտեսության և ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ասպարեզում: Բնական աճին գուգընթաց, որը հետևանք էր բժշկական սպասարկման բարեկավման, Հայաստանի բնակչությունը աճեց նաև

<sup>1</sup> Հեղինակները նկատի ունեն ամերիկահայոց առաջնորդ Ալեքսանդր Շահինցի սպանությունը դաշնակցականների կողմից 1933-ին:

ի հաշիվ թուրքիայից, Իրանից և Լիբանանից (Եղանակ Միացյալ Նահանգներից) Երգաղյած հայերի: Բերենք մի քանի տվյալներ 1975-ին Մոսկվայում հրատարակված «ԽՍՀՄ-ը թվերով — 1974» ռուսերեն գրքից, որոնք շատ պերճախոս են:

#### Խորհրդային Հայաստանի բնակչությունը

1940	1.320.000
1959	1.763.000
1966	2.239.000
1970	2.492.000
1975	2.790.000 <sup>1</sup>

Հայերը ազգագրական մեծամասնություն են կազմում (88%) բնակչության մեջ, քիչ թե շատ նշանակալի փոքրամասնություններ են՝ աղբյուջանցիները կամ ազերի թաթարները (6%)<sup>2</sup> և ռուսները (3%):

Հայկական ԽՍՀ-ում հայերը կազմում են մոտավորապես 2,5 մլն մարդ<sup>3</sup>: Զգայի թվով հայեր են բնակվում նաև Խորհրդային Միության այլ շրջաններում: Օրինակ, Վրաստանի և Ադրբեյջանի<sup>4</sup> հայ համայնքները կես միլիոնից ավելի մարդ են հաշվվում յուրաքանչյուրում: Բնակչության խորությունը թաթարների կողմից կառավարվող վիճելի Նախիջևանի ԽԽՍՀ-ում մոտավորապես Հայկական ԽՍՀ-ի բնակչության խորության կեսն է կազմում (Հայկական ԽՍՀ-ի բնակչության խորությունը 95 մարդ է մեկ քառ. կմ վրա): Մինչդեռ Նախիջևանի ԽԽՍՀ-ի 5.500 քառ. կմ տարածքի համար մենք ունենք հետևյալ տվյալները.

1940	131.000
1970	202.000
1975	224.000 <sup>5</sup>

Այսպիսով, Խորհրդային Հայաստանի բնակչության մեծ ածը նորից ասպարեզ է բերում Նախիջևանի ԽԽՍՀ-ի միացման հարցը, որը առկա է նաև գերազանցապես հայերով բնակեցված Լեռնային Ղարաբաղի մարզի համար: Հայ-ադրբեյջանական ներհամայնքային ընդհարությունը ու հուզությունը անսովոր չեն: Հայերի մեծամասնությունը բացահայտ կերպով հանդես է գալիս Բաքվի ադրբեյջանական կառավարության համար՝ Հայկական արդյունաբերությունը կենսունակ չի լինի առանց Մոսկվայի հայկացությունից հայերի կողմից՝ Մեքքան դարձնելու Կրեմլի քաղաքականությունից: Հայաստանի արդյունաբերության արտադրանքը չի կարող սպառվել առանց խորհրդային ընդհարձակ շուկայի առկայության, քաղաքի և գյուղի բնակչությունը չի կարող յոլա գնալ առանց ուկանական ցորենի:

Դեպք կիրառող խտրականության դեմ (ուշագրավ է, որ այս խոսքերն ասված են տակավին մինչև 1988-ի փետրվարին հաջորդած դեպքերը — խմբ.): Մասնավորապես, հատկանշական է Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երևանի արագ աճը, քաղաք, որը իր կենսագրությունը սկսել է 2750 տարի առաջ ուղարտական եղերունի բերդից:

#### Երևանի բնակչությունը

1917	34.000
1926	65.000
1939	204.000
1970	767.000
1975	899.000 <sup>1</sup>

Այս թվերից երևում է, որ Երևանում է այժմ բնակվում Հայկական ԽՍՀ ամբողջ բնակչության մեկ երրորդը: Նման արագ ուրբանացման հետևանքը լինում է այն, որ գյուղացիները մեծ չափերով բնակություն են հաստատում քաղաքներում՝ պահանջենով քաղաքային կենսապայմաններ ու հարմարություններ: Այս արհեստական վիճակը Հայաստանում գալիս է նաև այն քանից, որ արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած է մայրաքաղաքում, իսկ մյուս կողմից՝ այդ երկիրը քարքարոտ ու անհարմար է գյուղատնտեսության համար: Հայկական արդյունաբերությունը կենսունակ չի լինի առանց Մոսկվայի հայկացությունից հայերի, իսկ դա բխում է Հայաստանը բոլոր հայերի ազգային տունը՝ Մեքքան դարձնելու Կրեմլի քաղաքականությունից: Հայաստանի արդյունաբերության արտադրանքը չի կարող սպառվել առանց խորհրդային ընդհարձակ շուկայի առկայության, քաղաքի և գյուղի բնակչությունը չի կարող յոլա գնալ առանց ուկանական ցորենի:

Խորհրդային Հայաստանը, անշուշտ, միակուսակցական կոմունիստական պետություն է, քաղաքական կախման մեջ է Կրեմլի թելադրանքից, որը կարող է հայերին ուղղել ուզած ուղղությամբ: Հայերը փոքր-ինչ ավելի արտոնյալ են, քան խորհրդային մյուս ազգերը՝ ունենալով քավականին բարձր կենսամակարդակ, Մեքքան Արևելքի ստանդարտներին համապատասխանող բժշկական սպասարկում և գերազանց կրթական պայմաններ: Հայերը շատ են ճանապարհորդում արտասահմանում, և գործում է Երևան—Բեյրութ օդային գիծը: Այս տողերի հեղինակները հանդիպել են կրկնակի քաղաքացիությամբ շատ հայերի, ոմանք միաժամանակ ունեն խորհրդային և բրիտանական անձնագրեր:

<sup>1</sup> 1979-ի մարդահամարի տվյալներով՝ 3031 հզ., 1989-ին՝ 3283 հզ.:

<sup>2</sup> Այսօրվա դրույթամբ Հայաստանում գրեթե աղորեցացիներ չկան:

<sup>3</sup> 1991-ի դրույթամբ՝ ավելի քան 3 միլ.:

<sup>4</sup> Այսօրվա դրույթամբ՝ մոտ 200 հզ. (ՂԴԽ-ում և Շահումյանի շրջանում):

<sup>5</sup> 1989-ին՝ 259 հզ.:

Խորհրդային Հայաստանի մեկ շնչին ընկնող եկամուտը մոտ 500 դրամ է («Nove and Newt», 1967), ավելի քան համապատասխանաբար Թուրքիայում՝ 149 դրամ, ԽՍՀՄ-ում՝ 276, կամ Հունաստանում՝ 292 դրամ:

Այն իրողությունը, որ սրբազն Արարատ լեռը այժմ գտնվում է Թուրքիայում և տեսանելի է Խորհրդային Հայաստանի շատ կողմերից, տևական ցավ է պատճառում հայերին և երեմն-երեմն տեղիք տալիս բուն ցույցերի: Խորհրդային իշխանությունները ճնշում են դրանք և պարբերաբար թուրքերին հավաստում իրենց խաղաղ մտադրությունները: Խախիցւանը, Ղարաբաղը, ինչպես նաև Վրաստանի հարավային որոշ մասերը վերադարձնելու պահանջները նույնպես ժամանակ առ ժամանակ ժայթառ են: Սակայն, հայերը գիտակցում են, որ առանց Ռուսաստանի նրանք և տնտեսապես, և քաղաքականապես կտուժեն, ու նրանց ընդգծված օրինակահությունն ու կախումը Խորհրդային Միությունից կասկած չեն հառուցում:

### ՈՐԵԱՆ ՀԱՅ ԿԱ

Հայերը շարժուն, հետևաբար և աշխարհով մեկ ցրված ժողովուրդ են, ուստի շատ դժվար է սահմանել նրանց ամրող քանակությունը մի որևէ ժամանակահատվածում: Թվերը, ուսումնական եթե դրանք համեմատաբար վստահելի են, շատ տարբեր են:

Հայ առաքելական եկեղեցին կենտրոնական դեր է խաղում համայնքի կյանքում, շատ հայեր «հայ լինելու» կարևոր հատկանիշ են համարում եկեղեցի հաճախելը: Պատրիարք Օրմանյանի հայ եկեղեցու պատմության համաձայն, առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին ամրող աշխարհում հաշվում էր 3.472 հազ. հայ լուսավորչական: Բացի այդ, կար նաև 128 հազ. կաթոլիկ և 49 հազ. բողոքական հայ: Նկատի ունենալով նաև այն հայերին, ովքեր գրանցված չեն եղել եկեղեցիներում, վստահուն կարելի է ասել, որ 1914-ին աշխարհի հայ բնակչության թիվը եղել է չորս ու կես միլիոն մարդ, որից մեկ ու կես միլիոնը գոյն զնաց երիտրութերի գործադրած ցեղասպանությանը և դրան հաջորդած անցքերին: Լայնորեն ընդունված 3 միլիոն նվազագույն թվին հայերը հասան 1918-20-ի սովորական մեջ:

<sup>1</sup> 1988-ի փետրվարից ի վեր, երբ հայ ժողովուրդը որդեգրեց ժողովրդավարության ուղին, փոխվեց նաև այդ մուանությունը. Հայաստանի նոր ժողովրդավար խորհրդարանն ու կառավարությունը 1990-ի օգոստոսին հռչակեցին անկախության գործընթացի մկնքը ու ԽՍՀՄ կազմից դուրս գալու պատրաստակամությունը հայտնեցին: 1991-ի սեպտեմբերի 21-ի հարաբեկով Հայաստանի բնակչության գերակշիռ մեծամասնությունը, արտահայտվեց անկախության օգտին:

Մենք արդեն անդրադառն Խորհրդային Հայաստանի մշտական աճին: 1945-ից ի վեր 1954-ին եպիսկոպոս Փոլադյանը ամրութ Խորհրդային Միությունում հաշվում էր 2.745 հազար հայ: Աթաթօւրքի վարչակարգի և նրա հաջորդության քաղաքական ու սոցիալական խորականության հետևանքով Թուրքիայի հայ բնակչությունը 1954-ին մնում էր հետցեղասպանության շուրջ 100 հազարի մակարդակի վրա: Պետք է նշել, որ նույնիսկ 1976-ին որևէ հայ բնակչություն տակավին չեր հաստատվել երեմնի «Թուրքահայաստանի» տարածքում: Աշխարհում հայ բնակչության հետագա աճը հաստատեց Երևանի «Հայրենիք ծայն» պարբերաթերթի գետեղած վերլուծականը 1966-ին (այն ամփոփեց Դոքմեցյանը<sup>1</sup> Գլազգովի համալսարանի «Խորհրդային ուսումնասիրություններում», 1968): Այստեղ մենք բերում ենք ամրող աշխարհում եղած հայերի թիվը ըստ Երկրների:

ԽՍՀՄ	3.500.000 (4.500 հզ. — 1979 <sup>2</sup> )
Մեացած աշխարհում	2.000.000 (2,93 մլն — 1986)
Խորհրդային հայկական համայնքը բաղկացած է.	
Հայկական ԽՍՀ	2.000.000 (3037,3 հզ. — 1979)
Արբեջանական ԽՍՀ	560.000 (475 հզ. — 1976, 200 հզ. — 1991)
Վրացական ԽՍՀ	550.000 (448 հզ. — 1979)
Ռուսաստանի ԽՖՍՀ	330.000 (365 հզ. — 1979)
Մյուսները	60.000 (187 հզ. — 1979)
	3.500.000 (4.500 հզ. — 1979)

Խորհրդային Միությունից դուրս հիմնական հայկական համայնքները հաշվում են:

ԱՄՆ	540.000 (800 հզ. — 1986)
Թուրքիա	250.000 (180 հզ. — 1986)
Իրան	200.000 (200 հզ. — 1986)
Ֆրանսիա	200.000 (350 հզ. — 1986)
Լիբանան	180.000 (200 հզ. — 1986)
Սիրիա	150.000 (120 հզ. — 1986)
	1.430.000 (1.850.000 — 1986)

Մնացած 570.000-ը (ըստ 1966-ի տվյալների<sup>3</sup>) բաժին է ընկնում Մեծ Բրիտանիային (մոտ 6.000<sup>4</sup>), Գերմանիային, Ռուսական, Ավստրիային,

<sup>1</sup> Դոքմեցյան Ռիշարդ Հրայր, ամերիկան քաղաքականագետ, Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր:

<sup>2</sup> Փակագծերում տրվում են վերջին տվյալները:

<sup>3</sup> Ըստ 1966-ի տվյալների՝ 450 հզ.:

<sup>4</sup> 12 հզ. (1986):

Շվեյցարիային, Բուլղարիային (մոտ 25.000), Ռումինիային, Լեհաստանին, Կիպրոսին, Եգիպտոսին, Հարավային Ամերիկային, Հնդկաստանին, Բիրմային, Սինգապուրին, Չինաստանին և Ավստրալիային: Ուժացված տրվյալները թուրքիայի համար կասկածելի են թվում և կարող են ընդգրկել շատ «քողարկված» հայերի, որոնք ընդունել են թուրքական անուն և խլամ՝ հետապնդումներից խուսափելու համար: Վիեննայում հրատարակվող մի հայերեն ամսագիր 1975-ի հովհանն ընդգծված մեծամոլությամբ գրում էր. *Ille sont 7.000.000 dans le monde qui disent AYO (Աշխարհում յոթ միլիոն մարդ «այո» է ասում):* Այդ աղբյուրի համաձայն, այսօր միայն ֆրանսիայում հաշվում է 350 հազար հայ:

Վերը հիշատակված խորհրդային պաշտոնական վիճակագրությունը Խորհրդային Հայաստանի բնակչությունը հաշվում է 2.790 հազար (1975-ի տվյալները), որից շրջ երկուս ու կես միլիոն՝ հայ: Սակայն, հարկ է նշել, որ ՏԵՇՆԴԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ Խորհրդային Հայաստանում նշանակալիորեն կրծատվել է 1958-ից ի վեր, երբ այն կազմում էր 41,1 մարդ յուրաքանչյուր հազար բնակչին, 8,1 մարդական դիմաց (մաքուր աճը 33 մարդ հազար բնակչին): 1973-ին այդ աճը համեստ չափեր ընդունեց՝ 16,9 հոգի հազար բնակչին: Այս դեպքում, երբ բեմնակոր մահմեդական տաօհկների մոտ այն կազմում է 28,4 մարդ, իսկ Էստոնացիների մոտ՝ 4,0 մարդ հազար բնակչի հաշվով:

Ներկայում Հայկական ԽՍՀ բնակչությունը աճում է մոտավորապես տարեկան 45 հազարով, չհաշված ներգաղյօթ արտասահմանից, որը կախված է խորհրդային կառավարության քաղաքականությունից<sup>1</sup>:

## ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԹՈՒՐԳԻԱՆ. ԿԱՍԿԱՇԵԼԻ ԺԱՌԱԳՈՐԾԵ

Այն տարիներին, երբ քեմալական Թուրքիան մարտնչում էր իր լինելության և միջազգային ճանաշման համար (1919—1922), սաղմնավորվող պետությունը նույնախի մոլեռանդություն ու դաժանություն էր ցուցաբերում հայերի ու հույների նկատմամբ, ինչպես նաև կոմիտացին Թուրքիան, որպես օրինակ կարելի է բերել Մարաշի (1920-ի փետրվար) և Հաճընի (1920-ի հոկտեմբեր) գրավումը քեմալականների կողմից, Կարսի հանրահայտ զավթումը Քյազիմ Կարաբերիի գործերի կողմից (նոյնական 1920-ի հոկտեմբերին)<sup>2</sup>, այդ քաղաքի բնակիչների սարսափելի կոտորածով հանդերձ, և, իհարկե, Զմյուտնիայի գրավումը 1922-ի սեպտեմբերին, որը նկարագրված է Մարքսի Հուսեիլանի վերջերս լույս տեսած գրքում

<sup>1</sup> 1988—91-ին Ադրբեյջանի հայերի նկատմամբ գործադրված բոնարարքերի հետեւ գաղթով Հայաստան գաղթեց մոտ 300 հզ. մարդ:

(«Զ յ ո ւ ն ն ի ա 1922. Մ ի ք ա ղ ա ք ի կ ո ր ծ ա ն ո ւ մ ը», անգլ.), երբ արևմտյան տերությունների նավազմերի աշքի առօս հրի մատնվեց քաղաքի հայկական թաղամասը և սրի քաշվեց բնակչությունը, իսկ նրանք (արևմտյան ռազմանավերը) մատր մատին չտվեցին դեպքերը կանխելու և վայրագությունը դադարեցնելու համար:

Բայց և այնպես, Թուրքիայի ներքին վերակառուցման տարիներին, հայերն ու մյուս քրիստոնյա փոքրամասնությունները համեմատաբար հանգիստ են եղել, բացառությամբ մի դիպվածի՝ 1929-ին: Հայերը քիչ էին մնացել, և թեմալ Աթարությօթ իրավացիորեն նկատել է, որ օտար պետություններն այլև կորցրել են հետաքրքրությունը նրանց նկատմամբ: Թեմալի ուշադրությունը բևեռված էր երկիրը նորացնելու ջանքերի վրա, դրան ավելացրած երա անձնական հակակրանքը ամեն տեսակի կրոնական և սոցիալական մոլեռանդության նկատմամբ, երա վերաբերմունքը համենայնդեպս հայերի հանդեպ աննպաստ չի եղել: Այսպես, երբ 1930-ին Կեսարիայի հայերը բարեփոխված (լատինատառ) թուրքերեն մի նամակով դիմեցին երան՝ խնդրելով թուլլատրել եկեղեցու բացումը, նաև չմերժեց խնդրանքը:

Այդուհանդերձ, թուրքական հանրապետության կառուցման շրջանում հայերի իրավունքները միշտ չեն, որ հարգվել են: Գլխավոր հիմքը, որ սահմանում էր Թուրքիայի ոչ մահմեդական փոքրամասնությունների ապահովության սկզբունքները, Լոզանի պայմանագիրն էր (1923-ի հունիսի 24), հատկապես երա 38—44 հոդվածները: Այդ պայմանագիրը ստորագրող պետություններն են՝ Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Ռուսիան, Ճապոնիան, Հունաստանը, Ռումինիան, Սերբա-Խորվաթ-Սլավոնական պետությունը մի կողմից և Թուրքիան՝ մյուս կողմից: 38-րդ հոդվածը երաշխավորում էր Թուրքիայի փոքրամասնությունների կյանքն ու ազատությունը՝ անկախ երանց «ծագումից, ազգությունից, լեզվից, ցեղից կամ կրոնից»: Երաշխավորում էր նաև երանց տեղափոխման և գաղթելու ազատությունը: 39-րդ հոդվածով սահմանվում էր, որ բոլորը հավասար են օրենքի առօս: 40-րդ հոդվածը սահմանում էր Թուրքիայում եղած ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքը՝ «հիմնելու, կառավարելու և վերահսկելու սեփական ծախքով բարեգործական, կրոնական և հասրակական, կամ կրթական և լուսավորական ամեն մի հաստատություն»: 41-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր դյուրություններ ընձեռել փոքրամասնություններին՝ իրենց երեխաներին կրթելու մայրենի լեզվով (թուրքերենը մնում էր պարտադիր): 42-րդ հոդվածը փոքրամասնություններին արտոնում էր տնօրինել սեփական ներքին գործերը, իսկ հաջորդ հոդվածը պաշտպանում էր փոքրամասնությունների իրավունքը՝ չկատարել այն, ինչը չի թուլլատրում երանց կրոնը: 44-րդ

հոդվածը հիշված հոդվածներին տալիս էր միջազգային ճշանակություն, մինչև Ազգերի լիգան կերաչխավորեր դուռը:

Այս ճախատեսումները, սակայն, անտեսվեցին և շարունակում են անտեսվել: Թեմալականների 1930-ականների հաջողությունները, մեծ տերությունների մրցակցությունը թուրքիայի աջակցությունը ապահովելու համար երկրորդ համաշխարհային պատերազմում և ԽՍՀՕ-ի կախումը թուրքական շոշափելի ռազմական ուժից, — այս ամենը խանգարեց, որպեսզի Լոզանի պայմանագիրը ստորագրած պետություններից որևէ մեկը ուժ գործադրեր կամ փորձեր վկայակուշել այդ պայմանագիրը, եթե խախումը էին փոքրամասնությունների իրավունքները: Մինչդեռ կիսանկախ «Բ լ ե ր ի» («Պլեյ») թերթը գրում էր. «Հույներն ու հայերը պետք է մոռանան իրենց սեփական լեզուն՝ թուրք դառնան, կամ դուրս գնան երկրից»: Ավելի վայրիվերո էր արտահայտվում «Բ ք դ ա մ ը» («Իկдан»). «Թուրքիայի հայերին արտոնվում է միայն երկու բան՝ այն է, աղոթել ու թաղել իրենց մետեղերին»:

Հենվելով Լոզանի պայմանագրի վրա, հայերից ոմանք վերադառն արտասահմանից և պահանջեցին վերադառնել մինչև 1915-ը իրենց և իրենց ընտանիքներին պատկանած հողն ու սեփականությունը: Գյուղական վայրերում նրանցից մի քանիսին թուրք գրգռված խուժանը՝ խրախուսելով տեղի ոստիկանությունից, կախեց իրենց իսկ սեփական մրգատու ծառերից: Միայն Ստամբուլում և մի քանի այլ քաղաքներում հայերը կարողացան վերականգնել համայնքի ընդհատված կյանքը: Արևելյան թուրքիայի նախկին վեց «Հայկական վիլայեթների» շրջաններից շատերը հայտարարվեցին արգելված ռազմական գոտի: Թուրքիա ժամանող հայ գրսաշրջիկները, մինչև մոտքի թուլլություն ստանալը, ստիպված են լինում ստորագրել մի պարտավորագիր՝ օրինական պահանջ չներկայացնել թուրքիայում իրենց բնագրաված սեփականությունը վերադառնելու վերաբերյալ:

Հայ համայնքը վերստին տուժեց 1939-ին, երբ Այերսանդրետի սանցակի (Սիրիա) ֆրանսիական մանդատը վերացվեց հօգուտ թուրքիայի՝ գալիք երկրորդ համաշխարհային պատերազմում թուրքերի սիրտը շահելու մտադրությամբ: Սանջակի գյուղերում ապրում էին որոշ թվով հայեր՝ միջնադարյան հայկական Կիլիկիայի սակավաթիվ սերունդները, որոնցից 15 հազարը չկարողացավ հանդուրժել թուրքական գերիշխանությունը և հեռացավ այնուեղից 1939-ի հունիսին՝ Սիրիայի և Լիբանանի հայության թիվը պակացնելով մինչև 200 հզ. (տես Քրիստոֆեր Ռուբըրի հոդվածը «Թ ա լ մ ս»-ում, 1974-ի սեպտեմբերի 5):

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, որպես պահ-

թուրքիզմի կենդանի դրսւորում, Խամեթ Էնյոների<sup>1</sup> կառավարությունը ծանրը և խորական հարկը («Վ ե ր լ ը ք Վ ե ր գ ի ս ի») սահմանեց ոչ մահմեղական փոքրամասնությունների, հատկապես հայ համայնքի համար: Նրանք, ովքեր ամկարող էին կամ չեին ցանկանում վճարել, անլախ տարիքից աքարվում էին Արևելյան թուրքիա հարկադիր աշխատանքի քարհանքներում և ճանապարհների շինարարության վրա՝ ապրելով ահավոր պայմաններում: Թուրքական վարչակարգի և հանրության ֆաշիստամետ համականացը իր արտահայտությունը գտավ 1943-ի մարտին Թալեար փաշայի (որը սպանվել էր Գերմանիայում առաջին համաշխարհային պատերազմից հետո հայ հայրենասերի ձեռքով) աճունի հանդիսավոր տեղափոխմաբեր: Սպանողը<sup>2</sup> արդարացվել էր գերմանական դաւարանի կողմից, մասամբ այն ակնհայտ վկայությունների ճնշման տակ, որ թուրքական շարագործությունների վերաբերյալ տվել էր գեներալ Լիման Ֆոն Սանդերսը<sup>3</sup>: Նշանավոր թուրք լրագործներից մեկն այն ժամանակ գրեց, որ թուրք ժողովուրդը պետք է գրախտավարությանը Թալեար փաշայի աջնունը հայրենի երկիր վերադառնելու համար, «որտեղ արդեն իրականացյան է դարձել նրա հիեալը» (ասել է թե՝ Թուրքիայի հայթափ լինելը. — Խմբ.): Թալեարի վերադառն Ազգային պատության բրիգ վրա ներկա էր Թուրքիայում Հիմլերի դեսպան Ֆոն Պապենը:

Ականած երկրորդ համաշխարհային պատերազմից և դրանից հետո հայերի կյանքի պայմանները Ստամբուլում բարելավվեցին, քանի որ Ծրանց հեռու էին քաղաքական գործունեությունից: Միայն մի լուրջ մոլեռնող բռնկում տեղի ունեցավ 1955-ի ստաներերին, եթե Սալոմիկում Աթաթօւրքի ճնշավայրին հասցված որոշ վմասների պատճառով թուրք խուժանը հորդեց Ստամբուլի փողոցները՝ ավերելով և կողովտելով ազգային փոքրամասնություններին պատկանող խանութներն ու սեփականությունները: Բայց ոստիկանական ճնշումներից զարդ, հոգերանական գործոնները նույնական հայերին հետո պահեցին իրենց հայրենի հողերը վերադառնալու մտադրությունից: Լոնդոնի հայ համայնքի անդամներից մեկը, որը հաճախ է լինում Թուրքիայում իր գործերով, մեզ ասաց, որ ինքը վախենում է որուս զայ Ստամբուլից և այցելել ծովակինյա այն փոքրիկ քաղաքը, որտեղ ապրել է իր ընտանիքը մինչև 1915-ը: Այդ մարդը մինչև հիմա ապրում է իր ծնողների մասին հիշողություններով, որոնց թուրքական օնվակու ծով էին որուս բերել և ջրախեղող արել:

<sup>1</sup> Խընոնի Խամեթ (1884—1973), Թուրքիայի պրեզիդենտ 1938—50-ին, պրեմինիստ մինիստ 1923—27-ին և 1961—65-ին:

<sup>2</sup> Խոսք հայ վիճառու Սողոմոն Թեհներյան (1896—1960) մասին է, որը 1921-ին Բռնինում սպանեց հայ ժողովողի դաշին Թալեար փաշային:

<sup>3</sup> Լիման Ֆոն Սանդերս, գեներալ, գերմանական գինվորական միսիայի ղեկավար Թուրքիայում առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին:

Ըստ թուրքական պաշտոնական մարդահամարի, 1960-ին հայերեն խոսողների թիվը կազմել է 52,756 հոգի: Դրանք հիմնականում կենտրոնացած են (մոտ 37,280 հոգի) Ստամբուլի շրջանում: Այս գալիս է Մարդինի նահանգը՝ 10,232 հոգի: Թայթեմունի շրջանում կար 1204 հայերեն խոսող, Սվագի շրջանում՝ 565: Զկա թուրքական մեկ այլ նահանգ, որտեղ 500-ից ավելի հայ լինի, իսկ երբեմնի ծաղկուն Արանջի (Կիլիկիա) համայնքը հաշվում է ընդամենը 6 հոգի: Ել ավելի ճնշող է այն փաստը, որ Կանի շրջանում, որը թուրքահայաստանի հնագույն կենտրոնն է, պատճեն կանի 2 հայ, որոնք համարձակվում են իրենց մայրենի լեզուն անվանել հայերենը:

Ժամանակակից թուրքիայի հայ համայնքի անվիճելի դեկավարն ու թարգմանը, ինչպես և Օսմանյան կայսրության օրոք, Կ. Պոլսի Հայ առաքելական եկեղեցու պատրիարքն է: 1961-ից ի վեր այդ պաշտոնը գրադարձնում է ուղղամիտ պատրիարք Շնորհը Գալուստյանը<sup>1</sup>, որը անսպան եռանդով պաշտպանում է իր հոտք թուրքական քաղաքացիական և զինվորական իշխանությունների ունդգություններից: Տիսուր փաստ է, որ սրբազնի ջանքերը պատշաճ ըմբռնում չեն գտել և այժմ ել չեն գտնում ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի կողմից, որի թուրքամետն քաղաքանությունը, ինչ խոսք, հանգեցրեց նաև թուրքիայի հաջող ներխուժմանը Կիպրոս:

Սուտավորապես այդ ժամանակ ամերիկահայերի նախաձեռնությամբ պետական դերպարտամենտը մի հատուկ պատվիրակ այցի ուղարկեց Ստամբուլի Հայոց պատրիարքին: Շնորհը պատրիարքը ԱՄՆ-ի ներկայացուցչին հանձնեց երեք էջանոց մի փաստաթուղթ, որն ամփոփում էր թուրքիայի հայերի գրկանքները: Բայց այդ փաստաթուղթը համապատասխանաբար խափանվեց Վաշինգտոնի կարգադրությամբ, և դ-ր Քիսինցերի գրասենյակը ժխտեց պատրիարքի կողմից որևէ գանգատի փաստը՝ ԱՄՆ-ի պատվիրակի Ստամբուլի հայ համայնքին տված այցելության ժամանակ:

Նկատի ունենալով դրա կարևորությունը, Ստամբուլի 1974-ի հուշագիրը մենք տալիս ենք ներկա գեկուցագրի հավելվածում: Բացի այդ, ստորև մենք բերում ենք Սրբազնի մի գրուցի ամփոփումը թուրքիայի հայերի խնդիրների մասին «Armenian Observer»-ի 1976-ի հունիսի 2-ի բարեհաջար թույլտվությամբ:

Ստամբուլում կա Հայ առաջելական 34 եկեղեցի և վեցը գավառներում: Թուրքիայում կա 31 եկեղեցական՝ 1 եպիսկոպոս, 2 վարդապետ և 28 քահանա: Չորս քահանա և 3 վարդապետ Պատրիարքության կողմից առանձնացվել են այլ երկրներում պաշտոնավառելու համար: Հոգևոր խորհուրդը 12 միասն է գումարել, սակայն նոր ընտրություններ տեղի չեն ունեցել, որովհետև կառավարությունը տարուց ավելի ծգզել է թույլտվությունը:

<sup>1</sup> Շնորհը արքեպիսկոպոս Գալուստյանը (ծն. 1913) վախճանվեց 1990-ի մարտի 7-ին, երևանում:

Եթ: Գալֆայան որբանոցը ի վիճակի չի եղել կառուցել նոր դպրոց, քանի որ իշխանությունը մերժել է համապատասխան դիմումը, թեպես ինչ շենքը փլկում էր: Խոշիքն անկատագրին է արժանացել Խաչ գյուղի Ս. Ստեփանոս եկեղեցին, որը չկարողացավ թույլտվություն ստանալ նոր շենք կառուցելու համար: Ներսեսյան դպրոցը, եկեղեցըն կից, կարողացավ մի շենք վարձել քաղաքի այլ շրջանում իր կարիքների համար: Այս երկու հաստատությունների օրինական իրավունքը ներշնչելու պահանջնեցին դատարանում՝ պահանջելով արդյար և ուշադիր վերաբերությունը: Այդ կապակցությամբ հայ համայնքը ծանր և անհիմաստ ծախսեր է կրում: Սուրբ Փրկիչ հիվանդանոցը ստիպված էր ծանր հարկեր վճարել, և վերջին 20 տարվա ընթացքում նրա ծախսերը անել էին տասն անգամ, մինչդեռ հիվանդանոցի եկամուտները գրեթե ուղղացնելու մեջ էին մնացել: Կառավարությունը մերժեց հիվանդանոցի խնդրանքը՝ ավելացնելու եկամուտները իր տարեր սեփականությունների հաշվին: Իրավանում, կառավարության տրամադրած վարկը, որը մի տաք տարի առաջ կազմում էր 100 հզ. թուրքական լիրա, իշեցվեց նորոնկ 15 հզ.՝ առանց որևէ պատճենի և բացադրության, այսպիսով ստեղծելով ոչքար կացույցին (կառավարական այդ 15 հզ. վարկը թիշ է, քան մեկ հիվանդի տարեկան ծախսերը): Ել ավելի վատ է վիճակը կրթական բնագավառում: Այն աշակերտները, որոնց ծնողները տարբեր պատճաներով իսկամ են ընդունել և ապա օրինական ճանապարհով վերադարձել իրենց սկզբանական դավանացին հայ լուսավորչական եկեղեցուն, մերժում են նաև ստանում հաճախելու հայկական դպրոցները: Եթե մի հայ հաճախել է ոչ հայկական դպրոց, նա չի կարող փոխել իր միտքը և հաճախել հայկական դպրոցը հաջորդ տարին, չնայած այն փաստին, որ հայկական դրաբուժները կոթուքան նախարարության կողմից ճանաչվել են որպես հավաք ընծայող հաստատություններ: Կա մեկ այլ սահմանափակում ևս՝ այն է, հայկական դպրոցները չեն կարող աշակերտներ ընդունել այլ վայրերից (գավառներից): Ճնշումներից մեկն էլ «հայ բառը անձնական վկայականներից հանելու պահանջը»:

Թուրքական կառավարության ներկայացուցիչը համառորեն մերժում էր մեկնաբանել (կամ հերեւի) Շնորհը պատրիարքի ձևակերպած մեղադրանքները: Այս հանգամանքը, շարադրված հաստատող բազմաթիվ այլ փաստերի հետ միասին, ենթադրել է տալիս, որ բողոքները միանգամայն արդարացի են:

Օտարերկրյա շատ գիտնականներ և ճանապարհորդներ բողոքել են թուրքիայում գտնվող հայ մշակույթի հուշարձանները անուշադրության մատնելու և ոչնչացնելու առջևիվ: Օրինակ, Խնձորեսքի վանքի պայտեցումը՝ վաճճ, որը կառուցվել է մ.թ. VI դարում և գտնվում է ԱՅԻԻ մի քանի կիլոմետր հարավ, Խորհրդա-թուրքական սահմանից ոչ հեռու: Կնասկածքը այնախին է, որ չի կարող երկրաշարժի հետևանք լինել, այլ միայն ու միայն պայթյունի արդյունը է: Միջնադարյան հայ ճարտարապետության մասնագետ, Ֆրանսիացի հնագետ Թիերիի բողոքը խացնելու համար Մուշի ոստիկանությունը 1974-ին երեք օր նրան արգելափակեց մի գրնանում՝ առանց հացի ու ջրի՝ «ուրիշներին դաս տալու համար»:

Արևելյան վկայակերներում տակալին պահպանված հայկական եկեղեցները վերածվել են պահեստարանների, կամ օգտագործվում են որպես տեղական թանգարաններ: Մի նշանավոր եկեղեցի տուրիստներին ներկայացվել է որպես «վաղ բրիտոնյա թուրքերի» կոթող: Այս կառույցները ՅՈՒՆԵՍԿՕ-ի խնամքին հանձնելու գաղափարը արդյունք չի տվել: Եվ

ուս հիմնականում այն պատճառով, որ երկյուղ կա, թե այդ բայց կարող է մահվան դատավճիր լինել Օրանց համար, ինչպես այդ կատարվում է Մեծ Բրիտանիայում, եթե սեփականատերերը անմիջապես քանդրում են պատմական շենքեղոց, հենց որ դրանք պահպանելու կարգադրություն է ստացվում:

### ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ (ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ) ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ

Հայաստանը օտար կայսրություններին ենթարկվելու երկար տարիների ընթացքում ազգային Սուաքեական Եկեղեցին եղել է այն գործոնը, որը միշտ կենդանի է պահել ազգային ոգին, ուստիև, երբ այն քնած է եղել: Ավելի ուշ, XIX դարում, Եկեղեցին կայսրություններում ճանաչվեց որպես ազգայնականության և ինքնապաշտպանության շարժիչ ուժ: Հայ Եկեղեցու միջոցով էր, որ ազգային դեկապարմերը սկսեցին կրթել իրենց ժողովորդին, և կայսերական պաշտոնյաները (հատկանիւն Թուրքիայում) չհապահեցին հայտնագործել, որ այդ կրթությունը վտանգավոր է:

Բացի Հայ առաքելական Եկեղեցու հետոնդներից, կան նաև մի որոշ բանակությամբ հայ ունիթոր կաթողիկներ, որոնք ումանց կարծիքով, գոյություն ունեն տակալին խաչակիրների ժամանակներից, ումանց էլ գտնում են, որ նրանք ավելի ուշ երևան եկած Դոմինիկյան միսիոներների գործությունները արդյունք են: XVIII դարից Օրանց պատրիարքությունը Հալեայից (որտեղ ընդհարումներ եղան լուսավորչականների հետ) փոխադրվեց Բգումար (Զմբառ) Լիբանան լեռան վրա, որը պատկանում էր մարունի հզոր Խաչեն ընտանիքին: Հայ բողոքականությունը սկիզբ է առել ամերիկյան միսիոներների գործությունը (1830-ական թթ. ի վեր) և արդեն դարի կեսին Օսմանյան կայսրությունում ճանաչված համայնք էր:

1890-ականների կոտորածների ժամանակ «ազգային» Եկեղեցու կողմնակիցները հատկապես ծանր շարշարանքների էին ենթարկվում: Դրա պատճառը մասամբ այն էր, որ Եկեղեցին որպես ազգի պահապան, անխռափելիորեն ստանդոն էր քաղաքական դեր, երբ հայածներն ուժեղանում էին, և մասամբ էլ այն պատճառով, որ օսմանյան կառարությունը հասկանում էր, որ լուսավորչական հայերին նեղելիս դիվանագիտական որևէ պատասխանատվության հարց չէր բարձրանա: Մինչեւ եթե հարձակման թիրախը հայ կաթողիկները լինեին, ֆրանսիական (կամ ավստրո-հունգարական) դեսպանը կրողոքեր, իսկ եթե հարձակման ենթարկվեին բողոքականները, ապա կմիջամտեին անգլիացիները կամ ամերիկացիները: Երիտրութերի գործադրած 1915-ի ցեղասպանության ժա-

մանակ այս բոլոր նկատառությունները անտեսվեցին, և հայերը, անկախ այն բանից, թե որ նկեղեցու էին պատկանում, զյուսվին ոչնչացվեցին:

Հայաստանում կոմունիստական տիրապետություն հաստատվելուց հետո բարդ խնդիրներ ծառացան եկեղեցու առջև, և երկար ժամանակ էջմիածնի կաթողիկոսական աթոռը թափուր էր մնում: Կիլիկիայի կաթողիկոսությունը (որն ըստ եռթյան օժուված էր նույնահյու իշխանությամբ, չնայած ընդունում էր, որ էջմիածնի կաթողիկոսը «Ամենայն հայոց կաթողիկոս») է) առաջին համաշխարհային պատերազմից հետո փոխադրվեց Անդրիաս, Բեյրութից հյուախ, ուր գոյություն ունի մինչ օրս: Անդրիասի Ենթակայության թեմերը գտնվում են Սիրիայում, Լիբանանում, Կիպրոսում, Իրանում և այլուր:

Հայ Եկեղեցու պատակումը սկիզբ առավ 1933-ին՝ ձևակերպվեց 1956-ին: Վենի առաջկան էջմիածնի (Խորհրդային Հայաստան) կաթողիկոսի հետինակությունն էր, թե արդյո՞ք նա ինքնուրույն, անկախ Եկեղեցական ոժեկալը է, թե՝ կոմունիստական խամաճիկ: Դաշնակցություն կուսակցությունը իր հզոր կազմակերպությունը ի սպաս դրեց ընդդիմությանը՝ մեղադրելով էջմիածնի կաթողիկոսությանը, և 1956-ին Եկեղեցին պառակտվեց, երբ Անդրիասում ընտրվեց դաշնակցականամետ կաթողիկոս: Հարկ է հիշել, որ կայսիականութական Շամկավար կուսակցությունը պաշտպանեց այն թեկնածուին, որը կողմնակից էր Եկեղեցու միասնությանը, ոչ թե կոմունիստների Ըկատմամբ ունեցած համակրանքից դրդված, այլ որովհետև Օրանց կարծիքով, հայերի միասնականությունը շատ ավելի կարևոր է, քան կոմունիստների ազդեցության հանգամանքը:

1956-ից ի վեր տարրեր փորձեր են արվել վերականգնելու Եկեղեցու միասնությունը, քանի որ Եկեղեցու պառակտումը պառակտում էր նաև համայնքը: Եկեղեցու բաժան-բաժան հատվածների միջև գլխավոր «պառակտիչներից» մեկը Երուսաղեմի պատրիարք Եղիշե Տերտիրյանն էր: Եվ նթե Եղակ մի բան, որն ի մի բերեց տարրեր թևերը և Եկեղեցու ներսում ինչ-որ շափով հաշտության մթնոլորտ ստեղծեց, 1975-ի ապրիլի գործությունըն էր (հայասպանության 60-րդ տարեթարձը), որի համար ստեղծվեց բոլոր հիմնական հատվածների միասնական կոմիտե: Այս կոմիտեն անժխտելի ծառայություն մատուցեց նաև Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ՝ ամրող համայնքը պաշտպանելով դրսի ամեն կարգի հարձակումներից (դիպվածքարար, թե մոտածված) և հավաստեց հայերի չեզորությունը: Միացյալ Նահանգներում այդ միարանությունը ներկայացված է Հայկական համագումարում (Armenian Assamby), Վաշինգտոնում, որը հայկական բոլոր խմբագրումների ներկայացուցիչների մի համաժողով է:

## ՄԻ ԲԱՆԻ ՀԱՅ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԱՅՍՈՐ. ՍՓՅՈՒԹԵԸ

Մենք արդեն քանիցս անդրադանք այն տեղահանություններին և արտագաղթերին, որոնք դարձել են Հայաստանի բազմադարյան պատմության ողբերգական հատկանիշը: Հայերը աշխարհով մեկ սկսեցին ցրվել տակավին միջնադարում, ապա այդ պրոցեսը ուժեղացավ 1895—96-ի արդուկհամիլյան կոտորածների ընթացքում և իր գագաթնակետին հասավ 1915-ի ցեղասպանության ժամանակ: Միակ սփոփանքը եղավ այն, որ աքսորի սարսափները զարկ տվեցին հայերի բնածին հնարամության զարգացմանը՝ որպես ազգային բնավորության, հայկական դիճամիզմին: Այս հատկությունները իրենց բարձրակետին են հասել (Հայկական ԽՍՀ-ից դուրս) Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Այս գեկուցագրի նպատակը մեզ պարտավորեցնում է մեր ուշադրությունը կենտրոնացնել այն շրջանների վրա, որտեղ հայերը ներկայացնում են փոքրամասնության մի առանձնահատուկ խնդիր, կամ որտեղ նրանք խորականության են ենթարկվում որպես համայնք: Այդ իսկ պատճառով շատ երկրների, ուր նրանք ապաստան են գտել և խրախուսվել՝ կազմելով միասնական, բարգավաճ ընդհանրություն, մենք կանդրադառնար կարծուու:

### Ամերիկա

Ամենաբարգավաճ և միջազգային տեսակետից կարևոր սփյուռքահայ համայնքը ԱՄՆ-ի և Կանադայի համայնքն է: Հայերի մեծ խմբեր են ապրում Ֆրեզնոյում (Կալիֆոռնիա) և Մասսաչուսեթսի նահանգի Բոստոն քաղաքի Կոթըրթաուն արվածանում: Սակայն ԱՄՆ-ի հայության ամենամեծ կենտրոնացումը այսօր Սան Ֆրանցիսկոյում<sup>1</sup> է: ԱՄՆ-ի և Կանադայի հայ բնակչությունը, որը մի տասնամյակ առաջ հաշվվում էր շուրջ 450 հզ., այժմ կես միլիոնից անցել է և արագորեն աճում է<sup>2</sup>:

Հայերն իրենց տեղն ունեն մեծ քիզանեսում (Ալեք Մանուկյան, Քըրք Գրիգորյան, Զորյ Սարտիկյան), ամերիկյան գրականության մեջ «Folksy» տեսակի՝ Սարոյան, ինչպես նաև մարմնամարզության և բեյսբոլի, գիտության և տեխնոլոգիայի, երաժշտության և օպերայի ասպարեզում: Մի ամերիկահայ պետական ծառայող հիշատակեց Ուոթըրգեյթի գործի կապակցությամբ:

ԱՄՆ-ում գործում են հայկական հայրենակցական և հայրենասիրական կազմակերպություններ: Դրանցից են Բոստոնի Հայրենիք ընկերությունը

(Դաշնակցական ուղղության, Armenian Weekly-ի և «Հայրենիք» օրաթերթի հրատարակիչը), Բոստոնի Պայքար ընկերությունը (Հայ ուսակցության, որը հրատարակում է «Migror-Spectator» շաբաթաթերթը և «Պայքար» օրաթերթը), մասսայական և ավելի շուտ պահպանողական Հայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸ-AGBU), որ հիմնվել է 1906-ին Կահիրեում (Եգիպտոս): ՀԲԸ-Ը վերակառուցվեց 1915-ի ցեղասպանության օրերին՝ գաղթականների ճամբարներ հիմնելու, որը երեխաններին անապատից փրկելու և, ընդհանրապես, Մերձավոր Արևելքում ցրիվ տրված հայության մնացորդները հավաքելու և փրկելու համար: Այսօր ՀԲԸ-Ը պահում է հայկական դպրոցներ, մարդասիրական և այլ լավ գործեր ձեռնարկում ամբողջ աշխարհում: ՀԲԸ-Ը մի քանի դպրոցներ ունի Լիբանանում, Լատինական Ամերիկայում, Միացյալ Նահանգներում և Մելքոնյան հաստատությունը Կիպրոսում (Խիլոսիա): Այս ասպարեզում միջազգային մյուս խոշոր ընկերությունը Գալուստ Կյուլպենկյան հաստատությունն է Լիսարոնում: Կա նաև Հայ օգնության միությունը, որը կապված է դաշնակցական համայնքի հետ:

ԱՄՆ-ի հայերի աճող ինքնավատահության մասին է խոսում Մայք Սոլենի<sup>3</sup> Վերջերս լույս տեսած գիրքը («Ու դ և ու թ յ ու ն դ ե պ ի Ա ր ա ր ա տ»): Սոլենի հայը<sup>2</sup> 1920-ական թվականներին անգլ-ամերիկյան փիպասան էր և սովորություն ուներ թաքցնելու իր հայկական ծագումը ընկերական շրջապատում: Մայք Սոլեն Կրտսերը իր գրքում պատմում է, թե ինչպես ինքզինըն գտավ որպես հայ և ընդունեց իր ազգային պատկանելությունը: Մինչև թուրքերի 1974-ի ներխուժումը Կիպրոս, ամերիկահայերը ընդհանուր քայլեր էին ձեռնարկում հունական հզոր լորբիի հետ միասին: Նրանք պիկետներ էին կազմակերպում թուրքական հյուպատոսարանների առջև ու խափանում թուրքական մշակույթին միջոցառումները, և նրանք մի քանի համախոհներ ունեին ԱՄՆ-ի կոնգրեսում: Այժմ դրանց կարևորությունը որպես ճնշող խմբի՝ է՛լ ավելի է մեծացել:

Նշանակալի հայկական համայնքներ կան նաև Կանադայի հիմնական քաղաքներում և Հարավային Ամերիկայում, հատկապես Ուկրաինայում, Վենեսուելայում, Բրազիլիայում և Արգենտինայում:

Հայկական լրագրությունը ԱՄՆ-ում ներկայացված է հայկական 5 անգլերեն թերթերով, ներառյալ «Armenian Weekly»-ին (Բոստոն), «The Armenian Reporter»-ը (Նյու Յորքում), «Armenian Mirror-Spectator»-ը (Բոստոն), «Armenian Observer»-ը (Լոս Անջելես) և «Californian Curier»-ը (Ֆրեզն): Հայերեն հիմնական օրաթերթերն են «Պայքար»

<sup>1</sup> 1980—90-ական թթ.՝ Լոս Անջելեսում (250 հզ., 1991):

<sup>2</sup> Այսօր այդ երկրներում ապրում է մոտ 1 մլն հայություն:

<sup>3</sup> Սոլեն (Solon) Մայք Կրտսեր (ծն. 1930), հայազգի ամերիկյան գրող:

<sup>2</sup> Սոլեն Մայք (Գովումջյան Տիգրան, 1895—1956), հայազգի անգլիական գրող:

քարը» (Կոթըրթառուց), «Հայրենիքը» (Բոստոն), «Ասպարեզը» (Լու Ամերիկա), ինչպես նաև «Նորօրը» (շաբաթը 3 անգամ, Լու Ամերիկա):

Ներկայում գործում են 11 հայ կիրակնօրյա (մեկօրյա) դպրոցներ ԱՄՆ-ում և Երկուար Կանադայում: Ամերիկահայերի եկեղեցական կամքը բավականին աշխույժ է: Կա ավելի քան 65 եկեղեցի, որոնց մեծ մասը ունի մշակութային և ժամանցի հարմարություններ Արևելքի, Կենտրոնական և արևադարձական ափի գլխավոր քաղաքներում<sup>1</sup>. Ս. Ներսես ճեմարանը բացվել է 1962-ին և ներկայում միացվել է Ս. Վաղիմիրի ուղղափառ ճեմարանին Նյու Յորքում:

### Արևմտյան Եվրոպա

Կարևոր երկարակյաց հայ գաղութ ունի Ֆրանսիան: Ֆրանս-հայկական կապերը հասնում են մինչև խաչակիրները, և վերջին հայ թագավոր թաղված է Սեն Դինիում<sup>2</sup>: Հայերի կարևոր կենտրոններն են Փարիզը, Մարսելը, Լիոնը ու Վալանսը: Հայերը հաջողակ են շատ մասնագիտությունների ասպարեզում:

Օրավոր անող հայ գաղութ ունի Մեծ Բրիտանիան, մասնավորապես Լոնդոնը ու Մանչեստրը: Մանչեստրի համայնքը հիմնվել է տակավին 1840-ականներին և մասնակցություն ունեցել XIX դարի տերսուի բումին: Լոնդոնի հայերի շարքերը մշտապես համալրվել են գաղթականներով այնպիսի աղետալի վայրերից, ինչպիսիք են Լիքանան ու Կիպրոսը: Լոնդոնում կան մի քանի հայկական ուսուորաններ, 3 առաքելական եկեղեցի, հայկական մշակութային կենտրոն՝ Հայ տուն: Սուրբ Էջմիածնի ծայրագույն կաթողիկոսը իր անձնական ներկայացուցիչն ունի (նստավայրը՝ Ռվերնա Գարդըն, Քենսինգթոն): Քենթերլեյի արքեպիսկոպոսին առընթեր: Ականավոր հայ երաժիշտներ՝ Զիլինգֆորյան քայլակը, Գրիգոր Լորին ճգնավորյանը և երգուիհ Քերի Բերերյանը հաճախակի համերգներ են տալիս Ֆեսթիվլ Լոյում և այլուր: ԼԲԸ-ն, Հայ ազգային կոմիտեն (դաշնակցական) և Լիսարոնի Գալուստ Կյուլպենկյան հաստատությունը իրենց մասնաճյուղերն ունեն Լոնդոնում:

Հայ գաղութը Բրատիայում գործույն ունի վաղուց ի վեր, որն արտացոլում է պապականության ավանդական բարեկամությունը Հայաստանի հանուեաց: Միիթարյանների հայ կաթոլիկ միաբանությունը իր մենաս-

<sup>1</sup> 1991-ին ԱՄՆ-ում գործում էին 23 ամենօրյա և բազմաթիվ կիրակնօրյա հայկական դպրոցներ, 95 լուսավորչական եկեղեցի:

<sup>2</sup> Խորք Կիլիկիայի հայոց թագավոր Ալոն Զ Լուսինյանի (1340—93) մասին է, որը վախճանվեց Փարիզում և խաղվեց Սեն Դինի արքայական դաւարանում:

տանը (Վանք) ունի Վենետիկի Սուրբ Ղազար կղզում: Միաբանությունը հիմնադրվել է ավելի քան 250 տարի առաջ Ստամբուլում և ավելի ուշ փոխադրվել է Սուրբ Ղազար՝ Վենետիկի հանրապետության հրավերով: Միաբանությունը իրեն նվիրաբերել է գիտելիքների արածմանը և սկսած 1800-ից կարևոր դեր է խաղացել հայ ազատագրական շարժման մեջ: Վաճռն ունի շատ արժեքավոր գրապահոց, որը վնասվեց 1975-ի հրդեհի հետևանքով: Վենետիկում կա հայկական բարձրագույն դպրոց: Հայերն արդյունաբերությամբ և բիզնեսով են զբաղվում Միլանում, Թուրինում և այլուր:

Արևմտյան Գերմանիայի հայ գաղութը այսօր ավելի նվազ նշանակվի է, քան նախապատերազմիան տարիներին: Սակայն գոյություն ունի մի ակտիվ համայնքային կազմակերպություն, որի նախագահի նստավայրը Բեռլինն է: Լոնդոնի մի շարք վաճառականները իրենց գրասենյակներն ունեն Դյուսելդորֆում: Քյոլնի հայ եկեղեցու ընկերակցությունը գործում է տեղի գերմանական կարողինալ-արքեպահության հովանավորության ներքո: Հայդելբերգի համալսարանում գործում է Գերմանահայ մշակութային ընկերություն, որի պրեզիդենտն է պրոֆ. դ-ր Ֆրիդրիխ Լեյերը:

Ավստրիայի հայ գաղութը կենտրոնացած է Վիեննայում, որտեղ կաթոլիկ միաբանության հայերը ձեռնարկել են շահեկան հրատարակչական մշտապետությունը: Համայնքի կարևորության մասին է վկայում առաքելական եկեղեցու առկայությունը այնտեղ, որը ենթարկվում է Սուրբ Էջմիածնին:

Ծերեցարիայի հայերը իրենց գործունեությունը վերջին տարիներին ծավալել են ժնուսում: Քաղաքի գեղեցիկ արվարձաններից մեկում նրանք կառուցել են մի սրանչելի առաքելական եկեղեցի:

### Արևելյան Եվրոպա

Արևելյան Եվրոպայի հայ սփյուռքը երկար և հետաքրքիր պատմություն ունի և խորանում է մինչև բյուզանդական շրջանը (տես Սուածին մասը):

Լեհաստանում և Հարբուրգանում հայերը ստիպված են ընդունել Հռոմի կաթոլիկությունը, որը որոշ չափով հանգեցրեց ազգային դիմագծի կորստին, բայց նրանք նշանակվի դեր խաղացին ժամանակակից Լեհաստանի մտավոր, առևտուրական և եկեղեցական կյանքում և մեծ հարգանք են վայելում այնտեղ:

Մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը Ռումինիայում ապրում էր 50 հզ. հայ: Նրանք գերակշռում էին Մոլդովայի նախկին մայրաքաղաք Սուչավայի հյուսիսային թաղամասում և այնտեղ ունեն մի ամրացված մենաստան (զամկա), որը կառուցվել է 1600-ին: Ցաշի (Ցա-

սիի)՝ Սոլովայի նախկին մայրաքաղաքի առևտուրը նրանց ձեռքին էր. Բուլարեստը Հայ առաքելական եկեղեցու եպիսկոպոսություն ունի, որի առաջնորդը մի ժամանակ եղել է Ետրկա կաթողիկոս Վազգեն Ա: Բուլարեստի գեղեցիկ հայկական կաթողիկեն կառուցվել է 1915-ին: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կոմունիստական վարչակարգը, որ գլխավորում էին Աննա Պաուլերի նման ծայրահեղականները, թշնամքար էր վերաբերվում մասնավոր նախաձեռնությանը: Տեղի հայերի մեծ մասը արտագաղթեց Հայկական ԽՄՀ, Ամերիկա, Լիբանան: Մնաց շուրջ 5 հզ. հոգի: Սակայն, 1973-ին Բուլարեստի մատակարարման գլխավոր վարիչը հայ էր, Նարուկյուն Ասարյան: Ռումինիայի գործիքաշինական արդյունաբերության նախարար էր Վիքի Արթարյանը: Բուլարեստում լուս է տեսնում «Ն ո ր Կ ի ա ն ք» հայերեն շաբաթաթերթը: Ճանաչված օպերային երգիչներ են Դավիթ Հովհաննիսյանը ու Էդվարդ Թումաջյանը, թատրոնական աստղեր՝ Հարություն Զաքարյանը և Լուիզա Բերբերյանը:

Հայկացես նպաստավոր է հայերի վիճակը Բուլիա արև ու մ, որտեղ նրանց հաշվում են շուրջ 25 հզ.: Հայերի հիմնական կենտրոններն են Պլովդիվը, Սոֆիան և Ռուսեն: Նրանք ունեն մի շարք դպրոցներ<sup>1</sup>, որոնք մասամբ մտնում են պետական կրթական համակարգի մեջ: Բարգավաճ եկեղեցները ենթարկվում են Ռումինիայի եպիսկոպոսին, պատվելի Տիրայր Մարտիկյանին:

Խորհրդային Սիոնթյունում հայեր կան բոլոր մեծ քաղաքներում և աշքի են ընկնում բոլոր ասպարեզներում, արվեստի և գիտության, առևտորի և արդյունաբերության մեջ: Սոլովայի, Նոր Նախիջևանի (Ռուսովի մոտ) և Աստրախանի գաղութները երկար և հարափոփոխ պատմություն ունեն: Սոլովայի Լազարյան ճեմարանը հիմնարկվել է 1815-ին հայ հարուստ Յնուանիքի կողմից, սկզբնական շենքը մինչև օրս էլ կանգուն է Հայկական նրբանցքում: Կենտրոնական (Միջին) Ասիայի շարժիչների արդյունաբերությունը շատ բարով է պարտական հայ մեխանիկներին ու ինժեներներին, որոնք ապրել են Աշխարադ քաղաքում: Հայ քիչեներն ու ատամնաբույժները ճանաչված են խորհրդային բժշկության ասպարեզում: Բայց կան նաև բացառություններ, մի հայ հոգեբույժ վատ համբավ ծեռ բերեց՝ խորհրդային ալլախոհների Ըկատմամբ կիրառելով վնասակար դեղամիջոցներ:

### Մերձավոր և Միջին Արևելք

Մերձավոր Արևելքի հայ սփյուռքի մայրաքաղաքը կես դար շարունակ եղել է Բեյրութը՝ Լիբանանի մայրաքաղաքը, մինչ վերջերս տեղի ունեած եղբայրական քաղաքացիական պատերազմը: Լիբանանը այժմ կարող է դասվել հայկական աղետակի շրջանների շարքը:

<sup>1</sup> Այժմ Բուլղարիայում հայկական դպրոցներ չկան, այլ կան հայերենի դասընթացներ՝ բուլղարական որոշ դպրոցների կից:

Հայերը կազմում են ամբողջ Լիբանանի բնակչության 7%, և մեծամասնությունը ապրում է (կամ ապրում էր) Բեյրութում և նրա արվարձաններում: Նրանց մեջ կան հարուստ բիզնեսմեններ, ֆերմերներ և աղքատ բանվորներ ու գյուղացիներ: Կիլիկիայի առաքելական եկեղեցու կաթողիկոսը, հայ կաթողիկների պատրիարքը և Հայ ավետարանական եկեղեցիների Սերձավոր՝ Արևելքի միությունը, — այս բոլորը իրենց կենտրոններն ունեն Բեյրութում: Մինչև քաղաքացիական պատերազմը Լիբանանում գործում էր 60 հայկական վարժարան (մանկապարտեզ, տարրական և միջնակարգ դպրոցներ) և Հայկացյան քոլեջը: Կան (կամ կայիշ) ավելի քան 20 հայկական եկեղեցի, 4 օրաթերթ և 12-ից ավելի ամենշաբաթյա, ամենամյա և կիսամյա հանդեսներ: Երեք հիմնական քաղաքական կուսակցությունները՝ ազգայնական դաշնակցությունը կամ ՀՀԴ, պահպանողական ու ամկավարները և առաջադիմական հնչակները՝ բոլորը գործում մասնակցություն են բերում համայնքի քաղաքական, մշակութային և մարզական կյանքին:

Հայերը երկար ժամանակ կարևոր, թեատրու երկրորդական դեր են խաղացել Բեյրութի գործարար աշխարհում: Այդ քաղաքի ավերումը մեծ հարված էր ամբողջ աշխարհի հայության համար: Կովիների ժամանակ հայերը պարտավորվեցին չեղորություն պահանջել: Բայց և այնպես մինչև 1976-ի սեպտեմբերը գոհվել էր 140 հայ և 2 հզ. էլ վիրավորվել: Դաշնակցության մի ներկայացուցչի հայտարարության համաձայն, հայկական սեփականությանը հասցված վնասը կազմել է 200 մլն դոլար: Ամբողջ աշխարհում հայ համայնքները օգնություն են կազմակերպում Լիբանանի իրենց հայրենականներին: Շատերը լրել են երկիրը, իսկ ով մնացել էր՝ սովոր մատնվել:

Հայկական մեկ այլ ժամանակակից վտանգված շրջան է Կիպրոսը: Նիկոսիայում գտնվող Մելքոնյան կրթական հաստատությունը ուրբակության ենթարկվեց թուրքերի 1974-ի ներխուժման ժամանակ և մեծապես ավերվեց: Նրա վերակառուցումը ՀԲՀ-ին արժեցավ 1 մլն դոլար: Կիպրոսի հյուսիսում ապրող հայերի խանութներն ու տները քարութանդ արվեցին, իսկ իրենք ծեծի ենթարկվեցին (մենք գրուցել ենք Ծրանցից մի քանի հետ, ովքեր կարողացել են փախչել Լոնդոն): Ֆամագոստայում և այլուր հայկական եկեղեցներն ու հուշարձանները անարգվել կամ քանդվել են թուրք գյուղացիների կամ թուրքական գինված ուժերի կողմից:

Մերձավոր և Միջին Արևելքի մյուս մասերում (բացառությամբ Թուրքիայի) հայերի վիճակը համեմատաբար ավելի լավ է: Իրանում հայերը վերջին ժամանակներս ավելի բարենպաստ պայմաններում են ապրում: Նրանց վայելում են շահի անձնական համակրանքն ու հովանավորություն-

Ըը<sup>1</sup>: Հայկական գեղատեսիլ Նոր Զուղա քաղաքը (Սպահանի մոտ), տուրիստների սիրված վայրն է: Թերանում հայերը ունեն մի հրաշալի ժամանակից եկեղեցի և մի քանի հները, 1 թեր և մի քանի մշակութային հաստատություններ: Նրանք ունեն բարգավաճ գորգագործություն և օգնում են հրանի ազգային օդանավագնացության զարգացմանը: Թավրիդի՝ Իրանական Ադրբեյջանի մայրաքաղաքի հայ հնագույն համայնքը նույնպես չի կորցրել իր նշանակությունը: Այստեղ կա արքեպիսկոպոսություն, որը Ենթարկվում է Անդիլիասին, և կից հետաքրքիր մի թանգարան: Թավրիդից ու Թերիանից հազարավոր հայեր ամեն տարի հովհանն ուվասի են գնում XIV դարի Ս. Թադեոսի վանք, որը գտնվում է Արարատ լեռան հարավային մասում:

Հայերի կարելի է հանդիպել Մերձավոր Արևելքի բոլոր կարևոր քաղաքներում: Ե գի պ տ ո ս ու մ հայերը ունեցել են ականավոր պաշտոնյաներ, որոնք ծառայել են դեռևս Մուհամեդ Ալիի հարստությանը, Եշանավոր է եղել Նորբար փաշան, որը դարձավ Վարչապետ: Ոչ հեռավոր անցյալում Կահիրեկի հայերը իրենց դիրքերը կորցրեցին, երբ անզիացիները հեռացան այդ երկրից և ուժեղացավ նասերիզմը, բայց ունանք նորից հաջողության հասան, երբ պրեզիդենտությունը ստանձնեց Սահարը:

Ս ի ր ի ա յ ո ւ մ հայերը հիմնականում գտնվում են Դամասկոսում և Հայեպում, որտեղ նրանք ունեն հյուրանոցներ և զբաղվում են բժշկությամբ: Շոշափելի հայկական համայնք կա Ի ր ա ք ո ւ մ (Բաղդադում), բայց բռնապետական վարչակարգը նրան հնագանդ է պահում:

Ակտիվ հայ համայնք կա Հ ո ր դ ա ն ա ն ու մ, որը մի քանի տարի առաջ սեփական ուժերով մի եկեղեցի կառուցեց Ամմանում: Շատ հորդանացի հայեր «կրկնակի գաղթական» են, որոնք փախել են Պաղեստինից 1948—1949-ի պատերազմի ժամանակ՝ ի լրումն սեփական հայրենիքից գաղթելու:

Ի ս ր ա յ ե լ ո ւ մ գործում է մի փոքր (300 հոգի), բայց բարգավաճ համայնք Յաֆֆայում, թեպետև վերջերս այն տուժել է խորվություններից:

### Հնդկաստան ու Հարավ-Արևելյան Ասիա

Հնդկաստանում հայերի ներկայության լավագույն օրերը համընկնում են Բրիտանական Ռաջի ժամանակներին՝ XVIII դարի կեսից XX դարի կեսը: Բոլորից և Կալկաթայի հայերը խոշոր դեր են խաղացել Եվրոպայի, Պարսկաստանի և Օսմանյան կայսրության, ինչպես նաև Հեռավոր Արևել-

<sup>1</sup> 1979-ի խամական հեղափոխությունից հետո սկսվեց հայերի արտագալք. հիմնականում Եվրոպայի և Ամերիկայի երկրներ: Այժմ դրությունը համեմատաբար կայուն է: Գաղութում հաշվում է 200 հզ. հայ (1991):

քի հետ միջազգային առևտորի մեջ: Նրանք ուսայլ, կրթյալ և մեծ հայրենասերներ են և ֆինանսավորել են աշխարհով մեկ ցրված իրենց թշվա ազգակիցների շատ օգտակար ձեռնարկումները: Բրիտանացիների հեռանալուց հետո, որոնք հովանավորում են հայերին որպես քրիստոնյաների, համայնքը տկարացավ, և շատ հնդկահայեր արտագալթեցին:

Սա վերաբերում է նաև երբեմնի բարգավաճ հայ գաղութներին Ռանգ գուն ու մ և Ս ի ն գ ա պ ու ր ու մ: Մինգապուրում հայերը ակնառու մասնակցություն են բերել 1965-ին այնտեղ անկախ պետություն ստեղծելու գործին, և իրենց վարչական ու քաղաքական տարանդները ներդրել ամենաբարձր նախարարական մակարդակով: Հայերի հիմնած Ռաֆըլս հյուրանոցը մնում է նշանավորը Արևելքի հյուրատների մեջ:

### Աֆրիկա

Միջին դարերից սկսած հայերը Աֆրիկայում մասնակցել են առևտրական, դիվանագիտական և միսիոներական աշխատանքների: Արևելյան Աֆրիկայի նավահանգիստները գրավել են Երանց վաճառականական ձիրքը. ոչ հեռավոր անցյալում հայերը ակտիվ են Հարավայի Աֆրիկայի այնպիսի արդյունաբերական կենտրոններում, ինչպիսին Յոհաննեսբուրգն ու Քեյփթաունն են:

Հատկապես ուշագրավ է Եթովպակի այստեղի գաղութը: Հայ առաքելական եկեղեցին սերտ առնչություններ ունի Եթովպակի ազգային եկեղեցու հետ: Կերպին եպիսկոպոս Ներենիկ Փոլայանը (սպանվել է 1963-ին) մի քանի տարի Եթովպակի ազգային հոգևոր նեմարանի դեկանն էր Ադիս Աբեբայում:

Երիտասարդ հայ համայնքներից Ավստրալիայի գաղութը ամենադիմակին է: Սիդնեյում ապրում է 9 հզ., Մելբուռնում՝ 3 հզ., Բրիտանում ու Փերթում միասին՝ 800 հայ: Ամբողջ թիվը կազմում է մոտ 13 հզ.<sup>1</sup>: Հայ եկեղեցու գլուխը Սիդնեյում եպիսկոպոս է, Մելբուռնում՝ վարդապետ: Համայնքը հրատարակում է 2 ամսագիր և կազմակերպում է մշակութային միջոցառումներ, որոնք բաց են Ավստրալիայի հասարակության համար: Բացի առևտորի և արդյունաբերության մեջ զբաղված լինելուց, Ավստրալիայի հայերի մեջ կան առնվազն 6 փիլիսոփայության դոկտոր, 2 համալսարանական դասախոս, 8 ինժեներ, 2 բժիշկ, 8 գիտաշխատող և 5 այլոք, որոնք զբաղվում են երաժշտությամբ և գեղարվեստով<sup>2</sup>:

<sup>1</sup> 1990-ին՝ 25 հզ.:

<sup>2</sup> Մեզ հաջողություն հավաստի տեղեկություններ ստանալ այս գաղութի մասին պահ Ռոբերտ Մինայանից, որն ապրում է Մելբուռնում և սովորում Լոնդոնի համալսարանում (հետ.):

«Նա գիտեր նաև մի թիշ հայերն, բայց մորացըյ Դոքը նրան ասաց, որ այդ լեզուն խառնում են բուրքերենի հետ, որը միայն զայրացնում է բուրքերին, քանի որ վաղուց ի վեր նրանք *deレenda est Armenia<sup>1</sup>* են հայտարարել այդ բչկան ցիրուան ժողովրդին, և լաւ անգամ չեն ուզում նրանց մասին» (Ուզ Մշըոլե, Տրափիզոնի աշտարակները, էջ 23):

Այսօրվա հայերը օրենքները հարգող ժողովուրդ են, որը (չնայած այն բանին, որ դարիս սկզբի պատմական շրջանը կարելի է դիտել որպես համաշխարհային դավադրություն նրա հանդեպ) ուղղեց իր մեջքը և աներկուղ նետվեց իրադարձությունների հորձանուտը: Սակայն նրանց մեջ մնում է կակիծը, քանի դեռ հայ ժողովորդի հանդեպ գործադրված ոճիրները ոչ միայն չեն դատապարտվել, այլև լայնորեն չեն ճանաչվել, իսկ մյուս կողմից՝ առկա է նաև գործողությունների դիմելու հնարավորությունը:

Դա գլխավորապես վերաբերում է Թուրքիային: Նա, ով ծանոթ է համապատասխան գրականությանը և ով համոզված թուրքամոլ չէ, միանգամայն անհեթեր կարող է գտնել Անկարայի այն «պաշտոնական վարդապետությունը», թե Հայկական հարց չի եղել երբեք, իսկ եթե եղել է, ապա մի բուռ ավագակների և քայրայիշների ձեռքի գործը, որոնք իրենց արդարացի պատիժն են ստացել: Նույնիսկ Թուրքիայի շահերից կրխի, եթե նա ընդունի, որ իսկապես ոճիր է գործվել հայերի նկատմամբ, թե պետ համոզված ենք, որ Անկարայի ներկա (1976) աջ կողմիցին հազիվ թե դիմի այդ քայլին: Բայց մեզ ավելի հրական է թվում, որ կարելի է պընդել, որպեսզի Թուրքիան ճշտորեն կատարի Լոզանի պայմանագրի կետերը, հատկապես Ստամբուլի հայ դպրոցների հարցում: Ներք կցանկանայինք նաև ավելի ապահով վիճակում տեսնել Արևելյան Թուրքիայի հայկական հուշարձանները, թեպես մենք կարող էինք նախազգուշացնել արևմտյան որևէ կառավարության (կամ ՅՈՒՆԵՍԿՕ-ին) ճնշում գործադրել թուրքերի վրա այս հարցում, մի բան, որը կարող էր միայն արագացնել պահպանված հուշարձանների ոչնչացումը:

Ինչպես Խորհրդային Հայաստանի հայերը, այնպես էլ աշխարհով մեկ սփոփած հայկական համայնքները այժմ ավելի քիչ զոկանքներ են կրում: Ինչպես և ցարական ժամանակներում, հայերը այժմ հատկապես Անդրկովկասի ամենաօրինապահ ժողովուրդն են (չնայած սփյուռքի հայենասեր հայերը պնդում են, որ առիթը ներկայանալու պարագային Հայաստանը անհապաղ կանչառուի): Քանի դեռ պետական նույն ճնշումը, որ ծանրանում է գծից շեղվող խորհրդային ամեն մի քաղաքացու ուսերին, ան-

խուսափելիորեն ծանրանում է նաև հայերի վրա, անհմաստ կինջի գանց առնել խորհրդահայ ժողովրդի ազատության նկատմամբ եղած սահմանափակումները, նույնիսկ եթե որևէ Էական «այլախոհ» շարժում չինչի այնտեղ: Որպես տուն, հայրենիք՝ Խորհրդային Հայաստանը մնում է լավագույն ընտրությունը ամեն մի հայի համար, քանի որ այն պատմական Հայաստանի մասն է կազմում: Հայաստանի ներկա աշխարհագրական դիրքը նկատի առնելով, խորհրդային վարչակարգից զատ, որևէ այլ կառավարություն, որքան էլ նա ուժ ու ուզմական աջակցություն ունենա, չի կարող ապահովել հայերի գոյությունն այնտեղ:

Հայ գաղթականների համայնքները տուժեցին և Կիպրոսում, և Լիքանանում պատերազմների հետևանքով: Կիպրոսում, թեպես համայնքը շատ ավելի փոքր է, նրանք երես առ երես կանգնեցին թուրքական բանակի դեմ, որին նրանք անցյալում հանդիպել են ճիշտ նույն կերպ: Լիքանանում, չնայած նրանցից շատերը տուժեցին (հատկապես թերությի առևտրական շրջանում), ուր տեղի ունեցան ծանր մարտեր), հայերը չեզոք մնացին, և նրանց չեզոքությունը ճանաչեցին կովոր կողմերը: Եվ, այսուամենայնիվ, թեժ կոհիվները և խորություն չդնող հրետանաձգությունը երկու կողմերից, քավականին գրիեր պատճառեցին հայերին:

Երկու պատերազմների պատճառած կորուստների դեմ հանդիման, հայերի մեջ գերակշռեց ամենադժվարին պահերին լավագույնն անելու նրանց ավանդական ունակությունը: Երևում է, որ հայ համայնքի Շերսում նույնպես տիրում է հաշտ մժմուրտ, և նախորդ տասնամյակների ներքին գֆուությունը տեղը գիշել է մի անորոշ ներդաշնակության, որն իսկապես անհրաժեշտ է Լիքանանի և Կիպրոսի իրադարձությունների տեսակետից:

<sup>1</sup> Հայաստանը պետք է ոչնչացվի (լատ.):

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԹՈՒԹՅԱՅԻ ՀԱՅ  
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ (1974)

Ա. Անշարժ գույքը և ֆինանսական սահմանափակումները

1. Շատ հայ եկեղեցականներ գերադասում են իրենց անշարժ սեփականությունը նվիրաբերել հայկական եկեղեցիներին, հիվանդանուներին և որբանոցներին: Իշխանությունները հաճախ չեն ճանաչում նման նվիրատվությունները և բռնագրավում են դրանք, ինչպես դա պատճեց առնվազն մի դեպքում՝ Եղիկալեի հայկական հիվանդանոցի հարցում:

2. Իշխանությունները մերժում են ծևակերպել այդ եկեղեցական սեփականատիրական փաստաթղթերը, որոնց համար դատարանը որոշում է կայացրել հօգուտ համայնքի կողնական կամ բարեգործական կազմակերպության:

3. Իշխանությունները սովորաբար մերժում են թույլատրել շինություններ կառուցելու եկեղեցու ազատ հողատարածքներում, որոնց վրա նրանք սեփականատիրական հարկեր են դնում՝ եկեղեցական կազմակերպությանը թույլատրելով օգտագործել դրանք:

4. Եկեղեցիների, դպրոցների, որբանոցների նույնիսկ ժամանակավոր վերանորոգման ու վերականգնման թույլտվությունը տրվում է մեծ դրվագայամբ, ձգձգումներով՝ առանց դրանց ժամկետի ավելացման իրավունքի:

5. Երկու եկեղեցի և երկու դպրոց, մեկը տղաների, որ կոչվում է Ներսեսյան, մյուսը՝ աղջիկների համար, որ կոչվում է Գալֆայան, քանդվեցին Ստամբուլի Հայիսողու շրջանում՝ Ուկեղջուրի վրայով երկրորդ կամուրջը կառուցելու կապակցությամբ: Քաղաքացիական իշխանությունները շրույլատրեցին նույնիսկ քանդված շենքերի փոխարեն ուրիշները կառուցել մեկ այլ տեղ: Որբանոցները իրենց գոյությունը շարունակում են վարձակալված շենքերում, որը, հասկանալի է, ֆինանսական ծանր բեռ է բարեգործական կազմակերպությունների համար: Դա է պատճաներից մեկը, որ այդ որբանոցները մեծապես նվազեցրել են իրենց ծառայությունները համայնքի աղքատ երեխաներին:

6. Քանդված շենքերի և այլ սեփականությունների վաճառքի արժեքը կամրջաշինական վարչության կողմից մինչև օրս չի հատուցվել այդ համայնքային կազմակերպություններին:

7. 1936-ին ընդունված մի կանոնակարգով, բացի ընթացիկ ծախսերից, համայնքային իշխանությունները առանց Վակ ու Ֆլարի հի վարչության թույլտվության չեն կարող ծախսել 250 լիրայից ավելի: Այս կանոնակարգը մինչև վերջերս չի գործել: Խոկ այժմ այդ կանոնակարգի վերահսկողությունը շատ խիստ է: Մինչդեռ նրանք անտեսում են այն փաստը, որ 1936-ի 250 լիրան այսօր համարժեք է 20—25.000 թուրքական լիրայի:

8. Վակուֆլարի վարչությունը հետագայում 5%-ով ավելացրեց համայնքային կազմակերպությունների եկամուտներից գանձվող հարկերը, որոնք արդեն հարկ էին վճարում կառավարությանն ու մունիցիպալիտետից:

9. Համայնքային որևէ սեփականության վաճառքի դեպքում Վակուֆլարը պահանջում է, որպեսզի վաճառքից ստացված գումարը ի պահ տըրպի «Վակուֆլարի բանկերին»: Այդախով, կապիտալը սառեցվում է և համայնքի կազմակերպությունը չի կարող այլևս հետ վերցնել այն, թեպես ծևականորեն պահանջվում է կապիտալը տնօրինելու նրա իրավունքը:

Բ. Կրթական սահմանափակումներ

1. Խիստ վերահսկողություն է հաստատված հայ համայնքի դպրոցների (թվով՝ 32) նկատմամբ: Չնայած այն բանին, որ հայկական դպրոցների տնօրենները թուրքական քաղաքացիներ են, Կրթության դեպարտամենտը նշանակում է նաև տնօրենի թուրք տեղակալ, որը և փաստորեն դպրոցի տնօրենն է և առանց նրա հավանության հայ «դե յուրե» տնօրենը չի կարող ոչինչ անել: Իշխանությունների նպատակն է հարավորին չափ «թուրքացնել» հայկական դպրոցները:

2. Թեպետ հայ դպրոցների տնօրեններին նշանակում են համայնքան իշխանությունները, նրանք պետք է հաստատվեն նաև Կրթական դեպարտամենտի կողմից: Հաճախ երկար ձգձգումներից հետո Կրթության դեպարտամենտը մերժում է հաստատել տնօրենին: Սովորաբար նրանք չեն հաստատում գորեղ անհատականություն ունեցող ու կարող մարդկանց և հետառությամբ հաստատում են միջակայություններին: Վերջին երեք տարվա ընթացքում Կրթ. դեպարտամենտը մերժել է հաստատել չորսից ավելի տնօրենների և այժմ առնվազն երեք դպրոց մենացել են առանց հայ տնօրենների և դեկավում են թուրք փոխտնօրենի կողմից:

3. Հայկական դպրոցների դեկավարները մեծ դժվարությունների են հանդիպում իրենց տարրական դպրոցների համար ուսուցիչներ գտնելու հարցում: Արդյունքը հետևյալն է. դեռ մինչև վերջերս հայկական լիցեյ (բարձրագույն դպրոց) ալյարտած որևէ մեկը կարող էր դասավանդել հայ-

<sup>1</sup> Կրթական սեփականության գծով վարչություններ:

կական տարրական դպրոցում: Այժմ Կրթ. դեպարտամենտի կարգադրությամբ նրանք գրկված են այդ իրավունքից: Տարրական դպրոցի ուսուցչից պահանջվում է ուսուցչական վկայական, որը նա կարող է ստանալ պետական Ուսուցչական դպրոցում չորս տարի ուսանելուց հետո: Մինչդեռ այդ ընթացքում նա հասցնում է հիմնականում մոռանակ համայնական դպրոցում սովորած իր հայերենը: Այժմ հայկական դպրոցները առըվազն 25 այդպիսի ուսուցչի կարիք ունեն: Այդ ազատ տեղերը գրադեցնում են թուրք ուսուցիչները, որը և հենց այդ սահմանափակումների նպատակն է:

4. Վերջերս հայկական լիցեյի առավել կարողունակ տնօրենութիւն առանց որևէ պատճակի հեռացվեց իր պաշտոնից:

5. Ամեն մի այսպես կոչված «մոլիֆետիշ» կամ հրահանգիչ ուզած ժամանակ դատարկ հարցով կարող է մտնել հայկական դպրոց և վատենել տնօրենի թանկ ժամանակը: Օրինակ, նա կարող է հարցնել, թե ինչու է նրանց գրագորությունը հայերեն կամ օտար լեզվով... Կամ թե ինչու են սովորողները աղոթք կարողում ճաշասենյակում և այլն:

6. Անցյալ տարի այդ «մոլիֆետիշները» որբանոցի դպրոցից հեռացնեցին տասը երեխաների այն պատճառարանությամբ, թե «նրանք հայերեն չգիտեն»:

7. 1973—74 ուսումնական տարվա սկզբին Կրթ. դեպարտամենտը մի հրահանգ իշեցրեց այն մասին, որ բոլոր նոր սովորողները կամ իրենց դպրոցները փոխող աշակերտները չեն կարող գրանցվել առանց դեպարտամենտի թուլլտվության: Դա անտեղի ձգձգումների տեղիք է տալիս: Եվ կան հետքեր, երբ աշակերտը այդպիսի թուլլտվություն ստանում է դպրոցները բացվելուց երեք ամիս հետո միայն: Մոտ 40—50 աշակերտ այդ իրավունքից գրկվում է այն պարզ պատճառարանությամբ, որ նրանց հայերեն ու սլավերը պետական պաշտոնագրքում գրանցված են որպես «քրիստոնյա» (առանց «հայ» բառի հավելման), կամ «հայ ուղղափառ», որը նրանց կարծիքով այլ բան է, քան Հայ առաքելական եկեղեցին: Մերժելու այս ծիծաղաշարժ պատճառարանությունները դրսնորում են թուրքական հշխանությունների իսկական մտադրությունը՝ ամեն կերպ կրծատել հայ աշակերտների թիվը:

8. Իշխանությունները մերժում են որոշ դպրոցների անցնելու գիշերօթիկ կարգավիճակի, քանի որ աղքատ երեխաների թիվը մեծ է, մասնավորապես Փոքր Ասիայից եկած չքավոր ընտանիքներում, որոնք կարիք ունեն ավելի լավ խնամքի, ապաստանի և սնվելու, քան իրենց տանը: Բացի այդ, կան բազմանդամ, մինչև տասը և ավելի երեխան ունեցող ընտանիքներ:

Համայնքի կազմակերպությունները այդ կարիքալոր աշակերտների

համար վարձում են նովելիսկ սովորական տներ, որոնք ֆինանսական լրացուցիչ բեռ են հանդիսանում համայնքների համար:

Սրամք են այց սահմանափակումներից մի քանիսը, որոնք բացահայտորեն հակասում են ոչ միայն Լոզանի պայմանագրին, այլև երկիր սահմանադրությանը, քանի որ ծնողները ազատ են իրենց երեխաներին ուղարկելու ցանկացած դարոց: Այնուհետև, չկա մի օրենք, որը արգելեր որևէ մասնավոր դպրոց (օգել օջով) փոխադրելու գիշերօթիկի, երբ պահպանվում են օրինական պահանջները: Այս սահմանափակումները, բացի հակաօրինական ու անտրամարտանական լինելուց, մեծ մասամբ դեմ են նաև մարդու տարրական իրավունքներին և նյոնին, երբ մերժվում է հիվանդանոց պահել կրոնական կամ մարդասիրական հանգամանքներից դրդված, կամ երբ բոնագրավում են դրանք և կամ մերժում աղքատ երթևաններին բարելավելու իրենց կյանքի պայմանները:

#### Գ. Ընդհանուր սահմանափակումներ

Մյուս սահմանափակումները, որոնք ո՞չ ֆինանսական, ո՞չ էլ կրթական բնույթ ունեն, հետևյալներն են.

ա) Հնագույն ժամանակաշրջանից մինչև Հանրապետության շրջանը և Մեսներեսի վարչակարգը հայ համայնքը ունեցել է Կենտրոնական գործադիր վարչություն: 1960-ին այն վերացվեց: Հայ եկեղեցու հիմնական օրենքներից է եղել այն, որ բոլոր համայնքները իրենց տեղական գործադիր վարչությունից բացի, պետք է ունենան նաև իրենց Կենտրոնական գործադիր վարչությունը կամ խորհրդողը: Այդպես է, օրինակ, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Միջին Արևելքում և նույնիսկ Խորհրդային Հայաստանում: Միայն Թուրքիայում է, որ հայ համայնքը այժմ գուրկ է իր կենտրոնական մարմնից:

բ) Թուրքիայի իշխանությունները Հայ եկեղեցու խորհրդին թուլլատուել են պահպանել իր գոյությունը ու գործունեությունը: Վերջին կրոնական խորհրդությունը ընտրվել է 1961-ին, երբ ընտրվել է նաև Երևան պատրիարքը: Պատրիարքը դիմել է իշխանություններին՝ թուլլատրելու նոր խորհրդի ընտրություն: Բայց մինչև օրս այդ թուլլտվությունը չի ստացել:

գ) Համայնքային բոլոր կազմակերպությունները նախկինում կոչվում են «Մ յու ֆ ե թ ե ր ի հ ե յ ե թ ի»: 1965-ին Կակուֆլարի դեպարտամենտը այն վերանվանեց «Յ ո ն ե ր ի մ ք ո ւ ր ո ւ լ ո ւ լ ո ւ լ»: Երբ հարցնում են, թե այդ փոփոխության իմաստը որն է, պատճախանում են, որ ընդամենը նախկին արարական արտասանությունը ժամանակակից թուրքերենով փոխադրվել է: Սակայն պարզվում է, որ այդ փոփոխությունը շատ ավելի կարևոր նշանակություն ունի: Սուաջին դեպքում «վակիֆ» կազմակերպությունը օժտված էր սեփականատիրոց իրավունքով՝ վաճառելու, գնելու,

ծեռք բերելու, կառուցելու, վերանորոգելու և այլն: Մինչդեռ երկրորդը ընդամենը կառավարող մարմին է՝ առանց սեփականատիրական իրավունքի: Այդ քաղաքացիական իշխանությունները պատճառաբանում են, թե համայնքային կազմակերպությունը այլևս չի կարող ծեռք բերել կամ տնօրինել նոր սեփականությունները: Ոչ եւ դրանք ստանալ որպես նվիրատվություն կամ ժառանգություն:

## ՀԱՎԵԼՎԱԾ !!

Հայ հեղափոխական դաշնակցության անունից պր-ն Զեյմս Լ. Թաշյանի Փիլս-ին ներկայացրած վկայության մի հատված (10 հունիսի 1976, Բուստոն, ԱՄՆ):

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՆՈՐ ՎԵՐԱՐԾԱՐԾՈՒՄԸ

Իրենց հայենիքը կորցնելուց և այնտեղից բոնի տեղահանվելուց ի վեր հայերը օգտագործել են ամեն մի առիթ՝ իրենց պահանջատիրությունը ներկայացնելու համար, երանք այդպես են վարվել առաջին համաշխարհային պատերազմից հետո Փարիզի հաշտության կոնֆերանսում, Լոզանի կոնֆերանսում, Ազգերի լիգայում և կրկին՝ Սիավորված ազգերի 1945-ի Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսում: Նրանք համապատասխանաբար պաշտպանել են Կարսը և Արդարանը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու խորհրդային պահանջը (տես Բրիտանական Ֆորին օֆիսի գեկուցագիրը 1945-ի հոկտեմբերի 5-ին):

Սակայն 1965-ին, այսինքն հայկական ցեղասպանության հիմնայակին, հայերը ամենուր ամենայն վճռականությամբ պահանջեցին վերադարձնել իրենց հայենիքը ու վերադարձնել այնտեղ: Բազմահազարանոց քայլերթեր տեղի ունեցան Բեյրութում, Թերիանում, Աթենքում, Փարիզում, Մարտիրոս, Նյու Յորքում, Բուստոն Ալբետում, Մոնտելիուում և այլուր: Ավելի սակավաթիվ մասնակցությամբ՝ Լոնդոնում, Մյունիսենում, Օտոտավյում, Սիդնեյում և այլուր: Խորագրեր հղվեցին ՄԱԿ-ին, պետությունների հեղափարներին ու դեսպանատներին: Որոշ երկրներում ցուցարանները բախվեցին ոստիկանության հետ:

1975-ին ցեղասպանության 60-ամյակը ամենուր օշվեց շատ ավելի մարդաշատ միջոցառումներով: Օրինակ, Բեյրութում ցուցին մասնակցեց 10 հզ.-ից ավելի հայ, Նյու Յորքում՝ 100 հզ. և նույնքան Բուստոն Ալբետում: Ավելի քան 20 հզ. հայեր զանգվածային ցուցի դուրս եկան Թերիանում:

Ցեղասպանությունից 61 տարի անց, հատկապես նոր սերնդի մեջ

սակավ պահպանվում է իրենց արդարացի իրավունքները վերականգնելու վճռականությունը:

Վերջերս հայկական որոշ գաղտնի կազմակերպություններ կարծես վերականգնել են ահաբեկչության հուսահատ քայլերի դիմելու գործողությունները: Սա նոր զարգացում է, որը վկայում է որոշ հայերի մոտ խաղաղ միջոցներով իրենց արդար դատը հետապնդելու հուսահատության մասին:

Հայերը լավ են կազմակերպված: Հայ դատը հետապնդելու համար բոլոր երկրներում, ուր հայեր են ապրում, երանք ունեն կենտրոնից դեկավարվող Հայ ազգային կոմիտեներ, որոնք բուռն գործունեություն են ծավալում իրենց ապրած երկրում և մի շարք այլ պետություններում: Այդ և սենատի 1970-ի և 1971-ի բանաձերը՝ Հայկական հարցը ՄԱԿ-ում բանաձնը հայերի ցեղասպանության վերաբերյալ<sup>1</sup>:

Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հանձնաժողովի թուրքական լոքրին կատաղի դիմադրություն ցոյց տվեց Ենթահանձնաժողովի հայերի ցեղասպանության մասին գեկուցին: Հայուրավոր նամակներ ուղարկվեցին Ենթահանձնաժողովի անդամներին՝ դատապարտելով այդպիսի միջամտությունը թուրքիայի ներքին գործերին: Հետևանքը եղավ այն, որ Ենթահանձնաժողովի (ԺՆԿ) շատ անդամներ, այդ թվում՝ Միացյալ թագավորության փորձագետը, բողոքարկեցին գեկուցի անաշառությունն ու գեկուցողի անկախությունը որոշակի քաղաքական ճնշումից<sup>2</sup>:

## Պ ա հ ա ն ջ ն ե ր

1. Հայերը պահանջում են, որպեսզի 1915-ին և հաջորդ տարիներին հայ ժողովրդի նկատմամբ գործադրված ցեղասպանությունը ՄԱԿ-ի միջո-

<sup>1</sup> 1980-ական թթ. Յովնապես ԱՄՆ-ի կոնֆեքս քանից անդրադառն է այդ հարցին, տարբեր փուլերում (վերջին անգամ 1990-ի հունվարին):

<sup>2</sup> Դա 1974 թվականին էր: Հարցը այնունես ընդմիջումներով քննարկվեց միջև տաթողի 24-րդ կետը, որտեղ հայերի մեծամասնությամբ ընդունեց փասէր. «Անկախ հեղինակությունների և վկաների արժանահավատ ասված հայ բնակչության կեսից ավելին, ըստ երևությին, սպանվել կամ մահվան կարավաններ ին փաստաթերով, ինչպես նաև այն ժամանակ Օսմանյան կայսրությունում հավաներով»:

ցով դատապարտվի միջազգային ընկերակցության, ինչպես նաև հենց Թուրքիայի կողմից:

2. Դետք է ընդունվի այն իրողությունը, որ 1915-ին սկսված ցեղասպանությունը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ հայերին չի արտօնվում վերադառնալ իրենց հայրենիքը, որի հետևանքով Ծրաբը օտար երկրներում աստիճանաբար կորցնում են իրենց ազգային ինքնությունը. և որ հնագույն հայ մշակույթի հուշարձանները նպատակալաց կերպով ավերվում են Թուրքիայում, կամ թողնվում բախտի քմահանուքին. որ Թուրքիայի հայությունը ենթարկվում է հայածանքների, — ահա այն ամենը, ինչ վիճակի է հայերին Երկա Թուրքիայում:

3. Այս անարդարությանը վերջ տալու համար այժմ Թուրքիայի բռնագրավման տակ գտնվող և բնիկ հայությունից գրկված Հայաստանի մեծ մասը պետք է վերադարձի իր օրինական տիրոջը՝ հայ ժողովրդին:

#### ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

##### Պատմական ակնարկ

BURNEY, Charles, and D. M. LANG, *The Peoples of the Hills, Ancient Ararat and Caucasus*, London and New York, 1971

DER NERSESSIAN, Sirarpie, *The Armenians*, London and New York, 1969

LANG D. M., *Armenia, Cradle of Civilization*, London, 1970

LEHMANN-HAUPT, C. F., *Armenien Einst und Jetzt*, 3 Bd., Berlin, Leipzig, 1911—1931

LYNCH, H. F. B., *Armenia. Travels and Studies*, 2 vols., London, 1901; Reprinted by Khayats, Beirut, 1965

MORGAN, Jacques de, *Histoire du peuple arménien*, Paris, Nancy, 1919

ORMANIAN, Patriarch Malachia, *The Church of Armenia*, new ed., London, 1955

PASDERMADJIAN, H., *Histoire de l'Arménie*, 2nd ed., Paris, 1964

##### Հայկական հարցը և օսմանյան ցեղասպանությունը

ANDERSON, M. S., *The Eastern Question, 1774—1923*, London, 1966

BRYCE, James, Viscount, *Transcaucasia and Ararat*, London, 1877

DAGHLIAN, Levon K., *Under the Gallows*, Belmont, Mass., 1970

GIDNEY, James B., *A Mandate for Armenia*, Ohio, 1967

GÖKALP, Zia, *The Principles of Turkism*, trans. Robert Devereux, Leiden, 1968

HOSTLER, Charles W., *Turkism and the Soviets*, London, 1957

HUOSEPIAN, Marjorie, *Smyrna 1922: The Destruction of a City*, London, 1972

HOVANNISIAN, Richard G., *Armenia on the Road to Independence, 1918*, University of California Press, 1967

HOVANNISIAN, Richard G., *The Republic of Armenia, vol. 1: 1918—1919*, University of California Press, 1971

KAYALOFF, Jacques, *The Battle of Sardarabad*, The Hague and Paris, 1973

KARABEKIR, Kazim, *Istiklal Harbimiz (Our War of Independence)*, Istanbul, 1960 and 1969

KAZEMZADEH, F., *The Struggle for Transcaucasia (1917—1921)*, New York and Oxford, 1951

LEPSIUS, Johannes, *Deutschland und Armenien, 1914—1918*, Potsdam, 1919

LEWIS, Bernard, *The Emergence of Modern Turkey*, 2nd ed., London, 1968

LUKE, Sir Harry, *Cities and Men, an Autobiography*, vol. 2, London, 1953

MORGENTHAU, Henry, *Ambassador Morgenthau's Story*, New York, 1918

NAIM BEY, *The Memoirs of Naim Bey. Turkish official documents relating to the deportation and massacres of Armenians*, 2nd ed., Newtown Square, Pa., 1964

NALBANDIAN, Louise, *The Armenian Revolutionary Movement*, University of California Press, 1963

NERSISIAN M., G., (ed), *Genotsid Artyan v Osmanskoy Imperii*, Yerevan, 1966

NOREHAD, Bedros, *The Armenian General Benevolent Union*, New York, 1966

SURMELIAN, Leon, *I Ask you, Ladies and Gentlemen*, London, 1946

TORIGUIAN, Shavarsh, *The Armenian Question and International Law*, Beirut, 1973

TOTOVENTS, Vahan, *Scenes from an Armenian Childhood*, trans., M. Kudian, London, 1962

[TOYNBEE, Arnold, (ed.)], *The Treatment of Armenians in the Ottoman Empire, Preface by Viscount Bryce*, London, 1916

TRUMPENER, Ulrich, *Germany and the Ottoman Empire, 1914—1918*, Princeton, 1968

VRATSIAN, S., Hayastani Hanrapetutiu, (The Republic of Armenia), Beyrut, 1958

WERFEL, Franz, The Forty Days [of Musa Dagh], trans.  
G. Dunlop, London, 1934

ZENKOVSKY, Serge A., Pan-Turkism and Islam in Russia,  
Cambridge, Mass, 1960

ARMENIA IN THE NINTIES  
PROSPECTS AND DANGERS

Christopher J. Walker

ՀԱՅԱՍՏԱՆ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ  
ՀԵՇԽՆԿԱՐՆԵՐ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐ

Ութսունական թվականներին մենք դարձանք Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող նշանակալից փոփոխությունների վկաները։ Առաջին հերթին դա Հայաստանի և Ղարաբաղի միավորման լայնամասշտար կամպանիան է։ Ղարաբաղի ժողովրդի սկսած և երկու տարվա ընթացքում տարվող այդ պայքարը շարունակվում է։ Խշանությունների՝ հիմնախնդրի վերաբերյալ արդարացի և դեմոկրատիայի սկզբունքների վրա հիմնված որոշում ընդունելու ցանկություն չունենալը ոչ միայն առաջ է բերում հայերի հուսախարություն, այլև վտանգ է ստեղծում ամբողջ ռեգիոնում։ Բախման ընդլայնվելու և սաստկանալու հնարավորություն գոյություն ունի։ Ութսունական թվականների ընթացքում տարվում էր նաև մեկ այլ՝ 1915 թվականի եղեռնի ճանաչման կամպանիա։ Այս առումով որոշակի առաջընթաց կա, մասնավորապես, Եվրոպական խորհրդարանում, սակայն այդ հարցը մեծ ջանքեր կպահանջի և մեծ չափով օրակարգում կմնա իննունական թվականներին։ Միջուրքի շրջաններում նկատելի է առավել մեծ միասնություն, մասամբ որպես Ղարաբաղյան շարժման հետևանք և մասամբ որպես եղեռնի ճանաչման պայքարի արդյունք։ Անցյալ տարի Հայաստանի հյուսիսում տեղի ունեցած ողբերգական երկրաշարժը նույնապես խթանեց այդ միասնությունը։ Ինչ էլ լինի, պարզ է, որ ութսունականներին առաջ քանչված խնդիրներն առավել մեծ աշխատանք կպահանջեն իննունականներին։

Քանի որ Խորհրդային Հայաստանն այսօրվա վիճակով միակ հայկական պետությունն է, այն էլ առաջին հերթին պետք է լինի մեր տեսադաշտում, այլ ոչ ենթադրյալ Հայաստանը կամ հայկական սիյուրքի համայնքներից որևէ մեկը։ Ղարաբաղից և հանրապետության հյուսիսի վերականգնումից բացի, Հայաստանը պետք է լուծի նաև այլ կարևոր խնդիրներ։ շըրջակա միջավայրի առողջացում, հասարակական կյանքի ժողովրդավարացում։ Այս հարցերը, հավանաբար, օրակարգում կիրանեն նաև իննունական թվականներին։ Սակայն առավել կարևոր թեման, որ գրադեցնում է մարդկանց մտքերը և չի իջնում մեր մամուկի եզերից, հենց Ղարաբաղն է։

Կարելի է լոկ ապշել Արևադի Վոլսկու դեկավարած Հատուկ կառավարման կոմիտեի ձախողման առթիվ: Շատ անհասկանալի բաներ կան Վոլսկու անհաջողության պատճառների առնչությամբ և բազմաթիվ հարցեր են ծագում, որոնց դժվար է պատասխանել: Անկողմնակալության պատրանք ստեղծելու ձգուղ իշխանություններն արդյո՞ք աղբեջանցիներին ծածուկ բարենպատող գաղտնի պլան ունեն Անդրկովկասում: Անցած երկու տարվա իրադարձությունների արդյունքում աղբեջանցիների դիրքերը նախընտրելի են երևում: Այսօր զինված աղբեջանցիները շրջապատում են Ղարաբաղը, և Բաքու Հայաստանին տնտեսական շրջափակում է պարտադրում: Տարօրինակ է, որ Մոսկվան ոչ մի միջոց չի ծեռնարկում ընդեմ Բաքվի գործողությունների: Աղբեջանցիների զինված բանդամերը հարձակվում են Ղարաբաղի, Հայաստանի, այդ թվում նաև Երևանից տուժածների համար օգնության բեռներ տեղափոխող տրանսպորտի վրա, թալանում և ոչնչացնում են դրանք և ոչ մի պատասխանաւություն չեն կրում:

Ավելին, ոեգինում տեղի ունեցող իրադարձությունների մասին լուրերը ԽՍՀՄ-ում մատուցվում են աղբեջանցիների համար նպաստավոր լուսի ներք: Եթե խկացես այդ ամենը տեղի է ունենում գաղտնի պլանի համաձայն, այս նման իրավիճակում ինչպես՝ «պետք է գործեն հայերը» ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում:

Սրանք բարդ հարցեր են, որոնք անհրաժեշտ են քննարկել, եթե նույն նիսկ հստակ պատասխաններ էլ չունենան:

Միևնույն ժամանակ, հայերը հենց նրանով, որ առաջ են քաշել Ղարաբաղյան հարցը, այն արդեն դարձել են օրախնդիր: Մենք պետք են աշքաթող չանենք հայերի համար բարենպատ այս գործոնը: Հիմնախնդիրը օրակարգ է մոցվել: Դրա թաքցնելը և ժխտելը անցյալ փոկ է: Դա որոշակի հնարավորություններ է բացում: Չնայած հայերն այսօր նվազ նախընտրելի իրավիճակում են, բավարար համառություն, համբերություն և դիվանագիտություն հանդես բերելով, մշտապես և անդրդվելի քաղաքական կամպանիա անցկացնելով, հնարավոր է, որ Ղարաբաղը միավորվի Հայաստանի հետ: Բայց եթե դա կայանա էլ, տեղի կունենա ոչ շուտ:

Ղարաբաղյան խնդիրը երկու տեսանկյուն ունի. Վարչական կառուցվածքը փոխելու բուն պայքարը և խնդրի լուսաբանումը, որը նույնքան կարլոր է: Հարկ է քննարկել ՏԱԱՍ-ի և խորհրդային այլ նորությունների գործակալությունների կողմից խնդրի լուսաբանման հարցը: Ինչո՞ւ դրանք անշատ տեղեկություն չեն տպիս հայկական դիրքորոշման վերաբերյալ: Սումգայիթյան կոտորածը նշվում է լոկ հպանցիկ, հաշվի չի առնվում այն փաստը, որ Անդրկովկասում առաջինը բոնության դիմեցին աղբեջանցիները սումգայիթյան կոտորածով: Միևնույն ժամանակ հայերին մեղադրում

են այն բանի համար, որ նրանք պահանջում են Հայաստանի հետ Ղարաբաղի միավորում՝ չնայած դա լիովին համապատասխանում է վերակառւցման գաղափարներին:

Ժողովրդավարության և մշակութային ինքնավարության արդարացի պահանջները ճնշվում են, իսկ Զիյա Բունիաթովի և նրա մամելլավիկների շովինիստական հարձակումների առջև կանաչ լուս են վառում Բաքվում: Ղարաբաղի հայկական պահանջատիրությունը աշքի է ընկնում աներկիմաստությամբ և ուղղամտությամբ: Դա հզոր և պարզ գաղափար է. արդարություն և ժողովրդավարություն Ղարաբաղի ժողովրդի համար: Հետևաբար, այդ պահանջը բավարարելու անկարող ցանկացած իշխանությունները պետք է ձգտեն որքան հնարավոր է մշուշապատել բախտան իրական բնույթը: Այստեղից է՝ Ղարաբաղյան հարցում լրատվության հետ կատարվող ծեռնածության կարևորությունը: Եթե մենք նույնիսկ չենք կարող բացատրել ԽՍՀՄ-ում նման լրատվական ծեռնածության պատճառը, կարուր է ընդունել, որ դա տեղի է ունենում և միշտ հիշել այդ մասին:

Թե ինչո՞ւ է նման բան տեղի ունենում ԽՍՀՄ-ում, այն էլ հրապարակայնության դարաշրջանում, առեղծվածներից միայն մեկն է: Բայց կանաչ մյուսը, զանգվածային լրատվության արտասահմանյան միջոցները ինչո՞ւ են հետևում խորհրդային գծին ու հիմնականում անհաջող լուսաբանում կամ բացատրում հայերի չափավոր և օրինական պահանջները: Մենք տեսնում ենք, թե ինչպես «Նյու Յորք թայմսի» մուկովյան թյթակից Բիլ Քելլերը համաձայնում է Բաքվի մեկնակերպին և թաքցնում բախտան իրական բնույթը՝ Ղարաբաղի ժողովրդի ճնշվածությունը աղբեջանական կառավարման ներքը: «Սփեքթեյթը ու վիքիում» հրապարակված է «Խելլի սթարի» մուկովյան թյթակից հոդվածը, որտեղ իշխում է հակահայկական տրամադրվածությունը: Ափսոսանքի է արժանի նաև այն, որ «Ընդեփենդնեֆից» Ուսիկերտ Բորնուելլը բախտան մասին գրում է, լինելով միայն Բաքվում չայցելելով Երևան կամ Ստեփանակերտ: Զուտ քաղաքական բանակեն-քննարկումների ոլորտում ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ամերիկայում, հակահայկական տեսակետները, փաստորեն, ավելի մեծ օժանդակության արժանացան, քան հայկական տեսակետը: Ասվածից պարզ է դառնում, որ ԱԱՆ-ում զանգվածային լրատվության միջոցներ մուտք գործելու համար հայերը պետք է պայքարեն: Հայկահայկական լորբիի կողմից օգտագործվող (և բավական լայնորեն) եղանակներից մեկն այն է, որ հանուն Ղարաբաղի պայքարը Երևանայցվում է ոչ թե որպես պայքար արդարության և ժողովրդավարության համար (այսինքն՝ խնդիր, որ կարելի է լուծել), այլ որպես Եթնիկական, ցեղային, կրոնական և այլն, այդ իսկ պատճառով՝ փակության, լուծում չունեցող:

Նրանք, ովքեր Արևմտաքում օժանդակում են Ղարաբաղյան շարժմանը, իրենց փաստարկները պետք է արտահայտեն պարզ, հստակ և ամ-

բողջական: Այս ամենը, ինչ վերաբերում է դարարայան ժողովրդի փաստացի վիճակին, պետք է արտացոլվի, մեկնաբանվի, ոչինչ չի կարելի մի կողմ թողնել՝ որպես ակնհայտ բան: Զանկացած աղբբեջանամեն փաստարկ կամ հայտարարություն, որքան էլ անհեթեթ լինի, պետք է մեկնաբանվի, դրանք չի կարելի անպատճախան թողնել, քանի որ դա կդիտվի որպես աղբբեջանական տեսակետին սատարելու վկայություն: Զիյա Բուհաթովի առաջ քաշած ցանկացած փաստարկ պետք է քննարկվի ամբողջությամբ: ԱՇԻՐԱԺԵՑ է մեկնաբանել նաև հիմնախնդիրը կողմնակալ լուսաբանող արևմտյան լրագրողների հոդվածները:

Իրենց հայացքներն առաջ մղելիս հայերին անհրաժեշտ է լինել քննախուզ, մանրակրկիտ և մանրամասների մեջ ճշգրիտ: Պահանջների արդարացիությունը դեռ չի նշանակում դրանց ինքնակա իրականացում: Իրավունքներն անհրաժեշտ է ապացուցել, պաշտպանել, դրանց մասին գրել, պայքարել հանուն դրանց, լորբիափորել ազգային և միջազգային համաժողովներում: Հանուն մարդու իրավունքների և ժողովրդավարական ազատությունների կոչերը քաղաքական գործընթացի լոկ մի մասն են ամբողջ աշխարհում չնայած դրանք ցանկացած քաղաքական պահանջի ամենակարևոր հիմքն են: Այս պարագաներում գլորալ հայտարարությունները անտեղի են, Դարաբաղին վերաբերող քննարկումներում դրանք չպետք է լինեն: Դրանք միայն կամրապնդեն ստերեոտիպները Արևմտաբույն, իսկ ստերեոտիպները և ընդհանրացումները չեն կարող օգնել: Անհրաժեշտ է ստեղծել մարդու իրավունքների խախտման, ազգային իրավունքների ուժահարման և այլ կոնկրետ դեպքերի հավաքանիներ: Դա մանրազնին և քրտնաջան աշխատանք է պահանջում:

Ղարաբաղյան հարցի վերլուծությունը ցույց է տախիս, որ հայերի պահանջները՝ փոխադրած ժողովրդավարության և մարդու իրավունքների լեզվի, շատ ավելի ծանրակշիռ են հնչում: Դրանք ուղղված են ընդդեմ Աղրբեջանի կողմից 1923 թվականից Ղարաբաղում հաստատված անօրինության, մարդու բնական իրավունքների ժխտման, երեխաներին հայոց լեզու սովորեցնելս արգելելու, այն տերիտորիաներն աղբբեջանցիներով բնակեցնելու, որոնք լրել են հայերը հարազատ հողի վրա կյանքի անտառելի պայմանների պատճառով: Հայերը շեշտը պետք է դնեն ժողովրդավարական սկզբունքների վրա, իսկ դա էլ հենց անհրաժեշտ հնչողություն չունեցավ վերջին 20 ամիսների ընթացքում:

Ժողովրդավարության և մարդու իրավունքների համար պայքարը շատ հեշտորեն կարող է վերափոխվել բախսան՝ ավանդական ազգամիջան թշնամանքի հողի վրա: Մենք տեսել ենք, թե ինչպես դա տեղի ունեցավ Լիբանանում և Օւստրալիայում: Ողբերգություն կլիներ, եթե դա տեղի ունենար Անդրկովկասում: Խսկ դա կարող է պատահել, եթե խաճա հայերի ձայնը հանուն ժողովրդավարության և դրան փոխարինի հնչել կոչե առ Արև-

մուտք՝ օգնելու իրենց քրիստոնյա Եղբայրներին և քույրերին: Եթե այդպիսի կոչ երբէ հնչի, այն ժամանակ բախումը, հնարավոր է, անլուծի կդառնա: Հայերը եզակի հնարավորություն ունեն ընտրություն կատարելու. կամ օժանդակել պայքարին Անդրկովկասում՝ դրա եռթյունն արտահայտելով ժողովրդավարության սկզբունքներով, կամ բախումը հավերժ և անլուծելի որմնաշարել ցեղային ատելության միջնադարյան ամրոցի պատերի մեջ:

Եկեք քՅԱՐԿԵՆք արևմտյան լրագրողների տարօրինակ հակվածությունը աղբբեջանական տեսակետին և Ղարաբաղի կարգավիճակը փոխելու հնարավորության ժամանակը: Հնարավոր է, դա լրագրողական անտեղյակության հետևանք է, հնարավոր է՝ աղբբեջանցիների կողմից «քարեկամական» ճնշման կամ այլ ազդեցության արդյունք: Բայց, կարծում եմ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև արևմտյան մտածողության հենքը, որը քելերյան տիպի հոդվածների լուս աշխարհ գալու հնարավորություն է ստեղծում: Ես կհանդիսեի մի այսպիսի միտք արտահայտել պարզունակացնող անդյուրաբեկ արևմտյան խելքն ուզում եմ, որ ամբողջ Արևմտության քրիստոնեական և «լավ», իսկ ամբողջ Արևելք՝ մուսուլմանական և «վատ», որի վրա կարելի լինի պրոյեկցել իր ողջ «վատը»: Արևելյան այնպիսի ազգերի գոյությունը, ինչպիսին հայերն են, որոնք քրիստոնյաներ են, հակասում է այդ հիմնարար դասդասմանը: Արևմտյան մտածողությունն էլ հենց չի ուզում իմանալ քրիստոնյա ազգերի մասին Ասիայում:

Հասկանում եմ, որ սա լոկ տեսություն է և որ կարող է մտացածին թվալ: Բայց կարևոր է հրաժեշտ տալ հայերի մեջ բավականին տարածում գտած այն գաղափարին, թե մյուս քրիստոնյա ազգերը միշտ կօգնեն իրենց: Դա անհրատես քաղաքականություն է և ժողովուրդների ու ազգերի միջև հրական կապերի լիովին խեղաթյուրված պատկերացում: Քրիստոնեությունը որպես ընդհանրություն գոյություն ունի միայն միջին դարերից սկսած և միայն 17-րդ դարից, այսինքն՝ 300 տարի, Եվրոպան ինչ-որ իմաստով քրիստոնեական աշխարհամաս է: Եվրոպայի ժողովուրդներին ողողել են ռացիոնալիզմի, մատերիալիզմի և ժողովրդավարության օվկիանոսների ալիքները: Ավելին քրիտանիայի տնտեսական և ստրատեգիական շահերը նրան ստիպել են վերջին 150 տարում Մերձավոր Արևելքում իր զիսավոր դաշնակից դիտել ոչ թե մի որևէ քրիստոնեական երկրի, այլ Շոտոմանյան Թուրքիային: Վիկտորիա թագուհին պաշտում էր Սրբու Համբդի Թուրքիան: 1870-ական թվականներին նա սպասում էր հրաժարվել գահից, եթե իր կառավարությունը ընդգծված թուրքամետ քաղաքականություն չվարեր: Ոչինչ չի կարող ավելի հստակ ցուցադրել, թե որքան անկենտունակ է ազգերի նվիրվածության, հավատարմության գաղափար՝ հիմնված կրոնի վրա: Այնուամենայինվ, հենց այդ գաղափարին են մինչև

այժմ շարունակում մնալ կապված շատ հայեր: Դա մեղյալ գաղափար է, որը հայերի գործն առաջ չի տանի ոչ մի պայքարում: Ժողովրդավարության ներդաշնակ հարաբերությունները բոլոր ժողովրդների միջև, ինչպիսին եւ ինչի նրանց մշակութային կամ էթնիկական անցյալը՝ ահա միակ հնարավոր սկզբունքները ներկայում և ապագայում: Եվ հենց այդ սկզբունքներն աչքի առաջ ունեն հայերը, երբ առաջ են քաշում Ղարաբաղի հիմնախնդիրները՝ շնայած դրանք այնքան եւ պարզորոշ չեն արտահայտվում: Ղարաբաղի ժողովրդին ամենից շատ կարող է օգնել ժողովրդավարության լեզուն, որը բարձր և հստակ է հնչում: Եթե դուք ուզում եք օգնել նրան, խոսեցրեք ժողովրդավարության լեզվով: Նոկ եթե ուզում եք օգնել արբեջանական նրան, խոսեցրեք կրոնական տարրերությունների, խաչակրաց արշավանքների և միջնադարի լեզվով:

Հայաստանում, Ղարաբաղից բացի, օրակարգում կան և այլ կարևոր հիմնախնդիրներ: Բնապահպանական պայքարը դրանցից մեկն է և այն տարբիս է: «Նախրիտ» գործարանը փակելու կամպանիան այսօր պայքարի մի մասն է: Մեծամորի ԱԵԿ-ը կանգնեցված է, անշուշտ, դա բարիք է ամբողջ երկրի համար: Բայց այդ որոշման հակառակ կողմը՝ այս ձմեռ էլեկտրականության պակասն է՝ դրանից բխող տնտեսական և անձնական անհարմարություններով հանդերձ: Բնապահպանական պայքարից բացի, կա նաև դեպոպուլյացիայի (արտագաղթի) հիմնախնդիրը, որի դեմ չի կարելի աչք փակել: Ձեռնորուն է, արդյոք, Հայաստանին, ասենք նաև ողջ ժողովրդին, որ հազարավոր հայեր արտագաղթեն Կալիֆոռնիա: Անհրաժեշտ է արդյոք ԱՄՆ-ում նրանց քաղաքական փախստականների կարգավիճակ տալ: Ձեմ ուզում այստեղ այս հարցի առթիվ վիճարանության մեջ մտնել, բայց ուզում եմ նշել միայն այն, որ կարող է աչքաթող արվել վիճարանությունների ժամանակ, որ գործողությունները հետևանքներ են ունենում: Մի րոպե պատկերացնենք, որ ապագայում մեծ թվով հայեր հսկապես մեկնում են Կալիֆոռնիա: Արդյո՞ք հայ մշակույթն ու ինքնությունը ի վիճակի կլինեն դիմանալ մի այլպիսի արյունահոսության: Անցյալում մեծ հայրենասերներ են այն մարդիկ, ովքեր 17-րդ դարի սկզբի թուրքաբակական պատերազմների հետևանքով ցաքուցրիվ եղած հայերին համոզում են հետ վերադառնալ և ապրել Հայաստանում: Նրանք տեսնում են այդպիսի քաղաքականության հետևանքները. նրանք տեսնում են հեռավոր ապագան: Տարօրինակ է, որ այսօր հակառակն է կատարվում:

Հայկական քաղաքական ակտիվության մեկ այլ կարևոր ոլորտ է 1915 թվականի եղենն ճանաշելու պայքարը: Սենք պետք է ընդունենք հսկայական հաջորդություններն այս ուղղությամբ, որոնք ձեռք են բերվել ությունականներին. ժողովրդների մշտական տրիբունայի դատավճիրը 1984 թվականին, ՄԱԿ-ի կողմից 24-րդ պարագրաֆի ընդունումը, որ պատրաստել է Բենջամին Վիտակերը ժնևի Ենթահանձնաժողովում և բժերկու-

թյունը Եվրոպական խորհրդարանում 1987 թվականի հունիսին Ստրասբուրգում: Սակայն բարեհոգության տեղիք պիտի չտալ, և հայերը պետք է պայքարեն յուրաքանչյուր դպրումի համար իրենց պահանջները այլ համաշխարհական համաժողովներում ճանաչեն տայլու ճանապարհին, և դա մեծ շանքեր կապահանջի: Բանն այն է, որ ինչպես և ղարաբաղյան հիմնախնդիրի դեպքում, Եվրոպաի որոշ հաստատություններում և կառավարություններում, ինչպես նաև ամրող Ամերիկայում առկա է բնագրային մի կայուն միտում՝ ընկապելու առաջին հերթին, իսկ հնարավոր է նաև միայն, հակահայկական տեսակետում: Մենք դա տեսանք հայկական տեսակետուն արտահայտած Ավել Սանուկարանին ԱՄՆ-ի պետքարտուղար Ջորջ Շուզի տված պատասխանում: Ամերիկյան իշխանությունները ցուց տվեցին, որ իրենք պատրաստ են ուշադրության սրբանացնել նրանց հայացքները, ովքեր բոնություն ու անարդարություն են գործել, այլ ոչ թե նրանց գոհերի հայացքներն ու գագամունքները: Միա այն կառուցվածքը, որի շրջանակներում ԱՄՆ-ում ըննարկումներ են տեղի ունենում 1915 թվականի ցեղասպանության վերաբերյալ: Թուրքիայի կարիքները, նրա ցանկությունները, Վրոյովմունքի և Վիրավորված արժանապատվության հազարմունքներն անմիջական և մերժեալորեն հաշվի են առնվազ: Ներկա և անցյալ ցավը, որ զգում է հայ ժողովուրդը ոչնչացման, հրեշտակ կոտորածի և որպես դրա հետևանք՝ հայունների կորսույան պատճառով, վարչակազմը չի ընկալում: Միա թե ինչու պայքարը պետք է շարունակվի:

Նոկ ինչպիսի՞ք են եղակացությունները: Գլխավորը, որ եղեննի վերաբերյալ յուրաքանչյուր խոսք, հետազոտություն լինի հնարավորին չափ առավել պարզ, հստակ, որքան հնարավոր է առավել մանրակրկիտ հիմնավորված լինի սկզբանարդությունը: Կարելի է միայն ափսոսալ, որ հայերն այսքան երկար հույս էին որել երկրորդական կամ կասկածելի աղբյունների վրա՝ պարզաբանելով 1915 թվականին կատարվածը, այլ ոչ թե միանգամից դիմել լավագույն արկիհիլային փաստաթղթերին: Ափսոս, որ ոչ չի ապարատել Գերմանիայի և Ավստրիայի առնիվների փաստաթղյունների անզերեն լեզվով ժողովածու՝ չնարած որոշ փաստաթղթեր թարգմանվել են ֆրանսերեն: Դրա անհրաժեշտությունն առանձնապես զգացվում է, եթե բանավեճ է տարիում եղեննի փաստի շուրջ, կամ եթե դրա վերաբերյալ լրացրեցին տեղեկություն է պահանջվում, այդպիսի ժողովածու չկա սակաւ: Այս ասպարեզում 90-ական թվականներին պետք է հսկայական աշխատանք տարվի: Հայոց եղեննի վերաբերյալ դեռ բազմաթիվ կարևորագույն հետազոտություններ պետք է կատարվեն:

Մի մեծ բացրողում ևս կա: Դա այն է, որ չի եղեկայացվում եղեննի համագույն պատճառը և դրա հանգամանքները: Ցանկացած ոչ հայ, եթե առաջին անգամ լսում է եղեննի մասին, ուզում է հմանալ, թե ինչու է դա տեղի ունեցել: Ինչո՞ւ են թուրքերը սպանել բոլոր հայերին: Եթեմն

լուրջ պատասխան է տրվում, ըստ երևույթին, ճիշտ պատասխան. պահության հետևանքով՝ թուրքական ժողովուրդների կողմից թուրքական եթենոսի հիման վրա միասնական պետություն ստեղծելու ցանկությամբ, ինչը ենթադրում է հայերի ոչնչացում: Նրանք, ովքեր ոչ այնքան քաջածնոր են պատմությանը, ասում են, թե եղենք տեղի ունեցավ, որովհետև թուրքերը մուսուլման են, հայերը քրիստոնյա, իսկ մուսուլմանները միշտ ուզում են սպանել քրիստոնյաներին: Սակայն դա չի բացատրում այն իրողությունը, թե հայերն ինչպես կարողացան գոյատևել մինչև այդ՝ գտնվելով մուսուլմանական շրջապատում: Եկեք դիմենք հենց պատմությանը:

Այս դարի սկզբին, երբ օսմանական սահմանադրության ընդունմամբ կասկածի տակ դրվեց թուրքերի ավանդական առավելությունը, նրանք նոր իդենտիֆիկացում (նույնականացում) սկսեցին փնտրել: Երեք այլընտրանք կար: Առաջինը՝ օսմանիզմ, ընդհանուր օսմանյան հայենասիրության որոշում անկախ ուսայից կամ ծագումից: Երկրորդը՝ իսլամ, որը դժվարություններ էր խոստանում ոչ միայն քրիստոնյա ժողովուրդների, այլ քրիստոնյա պետությունների հետ, և բացի այդ, նոր թուրքերի շատ լիդերներ աթեխտական ու պողիտիվիստական հայացքներ ունեին: Երրորդ այլընտրանքը թուրքիզմն էր, դոկտրինա, որը աննկատելիորեն վերափոխվեց պանթուրքիզմի:

Եվ այսպես, ի՞նչ ընտրեցին թուրքերը: Նրանք ընտրեցին թուրքիզմ, և մինչև 1911 թվականը երիտթուրքերը հիմնականում համակված էին թուրքիստական գաղափարներով: Ընդունելով թուրքիզմը, թուրքերը մի կողմ նետեցին իսլամը: Այդ իսկ պատճառով հայերի այն համոզմունքը, թե իրենց բոլոր դժբախտությունների ելակետը Օսմանյան կայսրության մուսուլմանական էնության մեջ է, որոշակիորեն պետք է փոխել: Երիտթուրքերի եռապետները՝ Էնվեր, Թալեմաթ և Զեմալ, հավատացյալներ չեին: Նրանք երբեք մզկիթ չեն գնացել: Նրանք նույնիսկ ծածուկ անհավատներ չեին, ինչպես սովորական Արդուկ Համբիդն էր: Այնուամենայնիվ, շատ հաճախ, երբ կարդում են հայկական եղեննի մասին, տեսնում են, որ ոչ միայն հատուկ ընդգծվում է թուրքերի իսլամական էնությունը, այլ, որ առավել լուրջ է, չի բացահայտվում թուրքիզմի հսկական և սպառնալից բնույթը: «Բյուզանդ թյուրքեր բիր օրդու» (թուրք. «Բյուզոր թուրքերը մի բանակ են»). սա է թուրքիզմի դաժան և սարսափազուու էնությունը: Սա քաղաքած չէ դուրանից: Սա Զիյա Գյուքալիի հղած կարգախոսն է, որն էլ Կամախում, Մեսրենեում և Դեյր էլ Զորում հարյուր հազարավոր հայերի սպառնության հսկական շարժադիրը եղավ: 1988 թվականի փետրվարի սուսագիթյան ջարդերը նույնպես այդ են վկայում: Իսկ շատ հայեր գտնեն, արդյոք, թե ինչ է նշանակում այդ կարգախոսը, և շատե՞ն, արդյոք, կարող են բացատրել դրա նշանակությունը ոչ հայերին: Այդ կարգախոսը

նշանակում էր մահ հայերի համար: «Բյուզանդ թյուրքեր բիր օրդու» էռությունն արտացոլող քանի՝ թուրքական տեսատեր են թարգմանվել անգլերեն կամ ֆրանսերեն: Քանի դեռ որանք չեն թարգմանվել, միշտ բաց տեղ կմնա նրանց համար, ովքեր 1915—16 թվականների իրադրությունների լուրջ ու մտածված բացատրություն են փնտրում: Այսօր ոչ հայերը՝ կոնգրեսականները, խորհրդարանների անդամները, արտաքին գործոց նախարարներ կամ մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեների անդամները, ուզում են հասլանալ: Պարզապես նրանք, ովքեր կարող էին նրանց օգնել հասկանալ, այդ բանը դեռ չեն արել: Որևէ մեկը մամուկով քննել է, արդյոք, «Թյուրքանչիլիք», «Թյուրքյուլյուր» և «Թյուրքյուլյուր» կոնցեպցիաները՝ օգտագործելով այն ժամանակաշրջանի տեքստերը: Որքան գիտեմ՝ ոչ: Հուսանք, որ իննունական թվականների վերջին, երբ հապարակված կլինեն ռասիզմի, պանթուրքիզմի վրա հիմնված դաժան, թիրտ հակահայկական բնույթ ունեցող որոշ տեքստեր, լուրաքանչյուր հետքրքրվող կվարողանա հասու լինել հիմնախնդրի էռպայանը:

Համեմատության համար տեսնենք, թե հայերի մասին ինչպիսի կարգախոս է առավել հայտնի ամբողջ աշխարհում: Դա Հիտլերի հայտարարությունն է՝ արված Լեհաստանի վրա հարձակվելու նախորյակին: «Կերծին հաշվով, ո՞վ է այսօր հիշում հայերի մասին»: Իսկ այդ հայտարարությունը նույնիսկ չի վերաբերում այն իրավիճակին, երբ Վտանգված էր հայ ժողովուրդը: Այն վերաբերվում է բոլորովին այլ հանգամանքների և ուրիշ ժողովրդի: Ես կարող եմ միայն զարմանալ, որ հայերը բուն թարդարձություններից 24 տարի հետո վկայակոչում են այդպիսի հայտարարություն ուրիշ ժողովրդի մասին և ուշադրություն չեն դարձնում իրենց սեփական եղեննի դրդապատճառների վրա: Սա ակներևար այն դեպքն է, որը հոգեբույժներն անվանում են խուափում, կենտրոնացում ուրիշ մարդկանց վիճակի վրա, քանի որ, հնարավոր է, սեփական վիճակի վրա կենտրոնացումը շափազանց ցավագին կամ դժվար է:

Ոչ ոք չի ժխտում, որ հայերի համար դժվար է դիմել այդ բանին: Եղենու թուրլատրող գաղափարախոսություն փնտրել՝ նշանակում է ուշադիր դիսազններ մարդկային չարիքի ամենամուշ ոլորտները, հնարավոր է՝ առավել արգելված ոլորտներ, որոնք տարու են հանդիսանում: Եվ, այդուհետեղ, եթե մենք ուզում ենք ինչ-որ կերպ հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել հայերի հետ 1915 թվականին, այդ ամենը պետք է հետազոտվի, և հետազոտող մտովի պետք է վերապի բոլոր տառապանքները: Ցավոք, առանց մարդկային էնության ամենամուշ կողմերին դիմելու, հնարավոր չեն հասնել հայերի եղենի պատմականորեն ճշմարիտ ըմբռնման:

Եթե այլ հանգամանք, որի վրա պետք է ուշադրություն դարձնել, դա առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի թուրքական առաջնորդների բարձր ինտելեկտն է: Իրենց գաղտնի խորհրդաների ժա-

մանակ կրթված թուրքերը, հասույապես դոկտորները, մահվան և ուսույական սպանվածությունների առավել ընդունակ, հնարամիտ և հեռատես վաճառկանացներ էին: Հայերը շատ հաճախ իրենց ուշադրությունը կենտրոնացնում են գոեհիկ քաղաքացիության դարձելու անձի վրա: Դոկ են ասում են՝ ուշադրություն դարձելու եվրոպական կրթություն տուածած Բեհաեդին Շաքիրի և դրա Նազիմի վրա, և դուք կտեսնեք իշթիհատականների իսկական տիպաթների՝ մարդասպանների: Երբակիրթ ու հանգիստ վարչելակերպի մարդկանց, որոնք պարզապես տարել են հայերի տեղահանման ծրագրման աշխատանքը: Հետազոտեք նրանց աշխատությունները և գործունեությունը: Եվ կարդացեք Զիյա Գյորալիի ստեղծագործությունները: Անա սրանք են իննունական թվականների խնդիրները:

ԱՄՆ-ում և ամերիկյան արտաքին քաղաքականության նավարկույթիով ընթացող եվրոպական երկրներում գոյություն ունի շահերի հավաքանի նման մի քան, որը խոչընդոտում է հայկական տեսակետի հստակ շարադրանքին կամ հայկական հիմնախնդիր իրատեսական արտացոլմանը: Հնարավոր է, որ դրանում իրենց եերդրումն ունեն նաև հայերն իրենք՝ ամենայն արևելյանի հանդեպ իր նախապաշտումներն ունեցող արևմտյան հասարակությանը դուր գալու իրենց զգումով:

Սակայն ժողովուրդների համագործակցությունը և ստերեոտիպների փլուզումը կնպաստեն այնպիսի բարենապատ մթնոլորտի ստեղծմանը, որ պեսզի Հայկական հարցը լսելի դառնա: Մինչ Կովկասում ջշմարտության և կեղծիրի եռվյանը անդրադառնալը, անհրաժեշտ է, որպեսզի լինեն այնպիսի պայմաններ, որոնց դեպքում հայերին կլսեն:

Հայաստանի անցյալը և նրա այսօրվա պահանջները վարկաբեկելու կամպանիան ամրապնդվում է Թուրքիայի կառավարության կողմից դրամի նենգ օգտագործմամբ: Մասնավորապես Արևելյան և աֆրիկական հետազոտությունների ինստիտուտի (SOAS, London University) ժամանակակից Թուրքիայի վերաբերող հետազոտությունների ծրագիրը թուրքական կառավարությունից տարեկան 10 հզ. ֆունտ ստեղնեցի նվիրատվություն է ստացել: Ես կցանկանայի իմանալ, ինչպիսի՞ն է այդ հետազոտությունների անկախության աստիճանը նման նվիրատվությունից հետո, չի՞ ազդի, արդյոք, դա բրդերի և Թուրքիայի այլ ազգային փոքրամասնությունների, ձախ ուժերի և նովնիսկ ութ տիպի ոստիկանական ուժեր (ընդ որում, բոլորն է՝ գինված) ունեցող պետական կարգի կառուցվածքի պրոբլեմների՝ ինստիտուտի ուսումնամիջությունների ազատության վրա: Կարծում եմ, կարելի է համոզված լինել, որ հայերը շրջանցվելու են: Որքան էլ մենք ափսոսայինք բրիտանական ակադեմիական պահությունների և մեթոդների անկան համար, ինչ-որ չափով թուրքական կառավարության ձեռնարկմանը արժանին պետք է մատուցել, որն իր «տարեկան նպաստն» է կարողացել ներդնել այն պահին, երբ համալսարանները և

դրանց հետազոտական ծրագրերը բացվել են արտասահմանյան կառավարությունների օժանդակության առջև՝ բրիտանական ինտենսիվուալ ժամանգության և ստանդարտների աղավաղմանը համարում:

SOAS-ին հատկացվող պաշտոնական թուրքական դուտացիաների լույսի ներքո հետաքրքիր է իմանալ, թե ի՞նչ են գրում թուրքերը հայերի մասին, ի՞նչ են այժմ նրանք հրապարակում: Վերջերս նայեցի «Հայերը պատմության մեջ և Հայկական հարցը» խորագրով Ստամբուլում հրատարակված գիրքը: Հետինակը՝ Էսաթ Ուրաս: Դա Թուրքիայում առաջին ամգամ 1950 թվականին հրատարակված գրքի թարգմանությունն է՝ որոշ լրացուցիչ նյութերով: Այդ գիրքը միաժամանակ և՛ ճշմարիտ չե, և՛ փրուն-ճոռմարան, և՛ չարամիտ-ուսախտական չե:

Դրա բովանդակությունը ցուցադրում է միջնադարյան բանտապահի, բայց ոչ հանրապետությունը անվանվող ժամանակակից պետության քաղաքացու մտածելակերպը: Դրանում հաստատվում է հայոց պատմության, լեզվի, մշակույթի և հասարակության վրա անհիմն ու հայտուն հարձակումներով արտահայտվող դիրքորոշումը: Ժխտվում է ոչ միայն հայերի ծգումը ավելի լավ ճակատագրի, մշակույթի զարգացման և այլն, այլև հենց նրանց էթնիկական ինքնությունը: Աբդուլ Համիդի կոտորածները ժխտվում են, իսկ 1915 թվականի եղենը չի եղել և չեր կարող լինել, եթե դատելու լինենք այդ գրքի բովանդակությունից: Այդ գիրքը հակապես կարելի է բաշիրողովով ձեռնարկ համարել: Այդ գրքում հետինակը փորձում է աշխարհին ապացուցել, թե ինչքան քաղաքակերթ ու արևմտականացած է Թուրքիան, որ այն եվրոպայի մի մասն է՝ եվրոպական ժառանգությամբ: Որ 1990-ականների Թուրքիայի ճակատագրիր դառնում է Եվրոպական ընկերակցության մի մասը: Միակ եվրոպականը, որ առկա է գրքում, դա թերևս ծայրահեղ աջերի այն ուսայականությունն է, որը մի քանի ամիս առաջ խաթարեց Ստրավորգի խորհրդարանի աշխատանքը: Հիրավի տարօրինակ է, որ Թուրքիան իրեն համարում է հանրապետություն և հանդես է բերում այդշաբ չնշին հանրապետական գաղափարները: Նույնիսկ հին օսմանյան ժամանակներում հայերին վերաբերող շատ ավելի ողջամիտ և ժամանակակից հայացքներ էին հրապարակվում:

Բուն Հայաստանում այսօր բանավեճեր են գնում երկրի ապագա կողմնորշման վերաբերյալ: Հայաստանը դեռ Ուսասատանի՝ որպես պանթուրքիզմի դեմ պաշտպանի կարիքն ունի, թե նման դիրքորոշումը վկայում է գաղութներին հասուկ ստրկական հոգեբանության մասին, և որ պանթուրքիզմի հին գաղափարները այլև մեռյալ են, իսկ Հայաստանը շրջապատող երկրներն այժմ գրադարձ են իրենց սեփական խնդիրներով: Այս կապակցությամբ կուգենայի ասել հետևյալը: Եկեք հիշենք հայերի դեմ աղբեջանցների ֆիզիկական կամպանիան՝ Սումգայիթը, Կիրովաբադը, Բաքուն, ամենօրյա սպանությունները Ղարաբաղում: Եկեք նովապես հի-

շենք, որ աղբեջանցիները բացահայտ կոչ արեցին բռնազավթել Զանգեցուքը, և որքան գիտեմ, մի քանի հարձակում գործեցին Զանգեզուքի վրա:

Ֆիզիկական կամպանիան՝ մի կողմից: Այժմ տեսեք, թե ինչ է կատարվում Հայաստանից արևմուտք: Ֆիզիկական կամպանիա չկա, բայց ինտելեկտուալ տեռորիզմի մշտական կամպանիան առկա է, ծայրահեղ ուսմատական հարձակումներ, որոնք փաստորեն հայերի ոչնչացման կոչեր են հանդիսանում: Ահա հենց այդ էլ մարմնավորում է Էսայ Ռուասի գիրքը, և այդ գիրքն էլ իշխանությունները նպատակահարմար գտան հրատարակել 1989 թվականին: Հայերի վրա Բաքվից ֆիզիկական հարձակումների և Անկարայից նրանց վրա ինտելեկտուալ հարձակումների միջև փոխլրացում չկա՝ արդյոք, այստեղ:

Զարմանալի է, որ Հայաստանի ապագային վերաբերող բանավեճերում ոչ ոք, ըստ երևությին, չի ուզում ուսումնասիրել երկու կայսրությունների՝ Ռուսաստանի և օսմանյան Թուրքիայի դիրքորոշումները, որոնք Հայաստանը կիսել են միմյանց միջև գաղութատիրության և հետգաղութատիրության ժամանակներում: Անհրաժեշտ է համեմատել և հակադրել դրանք: Իհարկե, Ռուսաստանը Հայաստանի հանդեպ գործել և գործում է գաղութատիրական ձևով: Իսկ միթե Թուրքիան՝ ոչ:

Բնականաբար Ղարաբաղյան հարցը ծագելու ժամանակվանից սկսած շատ քննադատություն եղավ Հայաստանի հանդեպ Մոսկվայի մոտեցման վերաբերյալ: Եվ իրոք, ինչ-որ մի տարօրինակ և տրամադրություն գտող բան կա նրանում, թե ինչպես է Մոսկվան մոտենում Կովկասի հիմնախճնդիրների լուծմանը՝ ընդ որում և՝ գործողություններում, և՝ լրատվական ձեռնածություններում: Սակայն Մոսկվայի և Հայաստանի միջև գաղափարական կոնֆլիկտ չկա: Մոսկվան չի ծգում Հայաստանի ոչնչացման և չի պնդում, թե Հայաստանը լոկ հնագույն աշխարհագրական հասկացություն է, ինչպես դա անում է Անկարան: Գուցե խորհրդային կոմունիզմը Եթերկայում լավագույն սպեղանին չէ Հայաստանի համար, սակայն պետք է մտածել նաև այն մասին, թե ինչպիսին կարող է լինել այլընտրանքը: Ըստ իս, չի կարելի մոռանալ Հյուսիսային Կիպրոսի ճակատագրի մասին: Ոչ ոք առանձնապես ոչինչ չարեց այստեղից թուրքական գորքերը դուրս բերելու համար: Եթե Թուրքիան շարժմի Հայաստանի վրա, երբ ուսուներն ի վերջ հոգնեն հայերի հայրությունների առարկա լինելուց, ապա աշխարհը, իմ կարծիքով, անտարբեր կմնա: Մոսկվայի հետ Հայաստանի դժվարությունները պատահական են, այն դեպքում, երբ Թուրքիայի և թուրքիզմի հետ բախումը Եթերկա փոկում խորը և գաղափարական է:

Ինչպիսի փոփոխություններ էլ տեղի ունենան իննուունական թվականներին, Թուրքիայում հայերի հանդեպ վերաբերմունքի մեջ առանձնակի փոփոխություններ են չեմ կանխատեսում: Ըստ երևությին, կպահպանվի որևէ ինտելեկտուալ հրապարակայնության բացակայությունը: Դա նշա-

նակում է, որ կմնա սրբագրվող պատմությունը, օսմանական (թուրքական) պատմության հողի փաստերի ժխտումը, կմնա պետության կողմից խրախուսվող նյութերի հրապարակում՝ լուրջ ակադեմիական հետազոտությունների փոխարեն: Այնուամենայնիվ, որոշ թուրք վտարանդի լուազրողներ կասկածի տակ են դնում թուրքական արժեքների մեջ շեշտերի ճշ-տությունը և, հատկապես, վիճարկում են պետության ու բանակի նվաճումների արժեքը՝ ի վեհական մարդու իրավունքների, մարդկային ինքնատիպության և համաշխարհային մշակույթի: Լավ է, որ առկա է հարցերի նման դրվագները, և, գուցե, հայերին հարկավոր է արձագանքել և օժանդակել դրան:

Թուրքիայի իշխող պաշտոնական հակահայկական գաղափարախոսությանն ընդդիմանալու հնարավոր եղանակներից մեկն է՝ ցուց տալ, որ դա հակառակ է քաղաքական դաշինք կնքելու, Եվրոպական ընկերակցության մեջ մտնելու Թուրքիայի հովաներին: Եթե հաջողվի ցուց տալ, որ մշակութային և քաղաքական ուսութեսիաները այն մասշտաբով, որ կիրառվում են Թուրքիայում, անընդունելի են Եվրոպայի համար, դա կարող է ստիպել խորհելու: Գուցե, նպատակահարմար է հիշեցնել, որ բարբարոսաբար ոչնչացնելով հայկական մեծագույն Եկեղեցները, Թուրքիան ոչնչացնում է այնպիսի հրաշալի ճարտարապետական հուշարձաններ, որոնք կարևոր նշանակություն ունեն հենց այն ընկերակցության ճարտարապետության պատմության համար, որին ինքն ուզում է միանալ: Իհարկե, չի կարելի համոզված լինել, որ շոշափելի արդյունքներ կլինեն, սակայն արժե փորձել:

Աղբեջանի և Թուրքիայի կողմից սպառնալիքների և ազգամիջան հարաբերությունների ասպարեզում Մոսկվայի քաղաքականության մեջ որոշակիության բացակայության պայմաններում Հայաստանը դժվար ժամանակներ է ապրում: Չի կարող պատահել, որ Կովկասի և Հյուսիս-Արևմտյան Ասիայի քաղաքական քարտեզի վրա միանգամայն նոր դաշինքներ հայտնվեն: Հնարավոր է, չնայած նվազ հավանական, Ռուսաստանի իշխանության թուրքացում կամ դայարեցում տարածքաշրջանում: Պր-Ծ Գործաշուկի հայտարարությունները մերձքալյան հանրապետությունների, հատկապես Լիտվայի վերաբերյալ, մատնանշում են ԽՍՀՄ-ի գոյություն ունեցող սահմանների գերակայությունը: Կարելի է ենթադրել, որ նույնը ճիշտ է և Անդրկովկասի համար: Բայց ցանկացած դեպքում հայերին անհրաժեշտ է նախատեսել նաև այսպիսի հնարավորություն: Խորհրդային իշխանության թուրքացում հատկապես, եթե ուժեղանա Վրաստանի ճնշում անցատման պահանջով: Ինչպիսի՞ք են այդ դեպքում Հայաստանի հեռանկարները: Դեպի ծով չունեցող Երկիրը Կովկասում ամենախին նույնը չէ, ինչ այդպիսի Երկիրը Եվրոպայում: Աղբեջանի կամ Թուրքիայի հետ որևէ դաշինքի մասին խոսք անգամ լինել չի կարող, քանի որ այդ

երկրները կայուն հակահայկական գաղափարախոսություն են դավանում: Մնում է նոր առանցքի՝ Վրաստան, Հայաստան, Իրան երևան գալու հնարավորությունը:

Ես գտնում եմ, քաղաքական առումով նման դաշինքը հնարավոր է, բանի որ Իրանը երեք գաղափարական առարկություններ չի ունեցել հայերի գոյության դեմ, ինչպես դա առկա է Թուրքիայում՝ ազգային փոքրամասնությունները ժխտող իր մշտական գաղափարախոսությամբ:

Այսօր Իրանի Խոլամական Հանրապետությունը թեպետև դժվարություններ է ստեղծում հայերի համար, բայց սկզբունքորեն չի հակառակ-վում նրանց: Եթե ազգերի այդպիսի մերձեցումը տեղի ունենա ապա նըման դաշինքը հաջողակ կլինի պետությունների աշխարհագրական մերձության պատճառով:

Մեկ այլ հանգամանք, որ ըստ իս, հայերին անհրաժեշտ է իմանալ, դա այն է, որ սառը պատերազմի ակնհայտ ավարտի հետևանքով իրադրությունը Թուրքիայում փոխվել է: Թուրքիան մշտապես օգտվել է ուզմական, դիվանագիտական և տնտեսական օժանդակությունից՝ Ռուսաստանից (կայսերական կամ խորհրդային) սպառնացող վտանգին համապատասխան: Այդ պատճառով, եթե պարզվի, որ Սոսկայից սպասվող սպառնալիքը իսկապես կնվազի (իսկ ներկա պահին իսկապես որ դա այդպես էլ կա), ապա կվերանա նաև Թուրքիային ըստ ամենայնի օգնություն ցույց տալու գործոնը: Արդյունքում ԱԱՆ-ի արտաքին գործոց նախարարությունը կարող է ինքնուրուկություն ցուցաբերել Թուրքիայի շահերը շոշափող հարցերի հանդեպ՝ չնայած, որքան ես կարող եմ դատել, դա տեղի կունենա ոչ այնքան շուտ: Ես, այնուհանդերձ, թախանձագին խորհրդությունը եմ տալիս օդային ամրոցներ չկառուցել և պատրանքների մեջ չընկնել (ինչպես հակված են անել ոմանք), թե փոփոխությունների առաջն իսկ քամուց Սլրի ռաշնագիրը լինվին ուժի մեջ կմտնի:

Հայերի հեռանկարները իննունական թվականներին խիստ կտարբերվեն նախկինում եղածներից: Ես միայն հույսով եմ, որ սփյուռքահայերը բավականաշափ տեղյակ են այսօրվա իրողություններին և առկա հնարավորություններին, որպեսզի կարողանան ստեղծված իրադրությունը օգտագործել հօգուտ իրենց շահերի: Հանգամանքներն այսօր պահանջում են մտքի մեծ ճկունություն, գաղափարախոսության և պատմության բնագավառներում մեծ գիտելիքներ, Արևմուտքի տրամադրությունների և նախապաշարումների իմացություն, ինչպես նաև ճիշտ հետևություններ անելու կարողություն: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ Հայաստանում այսօր հնարավոր է իրադարձությունների ցանկացած զարգացում: Հայերը համապատասխան ուզմակարություն պետք է ունենան ցանկացած հնարավորության համար, այլապես նրանք հանդինում են երկրորդ ցեղասպանության գործ դառնալ: Նացած ու ուկրացած մտածողությունը, սփյուռ-

քահայերի վերջին ավելի քան քսան տարիներին տարանջատած հին բախումները, իհարկե, արդեն օգուտ չեն քերում: Լավ է, որ եկեղեցու անհամաձայնությունը, ըստ Էւլյան, հայութարության համայնքներում փոփոխություններն ընթանում են դիմադրության հայութարությունով, փոխանակ այս բանի, որ հնարավորության ի հայտ գալու դեպքում մերձեցման պատրաստակամություն լինի: Եթե սփյուռքահայերն օգնելու են հայերների իրենց ազգակիցներին, ապա, ըստ իս, հենց սփյուռքում պետք է լինի առավել լուրջ և մեծ փոխըմբռնում, ինչպես նաև միջազգային քաղաքականության քաջատեղյակություն:

Հայկական սփյուռքի՝ Սրեփանակերտում և Երևանում իրենց հայրենակիցների պայքարին օգնություն ցույց տալու հնարավորությունները շատ բանով սահմանափակ են: Բայց սփյուռքը կարող է օժանդակել այդ պայքարին՝ պրոպագանդելով այն, ուշադրություն սկսելով նրա վրա, հասնելով այդ պայքարի արդարացիության ճանաչմանը, ինչպես պետական մակարդակով, նույնպես և մամուլում:

Սփյուռքի մշտական օժանդակությունը խիստ կարևոր է հայրենակիցների գործը հայրենիքում առաջ մղելու, Անդրկովկասում արդարացի կարգավորման հասնելու համար՝ անարդարության տասնամյակներից և Ղարաբաղի բնակչության բնական իրավունքները ունեահարելուց հետո: Եկեք նրանց հաջողություն ցանկանանք իրենց համար վտանգավոր ժամանակներում: Եկեք նմանապես հաստատակամորեն որոշենք անել այն, ինչ իրապես հնարավոր է անել Արևմուտքում, որպեսզի օգնենք Օրանց իրենց պայքարում հանուն արդարության և պագայի անվտանգության:

Д. М. Ланг и К. Дж. Уокер

АРМЯНЕ

Перевод с английского Дж. Торосяна

1992

ՀԱՅԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրության կողմից	3
Ներածություն	7
Առաջին մաս. Հայ ժողովուրդը	11
Հայաստանը	11
Ովքե՞ր են հայերը	13
Հայաստանը մեծ տերություն	15
Հայաստանի բաժնումը. Հայաստանի տրոհումը մասերի	15
Մեծ արտաքայլը	16
Երկրորդ մաս. Կոտորածերի դարաշրջանը	18
Տասնիներորդ դար. Հայերը օսմանյան թուրքիայում	18
Հայաստանը և մեծ տերությունները	20
Հայկական հեղափոխական շարժումը	22
Սովորան Արդու Համիդը և 1894—96-ի կոտորածերը	23
Հայերը ցարական Ռուսաստանում	24
Մի խաբեռլուն. Հայաստանը և երիտրությական հեղաշրջումը	25
Առաջին համաշխարհային պատերազմը և Հայկական հարգի «վերջնական լուծումը»	27
Երրորդ մաս. Ընթացիկ վիճակը. Ժողովրդի վերածումնը	30
Անկախ Հայաստան, 1918—1920	30
Խորհրդային Հայաստան՝ ազգային տուն	33
Որքան հայ կա	38
Հանրապետական թուրքիան. կասկածելի ժառանգործը	40
Հայ առաքելական (Լուսավորչական) եկեղեցու դերը	46
Մի քանի հայ առաջատար համայնքներն այսօր. Սիլուռը	48
Եզրակացություն	56
Հայելիքած 1. Սահմանափակումներ թուրքիայի հայ համայնքների համար	58
Հայելիքած 2. Հայկական հարցի նոր վերարձարծումը	62
Մատենագիտություն	64
ՀԱՅԱՍՏԱՆ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ. ՀԵՇԱՆԿԱՐՆԵՐ ԵՎ ԿՏԱՆԳՆԵՐ	69

Հայկական հանրագիտարանի  
գլխավոր խմբագրություն  
Հասցեն. 375001, Երևան-1,  
Թումանյան փ., 17

Գեղ. խմբագիր՝ Գ. Կ. Խաչատրյան  
Տեխ. խմբագիր՝ Գ. Ա. Ակոբյանին  
Սրբագրիչներ՝ Հ. Ա. Գևառպայան, Գ. Լ. Դրացյան և  
Է. Ա. Խաճիկյան

Հանձնված է շարվածքի՝ 21. 01. 1992 թ.: Ստորագրված է տպագրության՝ 2. 06. 1992 թ.:  
Թուղթ՝ օֆսեթ, 60×90 1/16: Տպագրական 5 մամուլ, 4,49 հրատ. մամուլ: Տառատեսակ՝  
«Եղեգնագիր»:

Տպագրանակ՝ 15000: Բարձր տպագրություն: Պատվեր՝ 382:  
Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 375001, Երևան-1,  
Թումանյան փ., 17:

ՀՀ մամուլ վարչության № 3 տպարան, Երևան, Մելիք-Ադամյան, 1:  
Главная редакция Армянской энциклопедии,  
375001, Ереван-1, ул. Туманяна, 17.  
Типография № 3 Управления печати Правительства Республики Армения,  
Ереван, ул. Мелик-Адамяна, 1.

ԼԱՆԳ (Lang) Դեյվիդ Մարշալ (1924—1991), անգլիացի կովկասագետ, հայագետ: Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր (1968-ից):

1944—46-ին եղել է անգլիական փոխհյուպատոս Թավրիզում, որը առնչվել է տեղի հայերի հետ: 1966, 1968 և 1974 թվականներին այցելել է Հայաստան: Նրա «Հայաստան. քաղաքակրթության օրրան» (1970), «Լեռների ժողովուրդներ. հինավուրց Արարատն ու Կովկասը», (1971, համահեղինակ Չարլզ Բըրնի), «Հայերը. մի աքսորյալ ժողովուրդ» (1981) աշխատությունները նվիրված են հայ ժողովրդի պատմությանը, ավանդույթներին ու մշակույթին, Հայկական հարցի վերլուծությանը ու 1915—23-ի ցեղասպանությանը:

ՈՒՈՅՔ [Walker] Ջրիստոֆեր Ջոզեֆ (ծն 1942), անգլիացի պատմաբան:

Զրադվում է հայ ժողովրդի նոր և նորագույն պատմության ուսումնասիրությամբ: 1971-ի Շերչիլի հիմնադրամից նպաստ է ստացել և այցելել Արևմտյան Հայաստան (Կարս, ԱՇԻ, Վան, Դիարբեքիր, Ուրֆա, Այնքան և այլն) և Հայաստան: 1980-ից լույս տեսավ նրա «Հայաստան. մի ժողովրդի վերապրումը» գիրքը, որն ունեցավ հինգ հրատարակություն (վերջինը՝ 1990-ից) և նվիրված է հայ ժողովրդի վերլուծական պատմությանը, մասնավորապես, Հայկական հարցում նվիրական տերությունների քաղաքականությանը, Սեծեղներին, Հայաստանի Հանրապետության (1918—20) ստեղծմանը ու կործանմանը, հայ սիյոստքին: Գրքի վերջին հրատարակությունում, որը լույս տեսավ հնույնակի Հայաստան կատարած նոր այցելությունից (1989) հետո, տեղ են գտել նաև Լեռնային Ղարաբաղի պատմությունն ու արցախյան հարցի ներկա վիճակը: Անգլիական գիտական մամուլում հաճախ հանդիսանում է գալիս Հայաստանին և հայկական խնդիրներին նվիրված հորվածներով: 1989-ի նոյեմբերին Օքսֆորդի համալսարանում հանդիսանել է «Հայաստանը 90-ական թվականներին. հեռանկարներ և գտանձներ» գեկուցմամբ, որի ամփոփումը գտնելված է ներկա գրքույկում:

